

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	2
Մակրոտնտեսական ցուցանիշներ	3
Ֆինանսական միջոցներ	4
Աուդիտ	11
Սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրեր	11
Արդյունաբերություն	17
Քաղաքաշինություն	22
Տրանսպորտ, ճանապարհաշինություն գործունեության բնագավառ	24
Ջրամատակարարում	26
Բնակարանային և ենթակառուցվածքների	26
Գազամատակարարում	28
Էներգամատակարարում, Կապ	28
Գյուղատնտեսություն	29
Բնապահպանություն	29
Հողաշինություն և հողօգտագործում	32
Առևտուր և սպասարկում	35
Տարածքային կառավարում	37
Տեղական ինքնակառավարում	40
Կրթություն	38
Մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր	45
Առողջապահություն	54
Սոցիալական ապահովություն	57
Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանություն	65
Արտաքին կապեր, միջազգային կազմակերպություններ	77
Փոխհարաբերություններ մարզպետարանի և պետական մարմինների միջև	80
Տեղեկատվություն և հասարակայնության հետ կապեր	83
Քաղաքաշինություն և արտակարգ իրավիճակներ	84
Զորակոչ և զորհավաքային նախապատրաստություն	90
Օրինականության պահպանում	91
Աշխատանք կադրերի հետ և աշխատանքային կարգապահություն	92
Մարզպետի կողմից ընդունված որոշումները և կարգադրությունները	93
Մարզպետարան մուտք գործած գրությունների ընթացքը	95

Ն Ա Խ Ա Ր Ա Ն

Ընդհանուր տեղեկություններ	
Աշխարհագրական դիրքը՝	Հայաստանի Հանրապետության հյուսիս
Բնակավայրերը՝	ծովի մակերևույթից 520-ից 1800մ բարձրության վրա
Պետական սահմանը՝	Վրաստանի Հանրապետության հետ՝ 110 կմ
Տարածությունը՝	3799 քառ. կմ
Բնակչության թիվը՝	223.2 հազար մարդ, այդ թվում՝
➤ քաղաքային	131,9 հազար մարդ, կամ 59,1 %,
➤ գյուղական	91.3 հազար մարդ, կամ 40.9 %:

Մարզի համայնքների թիվը՝	107, որից՝
➤ քաղաքային	8,
➤ գյուղական	99:
➤ Մարզկենտրոնը	ք. Վանաձոր
➤ Կառավարման ձևը	տարածքային կառավարում

Ազգային կազմը	
➤ հայեր	97.0 %,
➤ ռուսներ	1.5 %,
➤ հույներ	1.0 %,
➤ այլ ազգություններ	0.5 %:

Սահմանամերձ բնակավայրերը՝ 5 (Զիլիզա, Պաղաղբյուր, Ապավեն, Արծնի, Ձորամուտ)

2016 թվականի ընթացքում մարզպետարանի գործունեության համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի պահանջների, Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրի գերակայությունների և 2014թ. հոկտեմբերի 6-ի ՀՀ կառավարության արտագնա նիստի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Լոռու մարզի 2014-2017թ.թ. սոցիալ – տնտեսական զարգացման ծրագրի» հիմնարար դրույթների ու զարգացման գերակա ուղղությունների համադրումն ու հիմնական դրույթների հետևողական իրականացումը:

Հաշվետու ժամանակաշրջանում Լոռու մարզպետարանի աշխատակազմի 2016թ. աշխատանքային ծրագրի համաձայն մարզի տարածքային կառավարման իրականացման հիմնական նպատակային դրույթներ են եղել՝

- Պետական և տեղական բյուջեների միջոցների հավաքագրմանն ուղղված միջոցառումների արդյունավետության բարձրացումը:
- Կրթական համակարգի բարեփոխումների ծրագրի իրականացումը և հանրակրթական դպրոցների ջեռուցման համակարգերի գազաֆիկացումը:
- Արտադրական հզորությունների վերագործարկումը և նորերի շահագործումը՝ առաջնահերթությունը տալով լեռնամետալուրգիային, հանքարդյունաբերությանը և սննդի արդյունաբերություններին:
- Փոքր և միջին ձեռներեցության զարգացման խթանում և աջակցումը:
- Տրանսպորտային փոխադրումների կանոնակարգումը և ընդլայնումը:
- Կապի նոր ծառայությունների բացմանը աջակցումը և սպասարկման որակի բարելավման խթանումը:
- Մասնավոր գյուղացիական տնտեսություններին վարկերի հատկացման աջակցումը:
- Բնական աղետների հետևանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների կազմակերպումը:
- Առողջապահության բնագավառի աշխատանքների բարելավումը:

- ՀՀ կառավարության աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի իրագործմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը:
- Նոր աշխատատեղերի ստեղծման միջոցով աղքատության մակարդակի իջեցումը:
- «Քաղաքացիական ծառայության մասին ՀՀ օրենքով նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Աջակցություն ցուցաբերել թիվ 29, 30, 31, 32 ԸԸՀ-երին և տեղամասային ընտրական հանձնաժողովներին՝ մարզի համայնքների ՏԻՄ-երի ընտրությունների նախապատրաստման և անցկացման կազմակերպման աշխատանքներում:
- Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել են 139 մրցույթներ, որից կայացել են 75-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 96 քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են 75-ը:
- Մարզի համայնքապետարանների աշխատակազմերի 80 համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների համար կազմակերպվել են վերապատրաստումներ:

**2016թ. ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԱԿՐՈՏՆԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ**

(մլն. դրամ)

	2016թ. /փաստացի/	Աճը 2015թ. նկատմամբ, %	Տեսակարար կշիռը հանրապետական ծավալում, %
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	131000.9	109.4	9.2
Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը*	68100.0	92.9	7.5
Շինարարության ծավալը	16774.6	64.3	4.2
Մանրածախ առևտրի շրջանառությունը	39756.6	79.4	3.2
Ծառայությունների ծավալը	15770.6	89.0	1.2
Ընդամենը մարզում	271402.7	94.2	5.2
Էլեկտրաէներգիայի արտադրությունը (մլն ԿՎտ/ժ)	211.3	101.9	9.0
Միջին ամսական անվանական աշխատավարձը (դրամ)	147280.0	101.4	-
Արտաքին ապրանքաշրջանառությունը (մլն դոլար), այդ թվում՝	270530.1	114.4	5.4
ա/ արտահանում	195614.7	119.0	11.0
բ/ ներմուծում	74915.4	104.0	2.3

2016թ. մարզի տնտեսության հիմնական հատվածների համախառն արտադրանքը (ծավալը) կազմել է 271.4 միլիարդ դրամ (հանրապետականի 5.2%-ը) կամ աճը 2015թ. նկատմամբ կազմել է 94.2%:

Համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ) 2015թ. մարզում կազմել է 237.0 մլրդ դրամ (հանրապետականը՝ 5058.2 մլրդ դրամ), մարզի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ն կազմել է 1041807 դրամ (հանրապետականը՝ 1661523 դրամ) կամ հանրապետականին զիջում է 1.6 անգամ: 2015թ. Լոռու մարզի ՀՆԱ-ի տեսակարար կշիռը հանրապետական ընդհանուր ցուցանիշում կազմել է 5.0%: ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով մարզում ազգային միջին տոկոսի նկատմամբ կազմել է 63%, 2009թ. 42%-ի դիմաց:

Մեկ շնչին ընկնող տնտեսական ցուցանիշները ՀՀ-ում և Լոռու մարզում, 2016թ.
(մշտական բնակչության թիվը՝ ՀՀ – 2993.9 հազ. մարդ, Լոռի – 223.2 հազ. մարդ)

	Չափի միավոր	ՀՀ	Լոռի	Լոռի ±	Լոռի %
Արդյունաբերական արտադրանքի ծավալը	դրամ	477318.5	586921.6	+109603.1	123.0
Գյուղատնտեսական համախառն արտադրանքի ծավալը	դրամ	303116.3	305107.5	+1991.2	100.6
Շինարարության ծավալը	դրամ	132856.6	75155.0	-57701.6	56.6
Մանրածախ առևտրի շրջանառություն	դրամ	415365.4	178121.0	-237244.4	42.9
Ծառայությունների ծավալ	դրամ	422592.9	70656.8	-351936.1	16.7
Էլեկտրաէներգիայի արտադրություն	ԿՎտ/ժ	2443.4	946.7	-1496.7	38.7
Արտաքին ապրանքաշրջանառություն	դոլար	1672.0	1212.0	-460.0	72.5
ա/ Արտահանում	դոլար	593.1	876.4	+283.3	147.8
բ/ Ներմուծում	դոլար	1078.9	335.6	-743.3	31.1

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ
2016Թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ
ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

Մարզի համայնքների բյուջեներով 2016թ կտրվածքով նախատեսված մուտքերը ապահովվել են 97.4%-ով կամ նախատեսված 7144 մլն. դրամ մուտքերի դիմաց հավաքագրվել է 6961.1 մլն. դրամ, որից վարչական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները փաստացի կազմել են 6236.6 մլն. դրամ, այդ թվում սեփական եկամուտները՝ 1667.8 մլն. դրամ:

(հազար դրամ)

h/h	Եկամուտների անվանումը	2015թ. Բյուջե			2016թ. Բյուջե			2016թ-ի աճը 2015թ-ի նկատ.	2016թ-2015թ-ի փաստ. նկատ. (%)
		պլան	փաստ.	կատ %	պլան	փաստ.	կատ %		
1	Հողի հարկ	362828.6	335963.3	92.6	354326.1	295319.0	83.3	-40644.3	87.9
2	Գույքահարկ	629179.4	664149.6	105.6	653600.7	701677.6	107.4	37527.9	105.7
3	Պետական տուրք	46770.0	42522.9	90.9	45950.0	41553.7	90.4	-969.2	97.7
4	Տեղական տուրք	105166.3	108460.0	103.1	107918.9	107263.2	99.4	-1196.8	98.9
5	Գույքի վարձ. վճար	222044.6	229694.5	103.4	232033.4	213498.5	92.0	-16196.0	92.9
6	Այլ հարկային եկամուտներ								
7	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	8278.8	5596.8	67.6	7075.0	4502.5	63.6	-1094.3	80.4
8	Տեղական վճարներ	243460.1	220279.6	90.5	296226.0	254172.0	85.8	33892.3	115.4

9	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	2586.0	2966.1	114.7	3504.5	2918.9	83.3	-47.1	98.4
10	Մուտքեր տույժերից, տուգանքներից	4800.0	4187.8	87.2	3960.0	2347.4	59.3	-1840.4	56.1
11	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ		1500.0		1500.0	300.0	20.0	-1200.0	20.0
12	Այլ եկամուտներ	40417.4	47769.4	118.2	41101.0	44500.9	108.3	-3268.5	93.2
13	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	4293507.1	4286398.6	99.8	4537482.6	4441760.1	97.9	155361.5	103.6
14	Պետ.բյուջ. պատվիր.լիազ.կատ. միջոց	80606.0	80586.5	100.0	80969.5	80864.7	99.9	278.2	100.3
15	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	137853.9	136220.3	98.8	52555.2	54055.6	102.9	-82164.7	39.7
ԴԱՀ-ով տարված գումարներ բյուջեի վարչական մասից			-1609.0			-8171.3		-6562.3	507.9
Ընդամենը վարչ. բյուջեի եկամուտներ		6177498.2	6164686.4	99.8	6418202.9	6236562.7	97.2	71876.4	101.2
16	Տարեսկզբի ազատ մնացորդ	28308.9	28308.9	100.0	26050.4	26050.4	100.0	-2258.5	92.0
Ընդամենը վարչ. բյուջեի մուտքեր		6205807.1	6192995.3	99.8	6444253.3	6262613.1	97.2	69617.9	101.1
1	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից				7051.6	7051.6	100.0	7051.6	#DIV/0!
2	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	222867.5	233231.6	104.7	59212.0	57966.9	97.9	175264.7	24.9
3	Հատկացումներ պահուստ. ֆոնդից	119288.0	83241.4	69.8	77503.9	43050.5	55.5	-40191.0	51.7
4	Այլ մուտքեր	18131.0	17600.7	97.1	70.0	70.0	100.0	-17530.7	0.4
ԴԱՀ-ով տարված գումարներ բյուջեի ֆոնդային մասից									
	Ֆոնդային բյուջեի եկամուտներ	360286.5	334073.7	92.7	143837.5	108138.9	75.2	225934.8	32.4
4	Տարեսկզբի ազատ մնացորդ	550468.1	550468.1	100.0	643268.9	643268.9	100.0	92800.8	116.9
Ֆոնդային բյուջեի մուտքեր		910754.6	884541.8	97.1	787106.4	751407.8	95.5	133134.0	84.9

Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ	1665531.2	1661590.0	99.8	1745695.6	1667753.6	95.5	6163.6	100.4
Ընդամենը բյուջեի եկամուտներ	6418496.7	6415518.7	100.0	6484536.5	6301651.2	97.2	113867.5	98.2
Ընդամենը բյուջեի մուտքեր	6997273.7	6994295.7	100.0	7153855.8	6970970.5	97.4	-23325.2	99.7


Վարչական բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 97.2%-ով՝ նախորդ տարվա 99.8%-ի դիմաց: Իսկ Ֆոնդային բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 75.2%-ով՝ նախորդ տարվա 92.7%-ի դիմաց:

Համայնքների սեփական եկամուտները 2016թ. կտրվածքով կազմել է 1667.8 մլն դրամ, 2015թ. կտրվածքով կազմել է 1661.6 մլն դրամի դիմաց կամ եկամուտների ինդեքսի աճը 2015թ-ի նկատմամբ կազմել է 100.4%, բացարձակ աճը 2015թ.-ի նկատմամբ՝ 6.2 մլն. դրամ:

Պետք է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների աճ են գրանցել Ստեփանավանի տարածաշրջանի համայնքներում՝ 103.4%, Գուգարքի տարածաշրջանի համայնքներում՝ 101.9%, իսկ նվազում՝ Տաշիրի տարածաշրջանի համայնքներում՝ 96.7%, Սպիտակի տարածաշրջանի համայնքներում՝ 97.7%, Թումանյանի տարածաշրջանի համայնքներում՝ 98.8:

Եթե դիտարկենք սեփական եկամուտների հավաքագրումը ըստ տարածաշրջանների՝ ապա կտեսնենք, որ եկամուտների գերակշիռ մասը ապահովում է Գուգարքի տարածաշրջանը 46.5%, ապա Թումանյանի տարածաշրջանը 19.2%, Սպիտակի տարածաշրջանը՝ 12.9%, Ստեփանավանի տարածաշրջանը՝ 11.7%, Տաշիրի տարածաշրջանը՝ 9.7%:

2016թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ըստ տարածաշրջանների




2016թ.ին նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրումը նվազել է մարզի 57 համայնքներում (համայնքների 53.5%-ը, այդ թվում՝ Թումանյանում և Տաշիրում՝ 13-ական համայնք, Սպիտակում՝ 12 համայնք, Ստեփանավանում՝ 11 համայնք, Գուգարքում՝ 8 համայնք):

Սեփական եկամուտների գծով 2016թ. համար նախատեսվել են 1745.6մլն. դրամ, փաստացի կատարումը կազմել է 1667.8մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 95.5%, 2017թ. համար նախատեսվել է 1843.2մլն. դրամ, կամ աճը 2016թ. պլանի նկատմամբ նախատեսվել է 105.6%, փաստացիի նկատմամբ 110.5%: Մարզի 1 բնակչի հաշվով սեփական եկամուտների գծով ցուցանիշը 2016թ. համար կազմում է 5720 դրամ, Վանաձորում այն 5566

դրամ է, ամենամեծ ցուցանիշը՝ (մինչև 300 բնակիչ ունեցող) Մեղվահովիտ համայնքում է 2016թ. 31590 դրամ, իսկ ամենափոքր ցուցանիշը Աքորի համայնքում է 2016թ. 1986 դրամ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2016թ.-ին սեփական եկամուտները մինչև 60% կատարել էին 3 համայնքներ, 2015թ.-ին 1 համայնք, նույն ժամանակաշրջանում 60-80% կատարում են ապահովել համապատասխանաբար 25 և 7 համայնքներ, 80-100% համապատասխանաբար 43 և 55 համայնքներ, 100%-ից ավել՝ 36 և 50 համայնքներ, այսինքն մինչև 80% սեփական եկամուտներ ունեցող համայնքների թիվը աճել է 18-ով, իսկ 80-100%-ից ավել նվազել՝ 12-ով, 100%-ից ավել նվազել՝ 14-ով: Առանձնապես մտահոգիչ է այն փաստը, որ ըստ վերջին տարիների վերլուծությունների, ցածր կատարողական ապահովող համայնքները հիմնականում անփոփոխ են մնում: Ցածր հավաքագրման պատճառաբանություններում կան բազմաթիվ սյուբեկտիվ գործոններ, որոնցից որպես հիմնականը կարելի է համարել համայնքի ղեկավարի, աշխատակազմի և ավագանու շատ պասիվ և անհետևողական աշխատանքը սեփական եկամուտների հավաքագրման գործում:

2016թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը



2016 թվականին մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների ընդհանուր ծավալում հողի հարկի փաստացի տեսակարար կշիռը կազմել է 17.7%, գույքահարկինը՝ 42.1%, գույքի վարձակալության վճարները (այդ թվում պահուստային հողերի վարձավճարներ) 12.8%, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 20.2%, 40.0% և 13.8%-ի դիմաց:

2016թ. հողի հարկի 354.3 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է ընդամենը 295.3 մլն դրամ, կամ 83.3%, (2015թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 87.9%) որը նախորդ տարվա փաստացի մուտքերից պակաս է 40.6 մլն. դրամով:


Մարզի 1 բնակչի հաշվով հողի հարկի հավաքագրման ցուցանիշը 2016թ. համար կազմում է 1161 դրամ, Վանաձորում այն 310 դրամ է, ամենամեծ ցուցանիշը՝ (մինչև 300 բնակիչ ունեցող) Մեղվահովիտ համայնքում է 13368 դրամ, իսկ ամենափոքր ցուցանիշը Քարկոփ համայնքում է 9 դրամ:

Հողի հարկի հավաքագրումը հատկապես վատ է Տաշիրի տարածաշրջանում՝ 77.8%, 70%-ից ցածր մուտքագրում ունեն Թումանյանի տարածաշրջանում 7 համայնք, Տաշիրի տարածաշրջանում՝ 6, Ստեփանավանի տարածաշրջաններում՝ 5, Գուգարքի տարածաշրջանում՝ 3 և Սպիտակի տարածաշրջանում 2:

Նույն ժամանակահատվածում հողի հարկի հավաքագրումը նախատեսվածի 80%-ը գերազանցում է 70 համայնքներում, որից 100%-ը 39 համայնքներում:

Հողի հարկի հավաքագրումը 2015թ. համեմատությամբ նվազել է 76 համայնքներում, կամ համայնքների 71.0%, այդ թվում՝ Թումանյանի տարածաշրջանում՝ 19, Գուգարքի և Տաշիրի տարածաշրջաններում՝ 15-ական, Սպիտակի տարածաշրջանում՝ 16, Ստեփանավանի տարածաշրջանում՝ 11 համայնքներ:

Վերջին տարիների ընթացքում հողի հարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



Գույքահարկի գծով 2016թ. համար նախատեսվել է 653.6 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 701.7 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 107.4%, (2015թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 105.7%) նախորդ տարվանից ավելի է հավաքագրված 37.5 մլն. դրամ:


Մարզի 1 բնակչի հաշվով գույքահարկի հավաքագրման ցուցանիշը 2016թ. համար կազմում է 2142 դրամ, Վանաձորում այն 2475 դրամ է, ամենամեծ ցուցանիշը՝ Թեղուտ համայնքում է 7401 դրամ, իսկ ամենափոքր ցուցանիշը Յաղոսի համայնքում է 219 դրամ, պետք է նշել, որ քաղաքային համայնքներում ցուցանիշը հիմնականում մոտ է միջին մարզային ցուցանիշին, իսկ Թեղուտ համայնքում բարձր ցուցանիշը պայմանավորված է Թեղուտ ՓԲԸ-ին պատկանող գույքի արժեքով:

Գույքահարկի հավաքագրման գործընթացը լավ է ընթացել մարզի կտրվածքով կազմելով՝ 107.4%, Գուգարքի տարածաշրջանում՝ 110.1%, Սպիտակի տարածաշրջանում՝ 109.2%, Թումանյանի տարածաշրջանում՝ 106.0% , Տաշիրի տարածաշրջանում՝ 105.4% և Ստեփանավանի տարածաշրջանում՝ 94.3%:

Գույքահարկի գանձման բարձր մակարդակ է գրանցվել (ավելի քան 80%) մարզի 87 համայնքներում, 100%-ի սահմանագիծը հատել են 49 համայնքներ:

Նախորդ տարվա համեմատությամբ գույքահարկի ծավալները ըստ տարածաշրջանների աճել են Թումանյանում՝ 120.9%, Տաշիրում՝ 108.7%, Սպիտակում՝ 106.1%, Ստեփանավանում՝ 105.6%, Գուգարքում՝ 101.5%:

Վերջին տարիների ընթացքում գույքահարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք:



2016թ. ընթացքում համայնքների հողի և գույքի վարձակալության վճարների 232.0 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել 213.5 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 92.0%, (2015թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 92.9%, որը նախորդ տարվանից պակաս է հավաքագրված 16.2 մլն. դրամ:

Մարզի 1 բնակչի հաշվով այս ցուցանիշը 2016թ. համար կազմում է 760 դրամ, Վանաձորում այն 335 դրամ է, ամենամեծ ցուցանիշը՝ Թեղուտ համայնքում 17086 դրամ, իսկ ամենափոքր ցուցանիշը Ջրաշեն համայնքում է 56 դրամ:

Տեղական տուրքերի հավաքագրման մակարդակը կազմել է 99.4%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 103.1%-ի դիմաց, փաստացի հավաքագրումը նվազել է 1.2 մլն. դրամով: 2016թ. ընթացքում տեղական տուրքերի գծով մուտք չեն ունեցել 14 համայնք:

Պետական տուրքի գանձումը կազմել է 90.4%, փաստացի հավաքագրումը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 969.2 հազ. դրամով:

2016թ. պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 4119702.2 հազ.դրամ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով ֆինանսավորվել է 100%-ով: 2016թ. ընթացքում պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացվել է այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին 322057.9 հազար դրամ:

Մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերը 2016թ-ի համար նախատեսվել են 6444.3. մլն. դրամ, 01.01.2017թ. դրությամբ փաստացի վճարվել է 2299.9 մլն. դրամ, կամ 94.0 %, ֆոնդային բյուջեի ծախսերը նախատեսվել 787.1 մլն. դրամ, որից վճարվել է 417.9 մլն. դրամ, կամ ծախսերը ֆինանսավորվել է 53.1%-ով:

(Հազ. դրամ)

Հ/Հ	Ծախսերի անվանումը	Բյուջեով նախատեսված	փաստացի վճարում	կատարման %	Տեսակարար կշիռը %
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2446714.7	2299881.9	94.0	38.3
2	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	2195.0	1580.4	72.0	0.0
3	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳԱՆՎՈՐՈՒՄ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ				
4	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	211699.3	198261.4	93.7	3.3
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	588953.4	574859.8	97.6	9.6
6	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	294466.3	261599.2	88.8	4.4
7	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ՝	3356.0	2956.0	88.1	0.0
8	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	580777.4	563529.4	97.0	9.4
9	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1867223.8	1827256.0	97.9	30.4
10	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	251351.3	238213.5	94.8	4.0
11	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	197516.3	44372.4	22.5	0.7
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում*	77503.9	43050.5	55.5	0.7
Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր		6444253.5	6012509.9	93.3	94.1
1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	217403.2	109343.7	50.3	26.2
2	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	93800.4	-27348.1	-29.2	-6.5
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	111982.0	104852.1	93.6	25.1

4	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	219001.7	148319.4	67.7	35.5
5	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ			#DIV/0!	0.0
6	ՀԱՆԳԻՍ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	56664.8	35707.8	63.0	8.5
7	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	88229.2	46998.7	53.3	11.2
8	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	25.0	0.0	0.0	0.0
Ընդամենը ֆոնդային բյուջե		787106.4	417873.6	53.1	6.5
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ		7153855.9	6387333.1	89.3	

ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեների ծախսերը 2016թ. համար նախատեսվել են 7153.9մլն. դրամ, փաստացի կատարումը կազմել է 6387.3մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 89.3%: 2016թ. համար 1 բնակչի հաշվով ծախսերի միջին մարզային ցուցանիշը կազմում է 21737 դրամ, ամենամեծ ցուցանիշը՝ (մինչև 300 բնակիչ ունեցող) Հովնանաձոր համայնքում է 87833 դրամ, իսկ ամենափոքր ցուցանիշը Լեռնահովիտ 10270 դրամ: Քաղաքային համայնքներում այս ցուցանիշը տատանվում է 19244 - 26021 դրամի շրջանակներում:

Համայնքների բյուջեների վարչական մասի կատարված փաստացի 6012.5մլն. դրամ ծախսի մեջ համայնքապետարանների պահպանման ծախսերը կազմում են 2078.2մլն. դրամ կամ 34.6%, 1 շնչին ընկնող ապարատի պահպանման ծախսի միջին մարզային ցուցանիշը կազմում է 6810 դրամ, ամենաբարձր ցուցանիշը Հովնանաձոր համայնքում է 83127 դրամ (մինչև 300 բնակիչ), իսկ ամենացածր ցուցանիշը՝ Վանաձորում՝ 2355 դրամ, ընդ որում հիմնականում այս ցուցանիշը ցածր է խոշոր քաղաքային համայնքներում՝ Ալավերդի 4157 դրամ, Տաշիր 4186 դրամ, Ստեփանավան 4983 դրամ, Սպիտակ 5676 դրամ:

Մարզի 107 համայնքների 2016թ. բյուջեների վարչական ծախսերի մեջ աշխատավարձերի գծով ծախսերը կազմել է 1,932,5 մլն դրամ, որը կազմում է ծախսերի մոտ 32.1%-ը, կամ ապարատի պահպանման ծախսերի 93.0%-ը:

Մարզի համայնքների բյուջեների աշխատավարձի գծով պարտքերը 2016թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 10,070.8 հազար դրամ, որը ամբողջությամբ Վանաձոր համայնքի պարտքն է:

Ըստ ոլորտների ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն կրթության բնագավառին ուղղված ծախսերը՝ 30.4%, այդ թվում նախադպրոցական կրթությանն ուղղված ծախսերը՝ 50.1%, կամ բյուջեների վարչական մասի 15.2%-ը: Ընդ որում 2016թ. մարզում համայնքային բյուջեներից ֆինանսավորվող նախադպրոցական կրթության հիմնարկների թիվը 68 է, որոնք սպասարկում են 35 համայնքների, այս համայնքներում 1 երեխայի կտրվածքով տարեկան ծախսերը տատանվում են 137.7 հազ. դրամից մինչև 417.9 հազ. դրամ:

Աղքատիության գծով մարզում ծախսեր իրականացնում են 41 համայնքներում, որի համար 2016թ. ծախսվել է 495.4 մլն դրամ և վարչական ծախսերի ընդհանուր գումարի 8.2%, կամ այս համայնքներում 1 բնակչի հաշվով ծախսվող միջին գումարը կազմում է 2206 դրամ, իսկ ընդհանուր մարզի կտրվածքով՝ 1624 դրամ:

Սոցիալական պաշտպանության բնագավառում մարզի համայնքներում ծախսը 2016թ. կազմել է 238.2մլն. դրամ կամ վարչական ծախսերի 4.0%-ը: Մարզի 107 համայնքներից սոցիալական ծրագրեր (հիմնականում սոց. օգնությունների տեսքով) իրականացվել են 100 համայնքներում, բացառություն են կազմել Հովնանաձոր, Ապավեն, Մեղովկա, Նովոսելցովո, Շամլուղ, Զիլիզա, Անտառաշեն համայնքները, վերջին երկու համայնքներում գումարների սղության պատճառով բյուջեով նախատեսվել է միայն ապարատի պահպանման ծախսեր:

ԱՌԴԻՏ

2016թ. տարեկան ծրագրի շրջանակներում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի կողմից իրականացվել է 82 աուդիտ, որից մարզային ենթակայության կրթական՝ 53 կրթական ՊՈԱԿ-ներում /ֆինանսական հաշվետվությունների, ֆինանսական բնույթի տեղեկություններում և հաշվապահական հաշվառման գրանցումներում արտահայտված տվյալների արժանահավատության գնահատում, ֆինանսական գործառնությունների առանձին տեսակների օրինականության ստուգում/, իսկ առողջապահական 26 ընկերություններում /«Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման օրինականություն/ և ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժին, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության սոցիալական ապահովության բաժին, Ընտանիքի, կանանց և երեխաների պաշտպանության բաժին) /ֆինանսական կառավարմանը, ներքին հսկողությանն առնչվող գործառնություններ/:

Հրավիրվել է մարզպետարանի Ներքին աուդիտի կոմիտեի 2 նիստ, քննարկվել են աուդիտի հաշվետվությունները, որի արդյունքում կայացվել են համապատասխան որոշումներ, որոնց հիման վրա խախտում թույլ տրված մեկ ՊՈԱԿ-ի տնօրեն ենթարկվել է կարգապահական տույժի՝ ստացել է «խիստ նկատողություն»։ Արձանագրվել է 55.8 մլն. դրամի տարաբնույթ խախտումներ, որից շուրջ 10.09 մլն. դրամը վերականգնման կամ վերաձևակերպման գումար է /նախորդ տարի՝ 20.34մլն. դրամ/, որից ավելի քան 2.1 մլն. դրամը ենթակա է պետքյուջե վերադարձման/ նախորդ տարի՝ 6.4մլն. դրամ/:

Մարզպետի կողմից գրություններ են հասցեագրվել աուդիտի ենթարկված կազմակերպությունների տնօրեններին: Ներքին աուդիտի բաժնի կողմից արձանագրված գումարային խախտումների վերականգնման նպատակով կազմվել են ժամանակացույցեր, ներկայացվել են փաստացի վերականգնված գումարները հիմնավորող փաստաթղթեր Ներքին աուդիտի բաժնի աշխատակիցների կողմից իրականացվում է ամենօրյա խորհրդատվական աշխատանք, իսկ անհրաժեշտության դեպքում կազմակերպվում են ղեկավարների և հաշվապահների մասնակցությամբ համապատասխան թեմատիկ խորհրդակցություններ: Ստեղծված է գործունեության գրագետ և փոխվստահության միջավայր՝ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

2016 թվականի ընթացքում մարզպետարանի գործունեության համար կարևոր նշանակություն են ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի պահանջների, Աղքատության Հաղթահարման Ռազմավարական Ծրագրի գերակայությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2014թ. փետրվարի 6-ի թիվ 113-Ն որոշմամբ հաստատված «Լոռու մարզի 2014-2017թ.թ. սոցիալ – տնտեսական զարգացման ծրագրի» հիմնարար դրույթների ու զարգացման գերակա ուղղությունների համադրումը:

ՄԶԾ-ի հիմնական նպատակը ՀՀ երկարատև կայուն տնտեսական աճին նպաստող խնդիրների առաջադրումն ու մարզի համաչափ զարգացման ապահովումն է: Առաջնահերթ նպատակների շարքում է աղքատության հաղթահարումը և տարածքային համաչափ զարգացումը: Մարզպետարանում, որպես մարզային զարգացման որակյալ ու հիմնավորված ծրագրեր կազմելու գործընթացների համակարգող ու դրանց իրականացման համար անհրաժեշտ մեխանիզմներն ապահովող մարմնում, 2016թ. իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

- Ըստ ոլորտային աշխատանքային խմբերի (Արդյունաբերություն, մասնավոր հատված և փոքր ու միջին ձեռնարկատիրություն, Գյուղատնտեսություն, բնապահպանություն և ընդերքի

օգտագործում, Կրթություն, մշակույթ, սպորտ և երիտասարդության հարցեր, Առողջապահություն և սոցիալական ապահովություն, Քաղաքաշինություն, Ենթակառուցվածքներ (ջրամատակարարում և ջրահեռացում, ճանապարհաշինություն, տրանսպորտ, գազամատակարարում), Տարածքային կառավարում, տեղական ինքնակառավարում և քաղաքացիական հասարակություն) մշակվել է ՄՀԾ-ի 2016թ. Տարեկան աշխատանքային պլանը (ՏԱՊ),

- Մարզպետարանի ռեսուրս կենտրոնում թարմացվել են ՄՀԾ-ի կազմման համար կարևորագույն էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանները (մարզի ՏԻՄ-երի կողմից կազմված և հաստատված համայնքների քառամյա զարգացման ծրագրերի, համայնքային բյուջեների հիման վրա):
- Ընթացիկ տարում ՄՀԾ-ով նախատեսված աշխատանքները ենթարկվել են վերլուծության մարզպետարանի ՄԳ խմբի կողմից, կազմվել է ՄՀԾ-ով 2016թ. նախատեսված միջոցառումների մոնիտորինգի և գնահատման հաշվետվություններ կիսամյակային և տարեկան կտրվածքներով
- Իրականացվել է հանրային իրազեկում մարզային լրատվամիջոցների միջոցով, ինչպես նաև 2016թ. ՏԱՊ-ն ու ՄԳ հաշվետվությունները տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական ինտերնետային կայքում

Լոռու մարզի 2017-2025թթ. տարածաշրջանային զարգացման ռազմավարություն (Մարզոճազմ ծրագրի մեկնարկ)

2016թ.-ին մեկնարկվեց Լոռու մարզի 2017-2025թթ. տարածաշրջանային զարգացման ռազմավարության (ՏՀՌ- կամ Ծրագիր) մշակման աշխատանքները: Այն մարզային մակարդակի ռազմավարական փաստաթուղթ է, որը տրամադրում է մարզում երկարաժամկետ զարգացման հեռանկարներ ու ուղղություններ՝ հիմնվելով առկա իրավիճակի, մարտահրավերների և հնարավորությունների վրա: Այն ձևավորվում է ազգային ռազմավարական շրջանակների հետ սերտորեն, և մասնակցային եղանակով ներգրավվում բոլոր շահագրգիռ կողմերին:

Մշակված ռազմավարության ծրագրի նախագիծը կներկայացվի ՀՀ կառավարության հաստատմանը 2017թ.-ին:

Ըստ ԵՄ փորձագիտական խմբի մշակված մեթոդաբանության, ՏՀՌ-ի մշակման համար հաշվի են առնվելու հետևյալ հիմնական ասպեկտները՝

1. ՏՀՌ-ները պետք է մշակվեն 2016-2025թթ. Հայաստանի Տարածաշրջանային Զարգացման Ռազմավարության հետ սերտորեն, և սերտորեն աջակցեն ՀՏՀՌ-ում առկա նպատակներին՝ հաշվի առնելով յուրաքանչյուր մարզի կարիքները, կարողությունները և զարգացման ուղղությունները:
2. ՏՀՌ-ները պետք է հաշվի առնեն այլ ազգային փաստաթղթեր, ինչպիսիք են Հայաստանի Զարգացման Ռազմավարությունը, ոլորտային ռազմավարությունները, և այլ կառավարական ծրագրեր, և պետք է խորհրդակցեն համապատասխան նախարարությունների և գործակալությունների հետ:
3. ՏՀՌ-ները պետք է կառուցվեն հիմնվելով փաստերի վրա, և միջմարզային տարբերությունների և միջմարզային կառուցվածքային բազմազանությունների վերաբերյալ խորը գիտելիքներից ելնելով: Պետք է ունենալ բոլոր դերակատարների համապատասխան ներգրավվածություն և աջակցություն՝ տեղական մարմիններ, բիզնես համայնքներ, ՀԿ-ներ, կրթական հաստատություններ և այլն:

4. Քանի որ ՏՀՌ-ն դառնում է հիմք Տարածաշրջանային զարգացման ծրագրավորման և ֆինանսական հոսքի համար, շատ կարևոր է, որ դրանք իրատեսականորեն ներկայացնեն մարզում առկա իրավիճակը և ռազմավարական խնդիրները:

Համայնքների զարգացման ոլորտ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքային բյուջեները կրում են ծրագրային բնույթ, այսինքն դրանք ընդունվում են նախապես հաստատված համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի հիման վրա, 2016թ.-ին լուրջ ուշադրություն է դարձվել համայնքային զարգացման 5-ամյա ծրագրերի մշակման և հաստատման գործընթացի վրա:

2016 թվականին մարզի բոլոր համայնքների (բացառությամբ՝ Վանաձոր և Գյուլագարակ համայնքների) ավագանիները հաստատել են համայնքի զարգացման հնգամյա ծրագրերը: Դրանք կազմվել և հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից մշակված նոր մեթոդաբանության համաձայն, որը սահմանում է համայնքի հնգամյա զարգացման ծրագրի (ՀՀԶԾ, Ծրագիր) մշակման և կառավարման հիմնական սկզբունքները, գործիքակազմը, գործընթացը և նպատակաուղղված է համայնքների կայուն զարգացումն ապահովող չափելի արդյունքների սահմանմանը և միջոցառումների նախանշմանը:

Համայնքի հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջությունն արտահայտող փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Փոքր և միջին ձեռներեցության զարգացման ոլորտ

Փոքր և միջին ձեռնարկատիրության, ինչպես նաև մասնավոր հատվածի զարգացումը մարզում աղքատության կրճատման և տնտեսական զարգացման ամենակարևոր ուղղություններից մեկն է: Այս կապակցությամբ 2016թ. ՄԶԾ-ով առաջարկվել է բարձրացնել գործարար ակտիվությունը մարզում բիզնես պլանավորման և կառավարման տարածաշրջանային հատուկ մոտեցումների կիրառման միջոցով՝ ներգրավելով այդ գործընթացներում ՏԻՄ-երի և գործարար համայնքի ներկայացուցիչներին:

2016թ. Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոնի Լոռու մասնաճյուղը հաջողությամբ շարունակում է իր աշխատանքը մարզում: Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի աջակցության հիմնական ուղղություններն են՝ գործարար տեղեկատվություն, գործարար խորհրդատվություն, գործարար ուսուցում, վերապատրաստում, վարկային երաշխավորության տրամադրում:

ՀՀ ՓՄՁ ԶԱԿ-ի Լոռու մասնաճյուղի և ՓՄՁ զարգացման մարզային խորհրդի սերտ ու համագործակցված աշխատանքի արդյունքում 2016թ. ընթացքում Լոռու մարզի ՓՄՁ-ներին տրամադրվել է հետևյալ թիրախային աջակցությունները՝

✓ Խորհրդատվական եւ տեղեկատվական աջակցություն	1505
✓ Աջակցություն սկսնակ գործարարներին /ԱՍԳ/	25
✓ Ֆինանսական աջակցություն սկսնակ գործարարներին	1
Կանանց ձեռներեցության զարգացման ծրագիր -	
✓ «Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխության անցկացում	19
✓ ՀԴՄ-ների փոխհատուցում	45

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտ

ՀՀ ՏԿԶ նախարարության նախաձեռնությամբ հաջողությամբ շահագործվել է ՏԿԶԼ էլեկտրոնային կառավարման տեղեկատվական բաց համակարգը, բաղկացած ՀՀ ՏԿԶ նախարարության եւ 10 մարզերի ինտերնետային կայք-էջերից: Այն օժտված է ինովացիոն տեխնոլոգիաների բոլոր հնարավորություններով: Այս կայքերը թույլ են տալիս ազգաբնակչությանը համացանցի միջոցով ուղիղ կապ հաստատել մարզպետարանի հետ: Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքն է՝ www.lori.mtaes.am:

Էլեկտրոնային փաստաթղթաշարժի «Mulberry» համակարգի շահագործումը եղել է մարզպետարանի ներքին փաստաթղթաշրջանառության ամենօրյա, ինչպես նաեւ էլեկտրոնային ինֆորմացիայի փոխանակման աշխատանքների իրականացման արդյունք՝ մարզպետարանի և ՀՀ կառավարության, նախարարությունների, գերատեսչական մարմինների աշխատակազմերի միջև, որտեղ տեղադրված է նմանատիպ համակարգ:

Կարևորելով տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացումը, մարզպետարանը համագործակցում է «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» ՀԿ, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի, ինչպես նաև ՏՏ ոլորտի և իրենց գործունեության մեջ ՏՏ ոլորտը կիրառող մարզի առաջատար ձեռնարկությունների («Ինստիգեյթ» ՓԲԸ-ի Վանաձորի մասնաճյուղ, «Ա2» ՍՊԸ, «Գործարարության զարգացման և օժանդակման կենտրոն» և այլն) հետ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ոլորտում որպես հաջողված արդյունք կարելի է նշել ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, Համաշխարհային բանկի շուրջ 6.0մլն դոլար ֆինանսական աջակցությամբ 2014թ.-ին Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) հիմնումը, որի գլխավոր օպերատոր է նշանակվել Հայաստանի Ձեռնարկությունների Ինկուբատոր հիմնադրամը (ԶԻՀ): Կենտրոնի պաշտոնական բացումը տեղի ունեցավ 2016թ.-ի աշնանը ՀՀ Նախագահի անմիջական մասնակցությամբ:

Ծագիրն ուղղված է նպաստելու Լոռու մարզի Վանաձոր քաղաքում ժամանակակից գիտելիքահեռք և ինովացիոն ենթակառուցվածքներով հագեցած տեխնոլոգիական կենտրոնի ստեղծմանը, օտարերկրյա ներդրումների ներգրավմանը, որակյալ տեխնոլոգիական մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, ինչպես նաև մարզի սկսնակ ընկերություններին և անհատ ձեռնարկատերերին բիզնես աջակցության ու խորհրդատվության տրամադրմանը:

Ներկայումս Կենտրոնում գործում են տեղեկատվական տեխնոլոգիաների և ճարտարագիտական ոլորտների ուսումնական լաբորատորիաները, Համատեղ աշխատանքային տարածք՝ սկսնակ թիմերի համար:

Կենտրոնում հիմնվել է նաև CNC համակարգով մետաղամշակման գերժամանակակից սարքավորումներով հագեցած լաբորատորիա, որը բացառիկ հնարավորություն կընձեռի ճարտարագիտական ոլորտում (ներառյալ՝ ճշգրիտ ճարտարագիտություն, մեքենաշինություն, մաքուր տեխնոլոգիաներ) նախատիպերի մշակման, փորձարկման և նոր արտադրանքների ու լուծումների մշակման համար՝ ինչը կխթանի նորարարությունների զարգացումը Հայաստանում, հնարավորություն ընձեռնելով գյուտարարներին, տեխնոլոգիական ընկերություններին և գիտնականներին զգալիորեն արագացնել գյուտի/նոր արտադրանքի մուտքը շուկա:

Այս և եռաչափ տպիչներով հագեցած լաբորատորիաները, ինչպես նաև համապատասխան մասնագետների առկայությունը ՎՏԿ-ում թույլ է տալիս կազմակերպել կարևոր ճարտարագիտական առարկաների համատեղ դասընթացներ, կուրսային և ավարտական աշխատանքներ, որորնց որակը և բովանդակությունը համապատասխանում է տվյալ ոլորտին ներկայացվող համաշխարհային շուկայի ժամանակակից պահանջներին:

Շարունակական աշխատանքներ են տարվում Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի հետ՝ ՎՏԿ-ում համալսարանի ուսումնական ծրագրերի մի մասի իրականացման ուղղությամբ, ինչը կապահովի ուսանողների հասանելիությունը ոչ միայն կենտրոնի ժամանակակից ենթակառուցվածքներին և լաբորատորիաներին, այլև

Ժամանակակից կրթական բովանդակությանը՝ կարևոր խթան հանդիսանալով կրթության որակի բարձրացման համար:

Կենտրոնում կազմակերպվում են մասնագիտական դասընթացներ և սեմինարներ հետևյալ հիմնական ուղղություններով՝

- համակարգչային ճարտարագիտություն (Lab View, տրամաբանական սինթեզ, թվային նախագծում, թվային փորձարկում, թվային ազդանշանի մշակում),
- Web ծրագրավորում (Java Script, PHP, HTML, տվյալների բազա),
- մոբայլ ծրագրավորում (Java ծրագրավորում),
- ընդհանուր դասընթացներ (ալգորիթմների տեսություն, C#, .net, C Fundamentall, Objective C, դիսկրետ մաթեմատիկա, գործարար անգլերեն):

Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի շրջանակում հանրապետությունում առաջին անգամ մեկնարկել են 9-12 դասարանների դպրոցականների համար առցանց դասընթացներ՝ օգտագործելով «SoloLearn» ուսումնական հարթակը:

Կենտրոնում նախաձեռնվել է «ՏեխԴպրոց» ակումբը, որի հիմնական նպատակներն են դպրոցականների շրջանում տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների նկատմամբ հետաքրքրության խթանումը, դպրոցականների մոտ թիմային աշխատանքի և մտածելակերպի զարգացումը, դպրոցականների մասնագիտական կողմնորոշմանը նպաստելը:

Ճարտարագիտական ոլորտը խթանելու նպատակով կազմակերպվել են համակարգչային նախագծման AutoCAD և SolidWokrs ծրագրերի դասընթացներ ուսանողների և գործող մասնագետների համար:

2016թ.-ին կենտրոնի կողմից կազմակերպված մասնագիտական դասընթացներին և սեմինարներին մասնակցել են շուրջ 2000 աշակերտներ, ուսանողներ և մասնագետներ:

Ձեռներեցության զարգացման նպատակով շարունակական աշխատանքներ են իրականացվել Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի ուսանողների, ՀԱԴՀ-ի Վանաձորի մասնաճյուղի և Վանաձորի պետական համալսարանի ուսանողների և դասախոսների հետ՝ տեխնոլոգիական թիմեր ստեղծելու ուղղությամբ:

Կենտրոնում ձևավորված համատեղ աշխատանքային տարածքում տեղակայված են Կենտրոնի աքսելերացիոն ծրագրում ներառված սկսնակ թիմերը:

Առաջին անգամ Հայաստանում Ձեռնարկությունների Ինկուբատոր Հիմնադրամը, Վանաձորի Տեխնոլոգիական կենտրոնի շրջանակում հայտարարել է նաև Ինժեներական, Մաքուր և բարձր տեխնոլոգիաների, Էներգիայի նոր աղբյուրների մշակման և Էներգոխնայողության ոլորտների աքսելերացիոն ծրագիր՝ տեղական գյուտարարների, ճարտարագետների և ուսանողների համար: Ծրագիրը խրախուսում է ճարտարագիտական նոր արտադրանքի և տեխնոլոգիաների զարգացումը՝ աջակցելով գյուտարարներին, գյուտերի հիման վրա նորարար արտադրանքներ մշակող ձեռներեցներին, ճարտարագետներին, սթարթափներին: Աքսելերացիոն ծրագիրը հաջողությամբ անցած թիմերը հետագայում հնարավորություն կստանան մասնակցել առաջիկայում կազմակերպվող Ճարտարագիտական, բարձր և մաքուր տեխնոլոգիաների ոլորտների դրամաշնորհային ծրագրերին: Ծրագրին մասնակցում են թիմեր ոչ միայն Վանաձորից, այլ նաև հանրապետության մյուս քաղաքներից:

Շարունակվել է Հայաստանի Մանուկներ Հիմնադրամի (COAF) կողմից նախաձեռնված Սմարթ կենտրոնի ստեղծման աշխատանքները հանրապետական մայրուղուց ոչ այնքան հեռու, գեղատեսիլ Դեբեդի հովտում: Շինարարական աշխատանքները նախատեսվում է ավարտին հասցնել 2017թ.-ի աշնանը: Այս կենտրոնն իր բովանդակությամբ եւ տեսակով Հայաստանում առաջինն է, որը նոր հնարավորություններ կստեղծի մարզի գյուղական միջհամայնքային կապի ամրապնդման, փորձի փոխանակման, դպրոցականների կրթությունը նորարարական տեխնոլոգիաներով կազմակերպելու համար: Հիմնադրամի կողմից մարզի 6 համայնքներում ստեղծվել են ստեղծագործարաններ:

«ՍՄԱՐԹ մարզ» նախաձեռնության շրջանակներում, մարզպետի անմիջական հանձնարարությամբ մարզի հանրակրթական դպրոցներում մեկնարկվել է ՍՄԱՐԹ

դասասենյակների ստեղծման ծրագիրը: 2016թ.-ին ընտրվել են մարզի տարբեր համայնքների 13 դպրոցներ, սկսվել են դասասենյակների վերանորոգման աշխատանքները:

2016թ.-ին նախաձեռնվեց Վանաձորում ԹՈՒՄՈ կենտրոնի ստեղծման աշխատանքները: Հողհատկացման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Ձարգացման ծրագրեր

Ըստ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2016թ. ՏԱՊ-ով նախատեսված իրատեսական բյուջեն կազմել է **8,593,179.0** հազար դրամ, այդ թվում՝

- ՀՀ պետական բյուջեի հատկացումներ՝ **4,670,210.4** հազ. դրամ, այդ թվում՝
 - ✓ Սեփական միջոցներ՝ **2,106,410.0** հազար դրամ,
 - ✓ Վարկային միջոցներ՝ **2,563,800.0** հազար դրամ,
- Միջազգային կազմակերպություններ և դոնորներ՝ **23,625.00** հազար դրամ,
- Համայնքային բյուջեների ներդրումներ՝ **332,743.6** հազար դրամ,
- Մասնավոր հատվածի ներդրումներ՝ **2,575,000.00** հազար դրամ,
- Ֆինանսավորման այլ աղբյուրներ՝ **991,600.00** հազար դրամ:

2016թ. փաստացի իրականացվել է **21,126,466.0** մլն դրամի աշխատանքներ, որից՝

- ❖ **6,915,488.4** մլն-ը ՀՀ պետ. բյուջեի հատկացումներով, այդ թվում՝ **2,362,688.4** մլն դրամը վարկային միջոցներից **4,552,800.0** մլն դրամը սեփական միջոցներից
- ❖ **11,357,300.0** մլն դրամը՝ մասնավոր ներդրողների միջոցներից,
- ❖ **1,043,172.8** մլն դրամը՝ ֆինանսավորման այլ աղբյուրներով,
- ❖ **1,275,675.0** մլն. դրամը՝ միջ. կազմակերպությունների և դոնորների միջոցներով,
- ❖ **534,829.2** մլն դրամը՝ համայնքային ֆոնդային բյուջեների միջոցներով:

Կատարողականը փաստացի պլանավորված ՏԱՊ-ի նկատմամբ կազմել է 245.9 %


ՀՀ Լոռու մարզի 2016թ. զարգացման ծրագրի ֆինանսավորումն ըստ բնագավառների

(մլն. դրամ)

Հ/Հ	Ոլորտի անվանումը	2016թ. պլանավորված ֆինանսավորումը, այդ թվում		Իրականացված է 2016թ., այդ թվում	
		Ընդամենը	2016թ. Պետական բյուջեից	Ընդամենը	2016թ. Պետական բյուջեի ֆինանս.
1.	Արդյունաբերություն, ՓՄՁ և մասնավոր հատված	3,774,925.0	1,176,300.00	12,231,124.0	1,226,800.0
2.	Սոցիալական ոլորտներ	2,569,104.0	1,577,504.0	2,954,770.0	1,359,982.0
2.1.	Կրթություն	1,391,600.0	400.0	1,064,500.0	300.0
2.2.	Մշակույթ և սպորտ	77,504.0	77,504.0	125,800.0	125,800.0
2.3.	Առողջապահություն	1,100,000.00	1,100,000.00	1,680,788.0	850,000.0
2.4	Սոց. ապահովություն	0.00	0.00	83,682.0	83,682.0
3.	Գյուղատնտեսություն և բնապահպանություն	149,006.4	149,006.4	161,671.4	148,606.4
3.1.	Գյուղատնտեսություն	96,500.00	96,500.00	109,165.00	96,100.0
3.2.	Բնապահպանություն	52.506.4	52.506.4	52.506.4	52.506.4
4.	Քաղաքաշինություն	60,000.0	60,000.0	615,000.0	531,700.0
5.	Ենթակառուցվածքներ	1,987,500.00	1,707,400.0	5,087,857.6	3,648,400.0
5.1.	Ճանապարհաշին.	696,500.0	416,400.0	4,146,400.0	3,646,400.0

5.2.	Ջրամատակարարում	1,291,000.0	1,291,000.0	606,361.6	2,000.0
5.3.	Գազամատակարարում	589,000.0	0.00	36,634.8	0
5.4.	Էներգամատակարարում	268,890.0	0	298,461.2	0
6.	Արտակարգ իրավիճակներ	52,643.6	0.00	76,043.0	0.0
	Ընդամենը	8,593,179.0	4,670,210.4	21,126,466.0	6,915,488.4


**2016թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐՆ ԸՍՏ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂՔՈՒՐՆԵՐԻ
ընդամենը (21,126,466.0 հազ.դրամ)**



ԱՂՔՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

2016թ. մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի ծավալը ընթացիկ գներով կազմել է՝ 131000.9 մլն դրամ, 2015թ. 120307.2 մլն դրամի դիմաց: Համադրելի գներով թողարկվել է 131660.5 մլն դրամի արտադրանք, արդյունաբերական արտադրանքի ծավալի աճը կազմել է 109.4% (հանրապետականը՝ 106.7%), բացարձակ աճը՝ 11353.3 մլն. դրամ: Լոռու մարզի արդյունաբերական արտադրանքի տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում (ընթացիկ գներով) տարվա արդյունքներով կազմել է 9.2 % (4-րդ ցուցանիշը), նախորդ տարվա 8.9%-ի դիմաց: Պատրաստի արտադրանքի իրացման ծավալը կազմել է 130704.1 մլն դրամ, իրացման աճի ինդեքսը՝ 95.2%, որից ԱՊՀ երկրներում 921.2 մլն դրամ (0.7%) և այլ երկրներում 79167.3 մլն դրամ (60.6%): Մարզի արդյունաբերական արտադրանքի շուրջ 76.1%-ը բաժին է ընկնում 5 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններին, 23.9%-ը՝ փոքր և միջին ձեռնարկություններին, որոնց աշխատողների տեսակարար կշիռը համապատասխանաբար կազմում է 54.2% և 45.8%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալների դինամիկան ընթացիկ գներով
(մլն. դրամ)



2016թ. արդյունքներով մարզի արդյունաբերական արտադրանքի ծավալը 1999թ. մակարդակը գերազանցել է 59.0 անգամ:

Մեկ շնչի հաշվով 2016թ. մարզում թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 586.9 հազ. դրամ՝ միջին հանրապետական 477.3 հազ. դրամի դիմաց կամ հանրապետական միջինը գերազանցել է 123.0 %-ով:

Մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները 2016թ. արդյունքներով ունեն այսպիսի տեսք՝


- **հանքագործական արդյունաբերություն՝** 66672.0 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 114.0% և տեսակարար կշիռը 50.9% (2015թ.՝ 45.7%): Ընդհանուր առմամբ 2016 թվականին 2011թ. համեմատությամբ հանքագործական արդյունաբերության ծավալը (ընթացիկ գներով) աճել է շուրջ 9.3 անգամ, որը հիմնականում արդյունք է 2014թ. տարեվերջին «Թեղուտ» ՓԲԸ-ի շահագործման (ներդրվել է շուրջ 340 մլն. ԱՄՆ դոլար): Առաջիկա տարիներին ևս, համաձայն մարզի 2017-2025թթ. ռազմավարական ծրագրի, հանքագործական արդյունաբերության զարգացումը կլինի մարզի գերակա ուղղություններից:
- **մշակող արդյունաբերություն՝** համապատասխանաբար՝ 50419.1 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 104.0% և տեսակարար կշիռը՝ 38.5% (2015թ.՝ 43.7%): 2016թ. մարզի մշակող արդյունաբերության մեջ ընթացիկ գներով ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

(Հազ. դրամ)

Հ/հ	Ճյուղի անվանումը	2016թ.	2015թ.	Աճը, %	Բացարձակ աճը, ±	Տեսակարար կշիռը, %	
						2016թ.	2015թ.
1	Քիմիական արդյունաբերություն	365427	541928	65.2	-176501	0.7	1.0
2	Թեթև արդյունաբերություն	2984911	2686063	113.6	+298848	5.9	5.1
3	Սննդի արդյունաբերություն	14859661	16879330	90.4	-2019669	29.5	32.0
4	Մեքենաշինություն և սարքաշինություն	576320	435359	131.1	+140961	1.1	0.8
5	Փայտամշակում և կահույքի արտադրություն	36371	14477	2.7 անգամ	+21894	0.1	0.03
6	Մետալուրգիա	30336072	30691536	111.5	-355464	60.2	58.2
7	Այլ ճյուղեր	1260343	1443545	89.8	-183202	2.5	2.9


Ընդամենը	50419108	42692238	104.0	-2273130	100.0	100.0
----------	----------	----------	-------	----------	-------	-------

Անցյալ տարի ծավալի աճ են ապահովել թեթև, մեքենաշինական, փայտամշակման արդյունաբերությունները:



Առաջիկայում ևս մարզի համար որպես կարևորագույն խնդիր կմնա թեթև և սննդի արդյունաբերությունների հետագա զարգացումը, որոնք կարող են մեծ շուկա ունենալ ԵԱՏՄ և ԵՄ երկրներում: «Գլորիա», «Սարտոն» և «Բազում» ֆիրմաների արտադրանքը իր որակական ցուցանիշով մեծ պահանջարկ ունի ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև Իտալիայում, Գերմանիայում և այլն: Այսօր գյուղմթերքների վերամշակման և սննդի ոլորտում մարզում գործում են հարյուրից ավելի ձեռնարկություններ և անհատ ձեռնարկատերեր (աշխատողների թիվը՝ շուրջ 700 մարդ): Առաջիկա 10 տարում ևս սննդի արդյունաբերության ընդլայնումը և որակի բարձրացումը մարզի համար կմնա որպես գերակա ուղղություն, առաջին հերթին որպես գյուղմթերքների վերամշակման (կաթ, միս, ցորեն, պտուղ-բանջարեղեն և այլն) բնագավառ, որը նաև հնարավորություն կտա մարզի արտադրության ընդհանուր ծավալում մեծացնելու փոքր և միջին բիզնեսի մասնաբաժինը մինչև 35-40%:

- **Էլ.էներգիայի արտադրություն՝** համապատասխանաբար՝ 12761.3 մլն դրամ, ծավալի աճը՝ 112.8% և տեսակարար կշիռը 9.7% (2015թ.՝ 9.6%): 2016թ. էլ.էներգիա արտադրող 27 ձեռնարկությունների կողմից մարզում արտադրվել է 211.3 մլն ԿՎտ/ժամ էլեկտրաէներգիա (2015թ.՝ 207.3 մլն ԿՎտ/ժամ), որից 1.7 մլն ԿՎտ/ժամ-ը հողմակայանի կողմից (2015թ.՝ 3.6 մլն. ԿՎտ/ժամ): Մարզի ՀԷԿ-երի կողմից թողարկված էլ.էներգիան կազմել է հանրապետության ՀԷԿ-երի կողմից թողարկված էներգիայի 9.0%-ը:
- **ջրամատակարարում, թափոնների մշակում և այլ ճյուղեր՝** համապատասխանաբար՝ 1148.5 մլն դրամ, 106.3% և 0.9% (2015թ.՝ 0.9%):



2016թ. արդյունքներով մարզի արդյունաբերության տեսակարար կշիռը հանրապետության արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի ունի հետևյալ պատկերը՝ հանքագործական արդյունաբերություն՝ 26.0%, մշակող արդյունաբերություն՝ 5.7%, էլ.էներգիայի արտադրություն՝ 4.8% և ջրամատակարարում և այլ ճյուղեր՝ 5.2%:

Ընդհանուր առմամբ վիճակագրական հաշվետվություն ներկայացրած մարզի 157 արտադրական ձեռնարկություններից ընթացիկ գներով արտադրանք չեն թողարկել 8 ձեռնարկություն, արտադրանքի ծավալի նվազում են ունեցել 42 ձեռնարկություններ (ձեռնարկությունների 26.8%-ը): Առավել մեծ նվազում ունեն Վանաձորի «Վանալիմեդ» ՍՊԸ-ն՝ նախորդ տարվա 25.0%-ը, «Վանշին Գրուպ» ՓԲԸ-ն՝ 25.9%-ը, «Ռոստոմ և Զոհրաբ» ՍՊԸ-ն՝ 59.0%-ը, Ստեփանավանի «Ֆիմպլաստ» ՍՊԸ-ն՝ 84.1%-ը, Տաշիրի «Դոմիկյան եղբայրներ» ՍՊԸ-ն՝ 57.7%-ը, Թումանյանի «Բիո-Օձուն» ՍՊԸ-ն՝ 65.3%-ը, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 54.3%-ը, Գուգարքի «ԶԱՐԿ» ՍՊԸ-ն՝ 45.5%-ը և այլն:

2016թ. արդյունքներով մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալում մեծ տեսակարար կշիռ ունեն «Թեղուտ» ՓԲԸ-ն՝ 48.2%, «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ն՝ 23.2%, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ն՝ 2.5%, Վանաձորի «Գլորիա կարի ֆաբրիկա» ՍՊԸ-ն՝ 1.7%, «Ձորագետ հիդրո» ՍՊԸ-ն՝ 1.5%, «Սպիտակի թոջնաբուժական կոմբինատ» ՍՊԸ-ն՝ 1.1%, «Բետոն» ԱԿ-ն՝ 0.6%, «Դուստր Մելանյա» ՍՊԸ-ն՝ 0.5% և այլն:

Ըստ տարածաշրջանների 2016թ. թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ գներով ունի այսպիսի տեսք.

(Հազ. դրամ)				
Հ/հ	Տարածաշրջանը	2016թ.	Աճը, %	Տեսակարար կշիռը, %
1	Սպիտակի	2054988.0	163.4	1.6
2	Տաշիրի	1528265.0	114.4	1.2
3	Գուգարքի	4235267.0	92.3	3.2
4	Ստեփանավանի	796137.0	21.4	0.6
5	Թումանյանի	116259404.0	111.9	88.7
6	ք.Վանաձոր	6126818.0	111.4	4.7
	Ընդամենը	131000879.0	109.4	100.0

Վերջին տարիներին զգալիորեն նվազել է Վանաձոր քաղաքի արտադրական պոտենցիալը: Նախկինում իր արդյունաբերական արտադրանքի ծավալով հանրապետությունում 2-րդ տեղ զբաղեցնող քաղաքում, որը հայտնի էր իր 3 գիտա-արտադրական միավորումներով, 6 արտադրական միավորումներով, 16 արտադրական ձեռնարկություններով, որտեղ աշխատում էին 30 հազարից ավելի մարդ, որի համախառն

արտադրանքը կազմում էր ներկա մարզի արդյունաբերական արտադրանքի 58.3%-ը, և որն առաքվում էր աշխարհի ավելի քան 40 երկրներ, զարգացած էին քիմիական, մեքենաշինական և սարքաշինական, թեթև, սննդի արդյունաբերությունները: Այսօր քաղաքի արդյունաբերությունը թողարկում է մարզի արդյունաբերական արտադրանքի ընդամենը 4.7%-ը (հանրապետության 0.4%), իսկ արտադրությունում զբաղվածների թիվը կազմում է ընդամենը 2.0 հազ. մարդ: Վանաձորի արտադրանքի ընդհանուր ծավալում 48.7%-ը բաժին է ընկնում թեթև արդյունաբերությանը, 18.1%-ը՝ սննդի արդյունաբերությանը, 7.9%-ը՝ մեքենաշինությանը: Վանաձորում բարձր է միգրացիան, գործազրկությունը, աղքատությունը, որի արդյունքում մշտական բնակչության թիվը 1987թ. շուրջ 172.0 հազարից նվազել է և 2015թ. կազմել է ընդամենը 82.2 հազ. մարդ: Գրանցված գործազուրկների թիվը Վանաձորում հասնում է 4.5 հազ. մարդու:

Ստեփանավանի տարածաշրջանում արտադրանքի ծավալների կտրուկ անկումը արդյունք է 2015 թվականից «Սագամար» ՓԲԸ-ի աշխատանքների դադարեցման:

2016թ. արդյունքներով արդյունաբերա-արտադրական անձնակազմի միջին ցուցակային թիվը մարզում կազմել է 6382 մարդ, 2015թ. 7356 մարդու դիմաց կամ աշխատողների թիվը նվազել է 974 մարդով կամ 13.2%-ով: Աշխատողների թիվը հանքագործական արդյունաբերությունում նվազել է 546 մարդով, այդ թվում՝ «Սագամար» ՓԲԸ-ում 324 մարդով, «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ում՝ 148 մարդով, «Թեղուտ» ՓԲԸ-ում՝ 74 մարդով, մշակող արդյունաբերությունում՝ 360 մարդով, այդ թվում՝ «Էյ-Սի-Փի» ՓԲԸ-ում՝ 54 մարդով, քիմիական արդյունաբերությունում՝ 256 մարդով: Այն նվազել է նաև Էլ.էներգիայի արտադրությունում և ջրամատակարարումում:

Աշխատանքի արտադրողականությունը 2016թ. մարզի արդյունաբերությունում կազմել է 20526.6 հազ. դրամ (միջին հանրապետականը՝ 18092.6 հազ. դրամ) նախորդ տարվա 16355.0 հազ. դրամի դիմաց կամ աճը՝ 125.5%:

Անցյալ տարի մարզի արտադրական ձեռնարկությունների կողմից բնեղեն արտահայտությամբ արտադրվել է կոնվերտորային պղինձ (սև պղինձ) 12920.0 տոննա (աճը՝ 111.4%), պղնձի խտանյութ՝ 143139.0 տոննա (աճը՝ 126.5%), երկաթբետոնյա իրեր և կոնստրուկցիաներ՝ 11.7 հազ. տոննա (աճը՝ 70.9%), բաճկոններ՝ 453.6 հազ. հատ (աճը՝ 115.2%), պանիր՝ 499.4 տոննա (աճը՝ 111.8%), հաց՝ 2841.5 տոննա (աճը՝ 103.8%), ոչ ալկոհոլային խմիչքներ՝ 2021.7 հազ. լիտր (աճը՝ 74.4%), թռչնի միս՝ 1533.2 տոննա (աճը՝ 189.4%) և այլն:

«Թեղուտ» ՓԲԸ - Ընկերության արտադրանքի (63.2 մլրդ. դրամ) տեսակարար կշիռը հանրապետության հանքագործական արդյունաբերության ընդհանուր ծավալում կազմել է 24.7%՝ նախորդ տարվա 21.0%-ի դիմաց, իսկ մարզի արտադրանքի ընդհանուր ծավալում կազմել է 48.2%՝ նախորդ տարվա 38.6%-ի դիմաց: Ընկերության կողմից արտադրված պղնձի խտանյութի տեսակարար կշիռը հանրապետականի ծավալում կազմում է 36.8%:

Ընկերությունը 2016թ. ՀՀ պետական բյուջե հարկերի ձևով վճարել է շուրջ 13.4 մլրդ. դրամի հարկ, որը նախորդ տարվա մակարդակը գերազանցել է 2.6 անգամ և հայտնվել է հանրապետության խոշոր հարկատուների ցանկի 7-րդ համարում: Ընկերությունն իր հարկային պարտավորությունները բարելավել է կատարել նաև մարզի համայնքների նկատմամբ (Թեղուտ, Շնող, Մեծ Այրում և Ախթալա): Ընկերությունում 2016թ. իրականացվել են 20.72 մլն. ԱՄՆ դոլարի կապիտալ ծախսեր, որի գերակշիռ մասը՝ 13.7 մլն. ԱՄՆ դոլար ծախսվել է կապիտալ մակաբացման վրա, շուրջ 2.2 մլն. դոլար ծախսվել է հարստացուցիչ ֆաբրիկայի սարքավորումների վրա, 1.6 մլն. դոլարը՝ հանքի տեխնիկայի վերանորոգման և այլ սպասարկումների վրա: Զգալի գումար է ծախսվել նաև պոչային տնտեսության, ջրամատակարարման և ջերմամատակարարման ցանցերի, տրանսպորտային համակարգի և այլնի վրա: Ընկերության աշխատողների միջին ցուցակային թիվը կազմել է 1162 մարդ:

«Էյ-Սի-Փի» ՓԲԸ - Ընկերության կողմից կատարված կապիտալ ծախսերը 2016թ. կազմել են շուրջ 1.0 մլն. ԱՄՆ դոլար, ինչը համապատասխանում է պլանավորված ծախսերի ծավալին: Շուրջ

0.4 մլն. դոլար ծախսվել է արտացոլիչ վառարանի վերանորոգման, 0.3 մլն. դոլար՝ նոր ծխատարի գծով կատարված կապիտալ աշխատանքների վրա: Արդյունքում 2016թ. ընկերությունը թողարկել է 12920.0 տոննա կոնվերտորային (սև) պղինձ, նախորդ տարվա 11601.0 տոննայի դիմաց (աճը՝ 111.4%): Աշխատողների թիվը 2016թ. նվազել է 54-ով և կազմել է 587 մարդ:

«Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ - 2016թ. արտադրության վերազինման, նոր տեխնիկայի և սարքավորումների ձեռք բերման համար ընկերությունը նախատեսված 150.0 մլն. դրամի փոխարեն փաստացի կատարել է 336.6 մլն. դրամի ներդրումներ: Սակայն կոմբինատում նախորդ տարվա համեմատությամբ արտադրության ծավալները նվազել են 45.7%-ով:

«Սարյոն» ՍՊԸ - Ընկերությունը միայն իր սեփական միջոցներով 2016թ. կատարել է ավելի քան 15.0 մլն. դրամի ներդրում, որը հնարավորություն է տվել փոխելու ձևման արտադրամասի տանիքը, ընդլայնել պահեստային տնտեսությունները, ձեռնարկության տարածքում կառուցել 750 մետր ճանապարհ և այլն: Անցյալ տարի ընկերության թողարկած արտադրանքի ծավալի աճը կազմել է 120.4%, ավելացել է աշխատողների թվաքանակը:

ՔԱՂԱՔԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

2016թ. քաղաքաշինության, տրանսպորտի եւ ճանապարհաշինության, ջրամատակարարման, գազաֆիկացման եւ էլեկտրաէներգիայի ոլորտում մարզում նախատեսված 25946.0մլն. դրամից իրականացվել է շուրջ 8874.3մլն. դրամի շինարարական աշխատանքներ:

Այդ թվում, քաղաքաշինության ոլորտում նախատեսված 8277.9մլն դրամից փաստացի իրականացվել են 3873.2մլն դրամի շինարարական աշխատանքներ:

Ըստ ֆինանսավորման աղբյուրների՝

ՀՀ պետական բյուջեի ֆինանսավորմամբ – 1231.9 մլն դրամի, որից

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտե– 1030.0 մլն. դրամ

ՀՀ մշակույթի նախարարություն – 62.422մլն. դրամ

ՀՀ կրթության և գիտության նախարարություն – 95.0 մլն դրամ

Լոռու մարզպետարան – 44.5 մլն դրամ

ՀՏՀՀ- 142.0 մլն դրամ

Այլ ֆինանսական միջոցներով- 2499.3 մլն դրամ

Նշված աշխատանքներն ըստ ոլորտների բաշխվել են հետևյալ կերպ՝

	Ըստ ոլորտների	Ընդամենը մարզում	ՀՀ պետական բյուջե	Այլ ֆինանսավ.	ՀՏՀՀ
1	Բնակարանաշինություն	6.7	6.7	0.0	0.0
2	Կրթական օբյեկտներ	2240.7	300.4	1849.3	91.0
3	Մշակութային եւ սպորտային օբյեկտներ	125.8	74.8	0.0	51.0
4	Առողջապահական օբյեկտներ	1500.0	850.0	650.0	0.0
	Ընդամենը	3873.2	1231.9	2499.3	142.0

Քաղաքաշինության ոլորտում առավել խոշոր օբյեկտներն են.

- «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցում՝ իրականացվում է ՀՀ պետական բյուջեի և «Տաշիր» ԲՀ-ի ֆինանսավորմամբ: Ծրագրային գումար՝ 5 584 681.3 հազ.դրամ: Շինարարության սկիզբը՝ 2014թ., ավարտը՝ 2017թ.:

- «Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգում»՝ Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի և ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ի ֆինանսավորմամբ 2155.1մլն. դրամ պայմանագրային արժեքով: Աշխատանքները սկսվել են 2015թ.-ին և ավարտվել 2016թ.:
- «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Վանաձորի մարզային լաբորատորիայի կառուցում՝ 816.0 մլն. դրամ: Աշխատանքները սկսվել են 2015թ.-ին եւ կավարտվեն 2017թ.:
- Դեբեդ համայնքում «ՍՄԱՐԹ» կենտրոնը կառուցվում է «Հայաստանի մանուկներ հիմնադրամի» /COAF/ ֆինանսավորմամբ՝ 3.0մլն. դոլար արժեքով: Շինարարական աշխատանքները սկսվել են 2015թ.:
- «Ալավերդի և Սպիտակ քաղաքներում նոր մանկապարտեզի շենքերի կառուցում» «Տաշիր» ԲՀ-ի շուրջ 1,0մլրդ. դրամի ֆինանսավորմամբ: Շինարարական աշխատանքները սկսվել են 2016թ.:

1. ՀՀ կառավարության 24.12.2015թվականի թիվ 1555-Ն որոշմամբ ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացվել է 133 158,4հազ. դրամ՝ որից

1) Ճոճկան համայնքի մշակույթի տան հիմնանորոգման համար՝ 15104,4հազ.դրամ, կնքված պայմանագիր՝ 12390,0հազ.դրամ, տնտեսում՝ 2714,4հազ.դրամ: Շինարարական աշխատանքներն ավարտված են:

2) Վանաձորի գյուղատնտեսական պետական քոլեջի հիմնանորոգման համար՝ 97600,0հազ.դրամ: ՀՀ կառավարության 21.07.2016 թվականի թիվ 757-Ն որոշմամբ այդ օբեկտը հանվել է:

3) Մեծ Պարնի գյուղի մանկապարտեզի շենքի կառուցման համար՝ 20454,0հազ.դրամ կնքված պայմանագիր՝ 18354,0հազ.դրամ, տնտեսում՝ 2100,0հազ.դրամ: Շինարարական աշխատանքներն ավարտված են:

2. ՀՀ կառավարության 26.05.2016 թվականի թիվ 527-Ն որոշմամբ ՀՀ Լոռու մարզպետարանին հատկացվել է 23500,0հազ.դրամ՝ որից

1) Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի մանկապարտեզի շենքի վերանորոգման համար՝ 12000,0հազ. դրամ, կնքված պայմանագիր՝ 7088,747հազ. դրամ, տնտեսում՝ 4911,253հազ. դրամ :

2) Թումանյան համայնքի Թումանյան քաղաքի 3-րդ փողոցի Նոր Միկրոշրջանի N4 բազմաբնակարան շենքի տանիքի վերանորոգման համար՝ 11500,0հազ.դրամ, կնքված պայմանագիր՝ 6679,167հազ. դրամ, տնտեսում՝ 4820,833հազ. դրամ:

Երկու օբեկտների շինարարական աշխատանքները ավարտված են:

Ընդամենը տնտեսում՝ 14546.486 հազ.դրամ:

ՀՏՀՀ-ի /ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ/ ծրագրով նախատեսված է իրականացնել շուրջ 3,5 մլրդ. դրամի շինարարական աշխատանքներ՝

(մլն. դրամ)

	Ծրագրի անվանումը	Ծրագրված գումարը	Փաստացի կատարվել է 2016թ	Ծանոթություն
1	Ալավերդու մանկատանեկան մարզադպրոցի ըմբշամարտի դահլիճի հիմնանորոգում	86.0	51.0	աշխատանքները սկսված են և կավարտվեն 2017թ.
2	Տաշիրի համայնքային կենտրոնի հիմնանորոգում	400.0	-	փորձաքննության փուլում է
3	Ալավերդու թիվ 4 դպրոցի հիմնանորոգում	192.0	-	փորձաքննության փուլում է
4	Ախթալայի թիվ 2 դպրոցի հիմնանորոգում	198.0	0	աշխատանքները սկսված են և կավարտվեն 2018թ.

5	«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ համաբուժարանի հիմնանորոգում	182.0	0	աշխատանքները սկսված են և կավարտվեն 2017թ.
6	Գյուլագարակում մանկապարտեզի կառուցում	200.0	25.0	աշխատանքները սկսված են և կավարտվեն 2018թ.
7	Նորաշենի համայնքային կենտրոնի վերանորոգում	53.0	-	փորձաքննության փուլում է
8	Լերմոնտովյի մանկապարտեզի վերանորոգում	66.0	66.0	աշխատանքները ավարտված են
9	Վանաձորի թիվ 11 մանկապարտեզի հիմնանորոգում	196.0	-	փորձաքննության փուլում է
10	Կաթնառատի դպրոցի շենքի հիմնանորոգում	370.0	-	փորձաքննության փուլում է
11	Վանաձորի թիվ 7 դպրոցի կառուցում	1600.0	-	պայմանագրի կնքման փուլում է
	Ընդամենը	3543.0	142.0	

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամով (ՀՏՀՀ) 2016թ. նախատեսված 3543.0 մլն դրամից փաստացի իրականացվել են 142.0 մլն դրամի աշխատանքներ, իսկ մնացած աշխատանքները կիրականացվեն 2017-2018թ.։ Այս ծրագրերի իրականացումը մեծ աջակցություն է մարզի համայնքներին։

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Մարզում գործում են 62 ներմարզային կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղիներ։ Այդ երթուղիների սպասարկումը մրցութային կարգով իրականացնում են 14 կազմակերպություններ։

Մարզում գործում է «Հարավկովկասյան երկաթուղու» Գյումրի-Այրում հատվածը՝ 12 կայարաններով։

Ներքաղաքային կանոնավոր փոխադրումներ իրականացվում են Վանաձոր, Ալավերդի և Սպիտակ քաղաքներում։ Ուղևորափոխադրում չի իրականացվում Լոռու մարզի 6 համայնքում (Դաշտադեն, Հովնանաձոր, Քարաբերդ, Կաճաճկուտ, Ծաղկաշատ, Ձորագյուղ)։

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ

Համաձայն ՀՀ կառավարության 2014թ. փետրվարի 13-ի N265-Ն որոշման, Լոռու մարզում ավտոմոբիլային ճանապարհների ցանցը կազմում է 891.1 կմ, այդ թվում ըստ նշանակության՝

- միջպետական 218.9 կմ
- հանրապետական 264.3 կմ
- մարզային (տեղական) 407.9 կմ

Մարզում կան՝

- կամուրջներ և կամրջային անցումներ 175 հատ
- ավտոմոբիլային թունելներ 5 հատ

2016թ. մարզում ճանապարհաշինության բնագավառում նախատեսվել են իրականացնել 16630.0 մլն դրամի աշխատանքներ, սակայն բոլոր աղբյուրներով փաստացի կատարվել են **3963.0** մլն դրամի աշխատանքներ։

1. Ավարտվել և շահագործման են հանձնվել Ագարակ-Օձուն-Մ-6 39.6 կմ երկարությամբ ճանապարհահատվածը, ինչպես նաև հարակից գյուղերի հետ կապող և գյուղամիջյան ճանապարհները, ընդհանուր արժեքը՝ 3500.0 մլն. դրամ (80%-ը 2.8 մլրդ. դրամ Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ, 20%-ը՝ 700 մլն. դրամ, պետական բյուջեի

ֆինանսավորմամբ), որից 2016թ.-ին ավարտական փուլի համար կատարվել են **230.0մլն դրամի** աշխատանքներ: Հանրապետական նշանակության ճանապարհահատվածների վերակառուցման արդյունքում բարելավվել է համայնքների միջև հաղորդակցության մակարդակը, նվազել է տրանսպորտային միջոցների վառելիքի ծախսը, կրճատվել է հաղորդակցության ժամանակը, ավելի դյուրին է դարձել գյուղատնտեսական մթերքների տեղափոխումը: Ճանապարհահատվածն ունի կարևոր նշանակություն, քանի որ այն հանդիսանում է այլընտրանքային ճանապարհ Մ-6 միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհի համար:

2. **Պերբյուջեի միջոցներով** (պատվիրատու՝ ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն) իրականացված աշխատանքներն են.

- Ավարտվել է Սպիտակ քաղաքի Առափնյա փողոցի ասֆալտապատումը, արժեքը՝ **37.0մլն. դրամ**
- Ավարտել և շահագործման է հանձնվել Մ-3 Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական ճանապարհի 137+200-կմ-141+000-կմ ճանապարհահատվածը, արժեքը՝ **82.4մլն. դրամ**
- Ընթացքի մեջ են Տաշիր քաղաքի Կրուպսկայա փողոցի կամրջի վերակառուցման աշխատանքները: Օբյեկտը փոխանցիկ է. 2016թ. կատարվել են **22.0մլն. դրամի** աշխատանքներ, 2017թ. բյուջեով նախատեսվել է 24.0մլն. դրամ

3. Մարզպետարանին հատկացված միջոցներով իրականացվել են մարզային նշանակության ա/ճանապարհների պահպանում և շահագործում՝ **75.0մլն. դրամ** ընդհանուր արժեքով, որից ձմեռային պահպանման համար՝ 30.0մլն. դրամ, ընթացիկ պահպանման համար՝ 45.0 մլն. դրամ

4. Կառավարության 14.07.2016թ. թիվ 737 որոշումով **16.0մլն. դրամ** է հատկացվել Ալավերդի, Շահումյան, Եղեգնուտ, Անտառամուտ, Դեբեդ, Թումանյան համայնքներին հորդառատ անձրևներից և կարկուտից վնասված ճանապարհների վերականգնման համար: Աշխատանքներն ավարտված են:

5. Համայնքային բյուջեի միջոցներով 74 համայնքներում իրականացվել են ներհամայնքային ճանապարհների վերանորոգման աշխատանքներ, արժեքը՝ **367.6 մլն. դրամ:**

6. Ընթացքի մեջ են Մ6-Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի առաջին փուլով նախատեսված հիմնանորոգման աշխատանքները, որոնց ընդհանուր արժեքը կազմում է 15.8մլրդ. դրամ: 2016թ. կատարվել են **3.0մլրդ. դրամի** աշխատանքներ: Առաջին փուլով վերականգնվող հատվածի ընդհանուր երկարությունը կազմում է 38.45կմ:

Երկրորդ փուլով նախատեսվող ճանապարհահատվածի երկարությունը կազմում է 51.74 կմ,որի մրցույթը կկայանա փետրվարին :

7. «Տաշիր» բարեգործական հիմնադրամի միջոցներով կատարվել են Տաշիր համայնքի կենտրոնական հրապարակի և հարակից մայրերի նորոգում և ասֆալտապատում, արժեքը՝ **133.0 մլն դրամ:**

**ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ**

Բնակչության կենսապահովման կարևոր բնագավառ է հանդիսանում բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության ոլորտը, ինչը համակարգում է մարզի բազմաբնակարան շենքերի կառավարումը և կոմունալ գործունեությունը, ապահովում կապը բնակչության, տեղական ինքնակառավարման մարմինների և մարզպետարանի միջև:

ՀՀ Լոռու մարզում առկա է 1736 բազմաբնակարան շենք 38557 բնակարանով, որոնց կառավարումն իրականացվում է համատիրությունների և համայնքի ղեկավարների միջոցով (համատիրություններ գործում են միայն Վանաձոր քաղաքում, դրանք թվով 62-ն են):

Ջրամատակարարում և ջրահեռացում

2017թվականի հունվարից «Վեոլիա Զուր» ընկերությունը պաշտոնապես դարձել է Հայաստանի Հանրապետության խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի միասնական օպերատորը առաջիկա 15 տարվա համար: «Վեոլիա Զուր» ՓԲԸ-ի «Արեւմուտք» տարածաշրջանի Լոռի տեղամասը Համայնքային ենթակառուցվածքների ծրագիր (ՀԵԾ-ի) փուլ III-ի շրջանակներում 2017թ.-ին նախատեսում է իրականացնել ջրամատակարարման համակարգերի վերակառուցման աշխատանքներ:

Ըստ համընդհանուր ծրագրի ղեկավար Բերնարդ Ֆիշերի կողմից ներկայացված նախնական հաշվետվության, 2017թ. սեպտեմբեր ամսվանից կմեկնարկեն 8-րդ ճնշումային գոտու և Վանաձոր համայնքի օղակաձեւ համակարգի շինարարական աշխատանքները՝ ակնկալվող գումարը կկազմի՝ 3.2-ից 3.3 մլն եվրո, շինարարության ժամանակահատվածը 15-16 ամիս:

Վանաձոր-Ալավերդի միջպետական ճանապարհաշինական ծրագրի և (ՀԵԾ)-ի միջև համագործակցության արդյունքում հավանական է, որ Վանաձոր համայնքի օղակաձեւ համակարգի շինարարական աշխատանքները սկսվեն ավելի վաղ՝ ապրիլ-մայիս ամիսների ընթացքում:

2016թ. մարզում ջրամատակարարման բնագավառում նախատեսվել և իրականացվել են 606.4մլն դրամի աշխատանքներ, այդ թվում՝

2016թ. ՀՀ ԿԱ «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» ՊՀ կողմից իրականացվել են հետեւյալ աշխատանքները

h/h	Օբյեկտի անվանումը	Ֆինանսավորում	կատարված աշխատանքներ (մլն. դրամ)
1	2	3	4
1	Դսեղ համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	Գյուղական կարողությունների ստեղծման ծրագրի միջոցներով /RACP/	138.0
2	Ճոճկան համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	Գյուղական կարողությունների ստեղծման ծրագրի միջոցներով /RACP/	30.3
3	Մեծ Այրում համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	Գյուղական կարողությունների ստեղծման ծրագրի միջոցներով /RACP/	27.2
4	Կաթնաջուր գյուղի ջրամատակարարման համակարգի բարելավում	Գյուղական կարողությունների ստեղծման ծրագրի միջոցներով /RACP/	178.7

5	Կաթնաջուր համայնքի արեւային էներգիայով ջրատաքացման համակարգի տեղադրում	Գյուղական կարողությունների ստեղծման ծրագրի միջոցներով /RACP/	2.4
6	Սվերդլով համայնքի ջրամատակարարման համակարգի վերակառուցում	<<Ենթակառուցվածքների եւ գյուղական ֆինանսական աջակցություն>> ծրագրի միջոցներով /IRFSP/	227.7
	Ընդամենը		604.4

«Հայ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի ֆինանսավորմամբ 2016թ. իրականացվել է.

- Ախթալա քաղաքի նախկին հիվանդանոցի հարեանությամբ անցնող կոյուղագծի հիմանորոգում – 2.0 մլն դրամ

Ջրամատակարարումը 2016թ. մարզում իրականացվել է «Հայջրմուղկոյուղի» և «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունների միջոցով և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: «Հայջրմուղկոյուղի» ՓԲ ընկերությունը սպասարկում է 38, «Լոռի ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ն՝ 16 համայնք: Սեփական ջրամատակարարման համակարգ ունեցող համայնքները 56-ն են (Լորուտ, Աթան, Ահնիձոր, Շամուտ, Քարինջ համայնքները խոշորացման արդյունքում միավորվել են Թումանյան քաղաքի հետ):

Լոռու մարզում Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում KFW բանկի ֆինանսավորմամբ իրականացվում է մարզի բնակավայրերի ջրամատակարարման եւ ջրահեռացման համակարգերի բարելավման աշխատանքներ: Ջրահեռացման ոլորտի միջոցառումների շնորհիվ զգալիորեն բարելավվել է իրավիճակը ջրահեռացման սեկտորում: «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում՝ Վանաձոր քաղաքում 2011-2015թթ. KFW Գերմանական վարկային ծրագրի ֆինանսավորմամբ իրականացվել են խմելու ջրի մատակարարման բարելավման աշխատանքներ՝ մոտ 9.8 մլն եվրո արժեքով:

Աղբահանություն

Մարզում համակարգված աղբահանություն իրականացվում է հիմնականում քաղաքային համայնքներում: Գյուղական համայնքներում հատուկ աղբամաններ չեն նախատեսվում, աղբահանությունը կատարվում է լոկալ ձեռով, չկան պահանջվող նորմերին համապատասխան աղբավայրեր, չկան նաեւ աղբավայրերից կեղտաջրերի ֆիլտրացման համակարգեր (բացառությամբ Ալավերդի քաղաքի):

«Կոշտ կենցաղային աղբի համակողմանի կառավարման հայեցակարգ»-ը, որն իրականացվում է Հայ-Գերմանական ֆինանսական համագործակցության շրջանակներում, որպես Գերմանական զարգացման բանկի (KFW-ի) աջակցություն՝ ուղղված կոշտ կենցաղային թափոնների համակողմանի կառավարման համակարգի (ԿԿԹՀԿ) ստեղծմանը 2017թ.-ից գործնական հարթության վրա է:

2017թ. նախատեսվում է վարկային և դրամաշնորհային պայմանագրերի կնքում, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման /ՇՄԱԳ/ և փորձաքննության հաստատում, ենթակառուցվածքների ստեղծում:

Նախնական կանխատեսմամբ 2019-2020 թվականներին Վանաձորը կունենա ժամանակակից աղբահանման և սանիտարական մաքրման մեքենաներ ու սարքավորումներ, ինչպես նաև եվրոպական չափանիշներին համապատասխան տեսակավորող աղբահավաք

տարողություններ: Դրան զուգահեռ կսկսվի նոր աղբավայրի շինարարության և ենթակառուցների ստեղծման աշխատանքները:

2016թ. ֆիզիկական եւ իրավաբանական անձանց կենցաղային աղբահանության վարձավճարի տվյալները հետեւյալն էր.

- նախատեսված էր գանձել 175. 4 մլն դրամ գումար, փաստացի գանձվել է 191.0 դրամ (այն կազմում է նախատեսված գումարի 108,9%-ը եւ 21.2%-ով գերազանցում է 2015թ. ցուցանիշը):

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԷՆԵՐԳԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Գազամատակարարման եւ էլեկտրամատակարարման բնագավառում իրականացվել են 431.7մլն դրամի աշխատանքներ:

Գազամատակարարում

Լոռու մարզի՝ 107 համայնքների 8 քաղաքային եւ 99 գյուղական, բաշխված են 5 տարածաշրջանների մեջ: Առ 01.01.2017թ. դրությամբ մարզում առկա է գազաֆիկացված 83 (77.5%) եւ չգազաֆիկացված 24(22.5%) համայնք:

Առ 01.01.2017թ. դրությամբ Լոռու ԳԳ մասնաճյուղի սպասարկման տարածքում գազամատակարարումը վերականգնված և նոր գազաֆիկացված բնակավայրերում առկա է թվով **64549** բաժանորդ, 30018 բնակարան և 34531 առանձնատուն, որից թվով 30595-ը Վանաձոր քաղաքում: 2016թ. ընթացքում բաժանորդների թվաքանակը աճել է 431-ով, այդ թվում՝ 241 բնակարան եւ 190 առանձնատուն:

Հաշվետու ժամանահատվածում ոչ պետական միջոցներով մարզում իրականացվել են **133.3** մլն. դրամ ընդհանուր արժեքով գազամատակարարման աշխատանքներ՝ դրանք են.

- մասնաճյուղի սպասարկման տարածքի մի շարք համայնքներում միջին և ցածր ճնշման գազատարերի վթարային հատվածների վերատեղադրում, փոխարինում և մեկուսիչ ծածկույթի վերանորոգում.
- Բնակիչ-բաժանորդների ներտնային գազահամակարգերում անվտանգության սարքերի տեղադրում.
- 2 ՌԳ մակնիշի գազահաշվիչները 'Kypc-01' մակնիշի անդրաձայնային գազահաշվիչներով փոխարինում.
- Թվով 431 բնակարանների, առանձնատների և 39 հիմնարկ-ձեռնարկությունների գազաֆիկացում:

Էներգամատակարարում

ՀՀ Լոռու մարզում էլեկտրաէներգիայի մատակարարումն իրականացնում է «ՀԷՏ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղը, որի սպասարկման տարածքի բնակավայրերում առ 01.01.2017թ. դրությամբ առկա է շուրջ 95 251 բաժանորդ:

2016թ.-ի ընթացքում «ՀԷՏ» ՓԲԸ «Դեբեդ» մասնաճյուղի կողմից մարզում իրացվել է 178896.8 հազ. կՎտժ էլ.էներգիա, որից 114363.7 հազ. կՎտժ-ը բնակչությանը, ինչի համար անհրաժեշտ էր գանձել 79.4 մլն դրամ, փաստացի գանձվել է 79.3 մլն դրամ, (99.8%):

Հաշվետու ժամանահատվածում ոչ պետական միջոցներով մարզում իրականացվել են էլեկտրամատակարարման աշխատանքներ՝ 298.4 մլն դրամ, որից.

«ՀԷՏ» ՓԲ ընկերության կողմից կատարվել է շուրջ **228.9 մլն** դրամի ներդրում.

- Նոր բաժանորդների միացման աշխատանքներ
- Տրանսֆորմատորային ենթակայանների տանիքների և հիմնանորոգման աշխատանքներ
- Օդային և մալուխային գծերի հիմնանորոգում

Թվով 22 համայնքապետարանների ֆինանսավորմամբ իրականացվել են լուսավորության համակարգերի կառուցման և բարելավման աշխատանքներ՝ **69.5 մլն** դրամի:

Կապ

ՀՀ Լոռու մարզում բջջային հեռախոսակապի ծառայություններ են մատուցում երեք օպերատորներ՝ «ԱրմենՏել», «Ղ-ՏԵԼԵԿՈՄ» և «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ները: «ԱրմենՏել» ՓԲԸ Լոռու մարզում տեղակայված ավտոմատ հեռախոսակայանների միջոցով մատուցում է նաև ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: Ֆիքսված հեռախոսակապի պահանջարկը բավարարված է՝ կայանների ընդհանուր ունակությունը կազմում է 47,680 հեռախոսահամար, ներկայում բաժանորդների քանակը՝ 28,000 (CDMA ռադիոկապի բազային կայաններ տեղադրված են Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր, Ալավերդի քաղաքներում, ընդհանուր ունակությունը՝ 23,100 հեռախոսահամար, բաժանորդների քանակը՝ 3,400):

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բուսաբուծություն

ՀՀ Լոռու մարզի գյուղատնտեսական հողատեսքերը 2016 թվականի դրությամբ

	(հեկտար)					
	Գյուղ. նշանակության հողեր, ընդամենը	Վարելահողեր	Բազմամյա տնկարկներ	Խոտհարքներ	Արոտներ	Այլ հողատեսքեր
Լոռու մարզ	251053.9	42089.4	420,7	35110.4	145650.8	27782.6

Մարզում. ցանքատարածությունները կազմել են

- 2012թ. – 23612 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 56 %-ը
- 2013թ. – 27238 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 64.7 %-ը
- 2014թ. – 28650.7 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 68 %-ը
- 2015թ. – 31620.5 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 75 %-ը
- 2016թ. – 33181.0 հա կամ օգտագործվել է ընդհանուր տարածքի 78.8 %-ը

Լոռու մարզում 2016թ. կատարված գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի համեմատականը 2015թ. հետ

h/h	Մշակաբույսը	2015թ.	2016թ.	համեմատականը	
		ցանքը հա	ցանքը հա	ցանքը	
				հա	%
1	Ընդամենը հացահատիկ, որից՝	13436.0	14506.0	+1070.0	+7.9
2	Կարտոֆիլ	4278.0	4613.0	+335.0	+7.8
3	Բանջարաբոստանային մշակաբույսեր	1605.0	1821.0	+216.0	+13.4
4	Տեխնիկական մշակաբույսեր	396.0	577.5	+181.5	+45.8
5	Ընդամենը ցանքեր (բերքի տակ)	31620.5	33182.6	+1562.1	+4.9
6	Կատարվել է աշնանացան	10884.0	9260.0	-1624	14.9

Լոռու մարզում 2016թ. գյուղատնտեսական մշակաբույսերից ստացված բերքի համեմատականը 2015թ-ի հետ

h/h	Մշակաբույսը	2015թ.	2016թ.	համեմատականը
		բերքը	բերքը	բերքը

		տ	տ	տ	%
1	Ընդամենը հացահատիկ և հատիկաբնիկներ	47121.8	47874.6	+752.8	+1.6
2	Կարտոֆիլ	75863.7	74267.7	-1596	-2.0
3	Բանջարաբուստանային մշակաբույսեր	30654.7	33736.7	+3082	+10.0
4	Կուտակվել է խոտ	128639	126232	-2407	-1.8
5	Տեխնիկական մշակաբույսեր	318.1	1313.8	+995.7	+313
6	Պտուղ և հատապտուղ	2453.2	1579.4	-873.8	-35.0

• Գյուղատնտեսական համախառն արտադրանքի տեսակարար կշիռը (2012թ.) 7.1 %, որը կազմել է 59.7 մլրդ դրամ, (2013թ.) 7.2 %, որը կազմել է 67.3 մլրդ դրամ, (2014) 7.4%, որը կազմել է 73.7 մլրդ դրամ, (2015թ.) 7.3%, որը կազմել է 73.3 մլրդ դրամ:

• Լոռու մարզում մեկ շնչի հաշվով համախառն գյուղատնտեսական արտադրանքը կազմում է 328.4 հազ. դրամ:

2016թ. ընթացքում գյուղատնտեսական աշխատանքների համար մատչելի գներով պարարտանյութերի, դիզելային վառելանյութի և սերմացուների ձեռքբերման նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում ՀՀ կառավարության կողմից մարզին հատկացվել է.

• 2316.2 տ, ազոտական, 60.4տ ֆոսֆորական, 42.35 տ կալիումական պարարտանյութեր և 648.352 լիտր դիզելային վառելանյութ

• 70 տ գարու, 2.15 տ եգիպտացորենի, 3.0 տ առվույտի և 18.0 տ կորնզանի սերմացուներ

• 2016 թվականի աշնանացանի համար մարզի ֆերմերներից պայմանագրային հիմունքներով համայնքներին տրամադրվել է 70 տոննա աշնանացան ցորենի առաջին վերարտադրության սերմացու:

• Լոռու մարզի Ճոճկան, Մեծ Այրում և Շնող համայնքներում մարտի 20-ին տեղացած ձյան և լույս 21-ի գիշերը ջերմաստիճանի կտրուկ նվազման հետևանքով ցրտահարվել է 61.5 հա այգիներ, պատճառված վնասը կազմել է 152 մլն դրամ:

• Լոռու մարզի Մեծ Այրում, Շնող և Ճոճկան համայնքներում սույն թվականի հունիսի 5-ին և հունիսի 15-ի լույս 16-ի գիշերը Արդվի, Ասևաձագ, Ծաթեր, Մղարթ և Խնկոյան համայնքներում տեղացած ուժգին կարկուտի, հորդառատ անձրևի և քամու հետևանքով վնասվել է 793 հա ցանքատարածություններ և պտղատու այգիներ, պատճառված վնասը կազմել է 274 մլն դրամ:

• Համայնքային բյուջեյի միջոցներով Ճոճկան, Մեծ Այրում և Մեղովկա համայնքներում տեղադրվել է ընդհանուր առմամբ 7 հակակարկտային կայաններ՝ Ճոճկան 3 հատ, Մեծ Այրում 3 հատ և Մեղովկա 1 հատ, որոնց ընդհանուր արժեքը կազմել է 20.2 մլն դրամ:

• ԱՄՆ ՄԶԳ կողմից ֆինանսավորվող և Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ-ի կողմից իրականացվող «Գործընկերություն՝ հանուն գյուղական համայնքների բարգավաճման» ծրագրի «Փոքր ենթակառուցվածքների զարգացում» բաղադրիչի շրջանակներում Կուրթան համայնքում կառուցվել է 370 մ² չափերով հացահատիկի զտման կենտրոն: Ծրագրի կողմից ներդրման արժեքը կազմում է 16.44 մլն դրամ, իսկ համայնքի կողմից ներդրման արժեքը 1.67 մլն դրամ, ընդհանուր առմամբ 18.11 մլն դրամ:

• Մկնանման կրծողների դեմ պայքարի միջոցառումները կազմակերպելու համար ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից մարզին հատկացվել է 848.7 կգ «Ռոդիֆակում Ս» տեսակի մկնասպան միջոց, որը բաշխվել է գյուղնախարարության կողմից անցկացված մոնիտորինգի հիման վրա հաստատված մարզի 58 համայնքների: Պայքարի միջոցառումները իրականացվել է 10609 հա-ի վրա:

Անասնաբուծություն և իրականացվող գյուղատնտեսական ծրագրեր

Լոռու մարզպետի 14-ը դեկտեմբերի 2015թ. թիվ 316 կարգադրության համաձայն վերահսկվել է Լոռու մարզի համայնքներում և բոլոր կարգի տնտեսություններում 2016թ. հունվարի 1-17-ը անցկացված անասնազխաքանակի հաշվառման գործընթացը:

**Լոռու մարզի 2016թ-ի անասնազխաքանակի համեմատականը 2015թ-ի նկատմամբ
(հունվարի 1-ի դրությամբ)**

h/h	Անվանում	2015թ. գլուխ	2016թ. գլուխ	Համեմատական	
				գլուխ	%
1	Խոշոր եղջերավոր կենդանիներ, որից կովեր	81 003 39 694	81 769 40 864	+766 +1170	+0.94 +2.94
2	Մանր եղջ. կենդ.	38 252	37 919	-333	-0.87
3	Խոզեր	10 952	15 358	+4406	+40.2
4	Թռչուններ	155 227	273 086	+117 859	+75.9
5	Մեղվաբնտանիք	24 303	25 512	+1209	+4.97

Լոռու մարզի անասնաբուժական մթերքների արտադրությունը 2016թ. հունվար-սեպտեմբեր ամիսների համեմատականը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի հետ բերված է ստորև աղյուսակում *

h/h	Անվանումը	Չափի միավոր	2016թ հունվար- սեպտեմբեր	2015թ. հունվար- սեպտեմբեր	Համեմատական	
					քանակային	%
1	Կաթ	տոննա	80 900	77500	+3400	+4.4
2	Միս	տոննա	8 200	7000	+1200	+17.1
3	Ձու	մլն. հատ	44.7	43.1	+1.6	+3.7

*վիճակագրական ծառայության կողմից 2016թ. անասնաբուժական մթերքների արտադրության տվյալները տարվա կտրվածքով դեռևս ամփոփված չեն:

2016թ.-ին «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» ծրագրի շրջանակներում կատարվել են հետևյալ աշխատանքները.

✓ Գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվներ են կազմավորվել մարզի Միխայլովկա և Շահումյան համայնքներում: Ընթացքի մեջ է՝ Զրաշեն, Գոգարան և Ալավերդի համայնքներում կոոպերատիվների ձևավորման աշխատանքները:

✓ Տրմադրվել է՝ Մեծավան, Հարթագյուղ, Սարամեջ և Միխայելովկա համայնքներին 19 միավոր գյուղատնտեսական տեխնիկա: Մեծ Պարնի համայնքին՝ ՈՒԱՀ-390945-460 մակնիշի գազաբալոնային համակարգով բեռնատար ավտոմեքենա (1 հատ):

✓ Շինարարական աշխատանքներ են կատարվել՝ Լեռնանցք, Հարթագյուղ և Սարամեջ համայնքներում:

Հայաստանի Հանրապետությունում 2007-2016 թվականների տավարաբուծության զարգացման ծրագրի» շրջանակներում 2016թ. մարզի Սպիտակ, Ստեփանավան և Դսեղ համայնքներ են ներկրվել 248 գլուխ շվից և հոլշտին ցեղերի տոհմային երինջներ, որոնք տարածամկետ վճարման պայմանով հատկացվել են 3 տնտեսավարող սուբյեկտների:

Գյուղի Զարգացման Արդի Նախաձեռնությունը (ԱՐԴԻ) ծրագրի շրջանակներում, որը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից, իրականացվել է.

✓ Շնող համայնքում՝ ավարտվել են մրգի սառնարանի շինարարական աշխատանքները: Այն միաժամանակ 49 տ միրգ կարող է պահպանել: Ընդհանուր առմամբ այն

զբաղվածություն կապահովի 46 ֆերմերի համար իսկ մշտական աշխատանք՝ 3 գյուղացու համար: Ծրագրի բյուջեն կազմել է 12 991 011 դրամ:

✓ Մեծ Այրում համայնքում՝ ավարտվել են մրգի սառնարանի շինարարական աշխատանքները: Այն միաժամանակ 40 տ միրգ կարող է պահպանել: Ընդհանուր առմամբ այն զբաղվածություն կապահովի 36 ֆերմերի համար իսկ մշտական աշխատանք՝ 3 գյուղացու համար: Ծրագրի բյուջեն կազմել է 12 509 339 դրամ:

✓ Եղեգնուտ, Լորուտ և Մեծ Պարնի համայնքներում՝ իրականացվել են կաթի հավաքման կետերի վերանորոգման աշխատանքներ: Յուրաքանչյուր ունի տարեկան 510տ. կաթ հավաքելու և վաճառելու կարողություն: Կաթի հավաքման կետը կսպասարկի 70-80 ֆերմերների և կհանդիսանա 3 մարդու երկարաժամկետ զբաղվածության աղբյուր: Ծրագրի բյուջեն կազմել է 63 773 779 դրամ:

✓ Շամուտ, Լորուտ, Աթան, Կաթնաջուր, Լուսաղբյուր և Ծաղկաբեր համայնքներում՝ իրականացվել են կենդանիների 21 ջրախմոցների կառուցման աշխատանքներ: Արդյունքում նշված համայնքներում ակնկալվում է անասնազվաքանակի 20% աճ, կաթի արտադրության 13% աճ, մսամթերքի արտադրություն 13% աճ: Ծրագրի բյուջեն կազմել է 56 402 339 դրամ:

Ծրագրի շրջանակներում ընթացքի մեջ են Եղեգնուտ և Լորուտ համայնքներում կաթի հավաքման կետերի վերանորոգման աշխատանքները, ինչպես նաև Շամուտ, Լորուտ և Աթան համայնքներում գյուղ. կենդանիների ջրախմոցների կառուցման աշխատանքները (Շամուտ և Աթան համայնքներում՝ 2-ական, իսկ Լորուտ համայնքում՝ 4 ջրախմոցներ):

- «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում վերակառուցվել է Դսեղ համայնքի ոռոգման ջրագիծը: Վերակառուցման աշխատանքների իրականացման համար կատարվել է շուրջ 94.0 մլն դրամ ներդրում, որից, 4.70 մլն դրամը (5%-ը)՝ համայնքի կողմից:

- «Գետիկ» ԶՕԸ-ի սպասարկման տարածքում պետական բյուջեի միջոցներով վերանորոգվել է Կաթնաջուրի ոլորակետը: Վերանորոգման աշխատանքների իրականացման համար պետբյուջեից կատարվել է շուրջ 2.1 մլն դրամ ներդրում:

- ԱՄՆ-ի ՄԶԳ-ի ֆինանսավորմամբ «Հայաստանի Ֆուլեր տնաշինական կենտրոն» ԲՀԿ-ի և «Էյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» կազմակերպության կողմից ճոճկան համայնքում՝ իրականացվել է 1,220մ երկարությամբ ոռոգման ջրագծի վերականգնողական աշխատանքներ: Ծրագիրը կօգնի 34 հա լրացուցիչ հողային տարածքի ոռոգմանը: Ծրագրի բյուջեն կազմել է շուրջ 13 մլն դրամ:

Բնապահպանություն

Լոռու մարզի անտառային պետական ֆոնդը կազմում է 101205 հա, որից անտառածածկ է 85799 հա-ը: Անտառային ֆոնդը կազմում է մարզի տարածքի շուրջ 27%-ը:

- 2016թ. ընթացքում պլանային և այլ հատումները կազմել են 10826մ³, այդ թվում՝ այլ հատումներ՝ 1560մ³:

- 2016թ. ընթացքում մթերվել է 9910մ³ թափուկ վառելափայտ:

- 2016թ. ընթացքում Ոստիկանության Լոռու մարզային վարչության կողմից կատարվել է 741 ստուգայց, հայտնաբերվել են ապօրինի անտառհատումների, փայտանյութի տեղափոխման և իրացման 63 դեպք, հայտնաբերված փայտանյութի քանակը՝ 321.08մ³: Հարուցվել է 10 քրեական գործ, վարչական պատասխանատվության են ենթարկվել 30-ը:

- Լոռու մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում 2016թ. ընթացքում հայտնաբերված ապօրինի հատումները կազմել են 356 ծառ – 237 խտացված խոր.մ ընդհանուր ծավալով:

- Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի շահագործման հետ կապված, ըստ հաստատված բնապահպանական ծրագրի 2016թ. աշնանը «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում իրականացվել է 20.4 հա տարածքի ցանկապատման և անտառտնկման աշխատանքներ:

Նույն ծրագրի շրջանակներում 2017թ. «Գուգարքի անտառտնտեսություն» մասնաճյուղի տարածքում նախատեսվում է ևս 62 հա անտառտնկման աշխատանքներ:

Թեղուտի ծրագրի շրջանակներում 2016թ. իրականացվել է 2015թ. աշնանը Շնող համայնքում 10 հա տարածքի վրա հիմնված պտղատու այգիների խնամքի և լրացման աշխատանքներ (արքայանարինջ 6.2 հա, կեռաս 1.9 հա, խնձոր 1.4 հա, դեղձ 0.5 հա): 2017թ. նախատեսվում է ևս 10 հա պտղատու այգիների հիմնում:

Մարզպետարանի միջնորդությամբ Լեռնապատ, Քարածոր և Ղուրսալի համայնքներին թույլատրվել է համայնքներին հարակից անտառային տարածքներում իրականացնել կոճղաշիվային վերաճի օժանդակման աշխատանքներ, որից առաջացած փայտանյութը անվճար հատկացվել է ազգաբնակչությանը:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի համաձայնությամբ 2016թ. գարնանը Թեղուտի հանքավայրի անտառաձածկի հատումից առաջացած փայտանյութից 50% զեղչ գնով՝ 1մ³-6000 դրամով, մարզի համայնքներին հատկացվել է վառելափայտ:

2016թ. գարնանը շաբաթօրյակների միջոցով կանաչապատման աշխատանքներ իրականացնելու համար մարզի 9 համայնքների, 27 դպրոցների և տարբեր հիմնարկ-ձեռնարկությունների մարզպետարանի կողմից տրամադրվել է «Հայանտառ» ՊՈԱԿ-ի տնկարաններից օգնության կարգով ստացված վայրի տանձի, խնձորի, ընկույզի և կաղնու շուրջ 4000 տնկիներ:

Ընդհանուր առմամբ 2016թ. ընթացքում մարզում իրականացվել է շուրջ 53.4 հա տարածքի ցանկապատման և անտառտնկման աշխատանքներ:

Ընթացքի մեջ է ՀՀ կառավարության, UNDP և GEF միջազգային կազմակերպությունների նախաձեռնությամբ Լոռու և Տավուշի մարզերում «Հողերի և անտառների կայուն կառավարման ներդրումը Հյուսիս-արևելյան Հայաստանի չոր լեռնային լանդշաֆտներում» ծրագիրը:

Ծրագրի շրջանակներում 2017թ. ընթացքում նախատեսվում է .

- Օձուն համայնքում 90 հա տարածքի վրա կոճղաշիվային վերաճի օժանդակում:
- «Հայանտառ» ՊՈԱԿ-ի Գուգարքի և Եղեգնուտի անտառտնտեսությունների գույքագրման և անտառկառավարման պլանների մշակման աշխատանքներ:

Ծրագրի տևողությունը՝ 48 ամիս (2016-2018թթ.):

Ընդերքօգտագործում և շրջակա միջավայր

Լոռու մարզը հարուստ է տարբեր տեսակի օգտակար հանածոներով և իր նշանակությամբ երկրորդն է Հայաստանի Հանրապետությունում:

Մարզի տարածքում հանքարդյունահանման աշխատանքներ են իրականացնում շուրջ 35 կազմակերպություններ, որոնցից 4-ը իրականացնում են մետաղական հանքավայրերի շահագործում (շահագործվում է Շամլուղի պղնձի, Թեղուտի պղինձ-մոլիբդենային և Մղարթի ու Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրերը):

Մարզի հանքարդյունաբերական կենտրոններում (Ալավերդի, Թեղուտ, Արմանիս, Ախթալա) պարբերաբար անց են կացվում լեռնարդյունաբերական գործունեության հետևանքով առաջացող ռիսկերի գնահատման և դրանց մեղմացմանն ուղղված հանդիպում-քննարկումներ: Հանդիպումներին մասնակցում են թիրախային համայնքների ղեկավարներ, ակտիվ քաղաքացիներ, ՀԿ-ների, ՋԼՄ-ների, պետական կառույցների, ինպես նաև հիմնարկ-ձեռնակությունների և այլ շահառու կողմերի ներկայացուցիչներ:

Ստորև ներկայացվում է վերջին 4 տարիների ընթացքում ՀՀ պետական բյուջեի կողմից բնապահպանական և առողջապահական ծրագրեր իրականացնելու համար Լոռու մարզի վնասակար ազդեցության ենթարկվող համայնքներին տրամադրված գումարների վերաբերյալ տվյալները.

(հազ. դրամ)

Համայնքներ	Տարիները
------------	----------

	2013	2014	2015	2016	2017- նախատեսված
Ալավերդի	110 000.0	120 000.0	94 097.0	-	29 757.0
Հաղպատ	25 000.0	27 000.0	27 081.1	-	3 155.4
Օձուն	58 664.8	12 498.4	7 403.5	47 918.2	19 806.2
Աքորի	28 000.0	30 000.0	20 173.5	-	24 903.2
Հազվի	50 000.0	30 000.0	-	-	30 051.1
Ախթալա	3 500.0	4 500.0	-	4 588.2	-
Շնող					2 120.0
Ճոճկան					1 192.0
Մեծ Այրում					682.3
Ընդամենը	275 164.8	223 998.4	148 755.1	52 506.4	111 667.2

Առաջարկություն է ներկայացվել ՀՀ բնապահպանության նախարարություն, որպեսզի Լոռու մարզից ևս մի քանի համայնքներ ընդգրկվեն վնասակար ազդեցության ենթարկվող համայնքների ցանկում: Ակնկալվող բնապահպանական նպատակային գումարները էապես կնպաստեն ազգաբնակչության առողջության և շրջակա միջավայրի պահպանման գործում:

Ընթացքի մեջ է Հայ-Գերմանական Ֆինանսական Համագործակցության շրջանակներում «Կոշտ կենցաղային աղքի համակողմանի կառավարման հայեցակարգ, ք. Վանաձոր» ծրագիրը: Ծրագիրը ենթադրում է Լոռու մարզում կառուցել եվրոպական չափանիշներին համապատասխան աղբավայրեր, որոնք կսպասարկեն Լոռու մարզն ամբողջությամբ:

Ալավերդու քաղաքապետարանի պատվերով իրականացվել են Ալավերդու մկնդեղի թափոնակուտակիչի ռիսկերի մեղմանն ուղղված և այն հետագայում անվտանգ վիճակի բերելու միջոցառումների նախագծա-նախահաշվային աշխատանքները:

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը «Հանքարդյունաբերական շրջակա միջավայրի անկախ մշտադիտարկում» ծրագրի շրջանակներում» մարզի Ալավերդի, Ախթալա և Ստեփանավան (Արմանիս) համայնքների որոշ մանկապարտեզների և դպրոցների բակերում իրականացրել է հողի և խմելու ջրի նմուշներում ծանր մետաղների կոնցենտրացիաների վերաբերյալ հետազոտում:

Հետազոտությունների արդյունքներն ուղարկվել է շահագրգիռ համայնքներին և հանձնարարվել, որպեսզի մանրամասն ուսումնասիրեն ու առաջիկայում պետական, համայնքային կամ այլ ֆինանսական միջոցներով իրականացնեն թիրախային մանկապարտեզների և դպրոցների բակերի ասֆալտապատման կամ բետոնապատման աշխատանքներ, որպեսզի հնարավորինս նվազեցվի և չեզոքացվի ծանր մետաղների վնասակար ազդեցությունը մատաղ սերնդի առողջության վրա:

Բնապահպանության բաժինը «Բնապահպանական փորձաքննություն» ՊՈԱԿ-ի, այլ շահագրգիռ կառույցների հետ համատեղ կազմակերպել և ակտիվ մասնակցություն է ունեցել բնապահպանության ոլորտին առնչվող մի շարք սեմինարների, գիտաժողովների և կոնֆերանսների աշխատանքներին: Նշենք դրանցից առավել կարևորները.

- «Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշենի մաքսային կետ» (Մ6) ավտոմայրուղու վերակառուցման աշխատանքների վերաբերյալ հասարակական լուսմներ:
- «Կովկասյան էլեկտրահաղորդման ցանց» ծրագրի շրջակա միջավայրի վրա և սոցիալական ազդեցության նախնական գնահատման վերաբերյալ հանրային քննարկում:
- Ալավերդու պղնձաձուլական գործարանի արտանետումների վերաբերյալ հանդիպում-քննարկում Լոռու մարզպետարանում:
- Վանաձոր քաղաքում սանէպիդկայանի նոր մարզային լաբորատորիայի կառուցման նախնական գնահատման հայտի վերաբերյալ շրջակա միջավայրի վրա ազդեցության հանրային քննարկում:

- Վանաձորի քմիական գործարանի թափոնակուտակիչի պարունակությանն ու պահպանությանը նվիրված հանդիպում-քննարկում և այլն:

ՀՈՂԱՇԽՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

2016 թվականի ընթացքում վարչական հսկողություն է իրականացվել մարզի 33 համայնքներում: Հայտնաբերված խախտումները համայնքների ղեկավարների ներկայությամբ քննարկվել են մարզի համապատասխան տարածաշրջանի պատասխանատու փոխմարզպետի մոտ, համայնքների ղեկավարներին տրվել են ցուցումներ խախտումները և թերությունները վերացնելու վերաբերյալ, ինչպես նաև տարվել են համապատասխան վերահսկողական աշխատանքներ հետագայում նմանատիպ խախտումները և թերությունները բացառելու ուղղությամբ: <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ կետի, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության կողմից ս/թ օգոստոսի 1-12-ը ներառյալ ՀՀ Լոռու մարզի Դարբաս, Գուգարք, Օձուն, Արդվի, Կուրթան, Բովաձոր, Լոռի Բերդ, Ռիւսասար, Յաղդան, Ձորամուտ, Բլագոդարնոյե, Լեռնավան, Ջրաշեն համայնքներում իրականացված տեսչական ստուգումների շրջանակներում Օձուն, Բովաձոր, Ձորամուտ, Բլագոդարնոյե համայնքների ղեկավարներին տրվել է ցուցում ակտում արձանագրված թերությունները վերացնելու իսկ Դարբաս, Գուգարք, Ռիւսասար, Լոռի Բերդ, Ջրաշեն, Կուրթան, Յաղդան, Արդվի, Լեռնավան համայնքների ղեկավարներին, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետի 05.10.2016թ. N06 որոշմամբ վարչական պատասխանատվության ենթարկելու մասին առաջարկությունը ընդունվել է վարչական վարույթ, որի վերաբերյալ կկայացվի համապատասխան որոշում:

2016թ. կազմվել և ժամանակավոր սխեմաների միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել Մարգահովիտ, Սարատովկա, Դեբետ, Լոռի Բերդ, Ամրակից, Լեռնահովիտ, Նովոսելցով, Գարգառ, Արևաշող, Ճոճկան համայնքների հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաները և ջրամատակարարման ընկերությունների հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխման առաջարկությունները՝ Սարատովկա, Սպիտակ, Դարպաս, Շիրակամուտ, Կաթնաջուր, Մեծ Պարնի, Ջրաշեն, Ղուրսալի, Վահագնի, Անտառամուտ, Լեռնապատ, Գուգարք, Գոգարան, Շահումյան, Հալավար, Ամրակից, Կուրթան, Վարդաբլուր, Նովոսելցով, Լեռնավան և Բագում համայնքներում, որոնք միջգերատեսչական հանձնաժողովի կողմից ստացել են դրական եզրակացություն: Հողամասերի կատեգորիաների փոփոխություններից համայնքների բյուջեներ է մուտքագրվել շուրջ 86.25 մլն ՀՀ դրամ:

2016թ. կազմվել և միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել Վանաձոր, Տաշիր, Ալավերդի, Թումանյան համայնքների բնակավայրերի գլխավոր հատակագծերում առանձին հողամասերի նպատակային նշանակության առաջարկությունները, որոնք ստացել են դրական եզրակացություն:

2016թ. մարզի համայնքներում օտարվել է 95 միավոր հողամաս 16.6 հեկտար մակերեսով: Աճուրդների մեկնարկային գները սահմանվել է կադաստրային արժեքներով կամ գերազանցել է այն: 2016թ. հողամասերի աճուրդներից համայնքների բյուջե է մուտքագրվել շուրջ 45 միլիոն ՀՀ դրամ:

Հաշվետու ժամանակահատվածում մարզի համայնքներում իրականացված հողերի աճուրդային վաճառքի արդյունքում ձևավորված գումարը կազմել է Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 378 %-ը:

• <<Համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության կառուցապատման իարվունքով տրամադրումը և

օտարման կարգի հաստատելու մասին»» Հայաստանի Հանրապետության կառավարության 2010թ. հունվարի 14-ի թիվ 16-Ն որոշմամբ սահմանված կարգով համաձայնություն է տրվել մարզի համայնքներում գյուղատնտեսական նշանակության հողամասերի վարձակալության իրավունքով տրամադրման և օտարման հողաշինարարական գործերին:

- Օտարվել է 5.963հա պետական սեփականության հողամաս 13.052մլն. ՀՀ դրամով
- Վարձակալության է տրամադրվել 3624.1 հա պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողամաս 8.6մլն. ՀՀ դրամ վարձավճարով:
- 2016թ. վարձակալության տրամադրման համար նախատեսված 66769.5հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերից փաստացի վարձակալության է հանձնվել 38076.2հա 141011.2հազ. դրամ վարձավճարով, փաստացի գանձվել է 136059.1հազ. դրամ վարձավճար: Լոռու մարզի համայնքների կողմից հողերի վարձակալությամբ տրամադրման վարձավճարների հավաքագրումը կազմել է 96.5% :
- ՀՀ կառավարության 2000թ. հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշման համաձայն կազմվել և ժամանակին ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե և ՀՀ գյուղատնտեսության նախարարություն է ներկայացվել մարզի հողային հաշվեկշիռը 2016թ. հուլիսի 1-ի դրությամբ:

Լոռու մարզի հողային հաշվեկշռի համաձայն մարզի վարչական տարածքը կազմում է 379864.5 հա, որից գյուղատնտեսական նշանակության 251053.9 հա, Բնակավայրերի՝ 16483.8 հա, Արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ 3988.2 հա, Էներգետիկայի կապի տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր՝ 1579.1 հա, Հափուկ պահպանվող տարածքների հողեր՝ 2399.3 հա, Հափուկ նշանակության՝ 1215.4 հա, Անտառային՝ 100538.0 հա, Զբոսային՝ 2606.9 հա:

Գյուղատնտեսական նշանակության՝ 251053.9 հա հողերից, որից վարելահող 42089.4 հա, բազմամյա տնկարք 420.7 հա, խոտհարք 35110.4 հա, արոտ 145650.8 հա, այլ հողատեսք 27782.6 հա փաստացի օգտագործվում է, 79117.5 հա, որից վարելահող 31387.5 հա, բազմամյա տնկարք 323.3 հա, խոտհարք 18547.6 հա, արոտ 27640.95 հա, այլ հողատեսք 589.3 հա:

Չօգտագործվող գյուղատնտեսական նշանակության հողամասերը կազմում են 172565.25 հա 68%, որից վարելահող 10701.9 հա 25%, բազմամյա տնկարք 97.4 հա 23% խոտհարք 16562.8 հա 45.8%, արոտ 118009.85 հա 81%, այլ հողատեսք 27302 հա 97.8%:

Օժանդակվել է համայնքների 148 միավոր ջրամատակարարման համակարգերի գույքի և զբոլեցրած հողամասերի պետական գրանցման, հողամասերի նպատակային նշանակության փոփոխման և դրանք ջրամատակարար ընկերություններին հանձնման աշխատանքներին:

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 24-ի N 305-Ն որոշման, օժանդակվել է բնակելի տարածքների նվիրատվության գործընթացին:

Օժանդակվել է պետական սեփականություն հանդիսացող գույքի զբաղեցրած հողամասերը Հայաստանի Հանրապետությանը նվիրաբերության գործընթացին:

Իրականացվել է Լոռու մարզի համայնքների վարչական սահմաններում ընդգրկված գյուղատնտեսական նշանակության հողերի կադաստրային գնահատման աշխատանքները և համայնքներին է տրամադրվել գնահատման էլեկտրոնային քարտեզները և տեղեկագրերը:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

2016թ. արդյունքներով մարզի մանրածախ առևտրի 1010 օբյեկտներ ապահովել են 39756.6 մլն. դրամի ապրանքաշրջանառություն, 2015թ.՝ համապատասխանաբար 1002 օբյեկտի

և 50090.8 մլն. դրամ ապրանքաշրջանառության դիմաց կամ առևտրի ծավալը նվազել և կազմել է նախորդ տարվա միայն 79.4%-ը (հանրապետական՝ 92.0%): Մարզում մանրածախ ապրանքաշրջանառության հիմնական աղբյուրներն են խանութները՝ 331 հատ և 14883.2 մլն. դրամ շրջանառություն, սպառողական ապրանքների և գյուղատնտեսական ապրանքների շուկաները՝ 5 հատ և 3313.3 մլն. դրամի շրջանառությամբ, կրպակները՝ 597 հատ և 4339.6 մլն. դրամի շրջանառությամբ և առևտրի այլ օբյեկտները՝ 77 հատ և 17210.5 մլն. դրամի շրջանառությամբ:

Մարզի մեկ շնչին ընկնող մանրածախ առևտրի ծավալը 2016թ. կազմել է 178.1 հազ. դրամ միջին հանրապետական 415.4 հազ. դրամի դիմաց կամ ցածր է ավելի քան 2.3 անգամ և 2015թ. 221.3 հազ. դրամի դիմաց:

	(մլն. դրամ)						
	2005թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Մանրածախ ապրանքաշրջանառություն	19585.1	24752.4	23257.6	23281.4	22607.1	50090.8	39756.6

Շատ ցածր մակարդակի վրա է գտնվում մարզի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում հսկողական աշխատանքների արդյունավետությունը: 2016թ. նշված օբյեկտներում իրականացված ընդամենը 383 հսկողության արդյունքում արձանագրվել է ընդամենը 30 խախտում, իսկ գումարը կազմել է 105 հազ. դրամ, այն էլ Ալավերդի քաղաքում (45.0 հազ. դրամ) և Գարգառ համայնքում (60.0 հազ. դրամ):

Ծառայությունների ծավալը մարզում 2016թ. կազմել է 15770.6 մլն. դրամ, 2015թ. 17720.4 մլն. դրամի դիմաց կամ նախորդ տարվա միայն 89.0%-ը, իսկ տեսակարար կշիռը կազմել է հանրապետական ծառայությունների ընդամենը 1.2%-ը, նախորդ տարվա 1.5%-ի դիմաց: Մեկ շնչին ընկնող ծառայությունների ծավալը մարզում անցյալ տարի կազմել է 70.7 հազ. դրամ, 2015թ. 78.3 հազ. դրամի և միջին հանրապետական 422.6 հազ. դրամի դիմաց (16.7%):

	(մլն. դրամ)						
	2005թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Մատուցվող ծառայությունների ծավալը	7593.5	14932.5	14706.2	12932.8	15764.2	17720.4	15770.6

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՐՑԵՐ

2016 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման բնագավառում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության աշխատանքային գործունեության հիմնական ուղղություններն են հանդիսացել.

- ✓ Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի համագործակցության արդյունավետության բարձրացումը.
- ✓ Վարչական հսկողությունը համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման նկատմամբ.
- ✓ Մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին մեթոդական և խորհրդատվության օգնության կազմակերպումը.

- ✓ Համայնքներում առկա խնդիրների լուծմանը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների մասնակցության առավել ակտիվ ներգրավումը:
- ✓ Տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման համակարգերի համագործակցության հիմնական միջոցներ են հանդիսացել՝
- ✓ Մարզի խորհրդի նիստերը.
- ✓ Հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և համայնքների ղեկավարների մասնակցությամբ անցկացված խորհրդակցությունները.
- ✓ Համայնքների ղեկավարների և համայնքապետարանների աշխատակազմերի աշխատակիցների մասնակցությամբ անցկացված օպերատիվ և տարածաշրջանային խորհրդակցությունները.
- ✓ Մարզպետի և մարզպետարանի պաշտոնատար անձանց աշխատանքային այցելությունները համայնքներ.
- ✓ Համայնքների ՏԻՄ-երի կողմից իրականացվող գործառնությունների ու կայացվող որոշումների նկատմամբ վարչական վերահսկողությունը.
- ✓ Համայնքներում առկա խնդիրների լուծմանը քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների ներգրավումը և ՏԻՄ-երի հետ համատեղ ծրագրերի իրականացումը.
- ✓ Պետական մարմինների կողմից տեղական ինքնակառավարման զարգացմանը և համայնքների ՏԻՄ-երի կարողությունների հզորացմանն ուղղված քայլերի համակարգման իրականացումը:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

- ✓ Նախապատրաստվել և անցկացվել են մարզի խորհրդի 4 նիստեր: Նիստերի օրակարգերում ընդգրկվել և քննարկվել են 13 հարցեր:
- ✓ Մարզի համայնքների ՏԻՄ-երի գործունեության, համայնքների հիմնախնդիրների և հրատապ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ պարբերաբար մարզպետին, մարզպետի տեղակալներին և մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների ղեկավարներին ներկայացվել է անհրաժեշտ տեղեկատվություն:
- ✓ Տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումների գործունեության համակարգման բնագավառում օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման նպատակով ներկայացվել է մարզպետի 24 որոշումների և 1 կարգադրության նախագծեր:
- ✓ Իրականացվել է ՀՀ օրենսդիր, գործադիր, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմիններից, հասարակական կազմակերպություններից, քաղաքացիներից ստացված 6269 գրությունների քննարկման աշխատանքների համակարգումը 2015թ.-ի համեմատությամբ 1191-ով ավել:
- ✓ Ներկայացվել է պաշտոնական թղթակցության 1117 պատասխանների նախագծեր, 2015թ.-ին՝ 1104:
- ✓ Ուսումնասիրվել է քաղաքացիներից ստացված 77 դիմումներ, բողոքներ և առաջարկություններ, ներկայացվել են դրանց պատասխանների նախագծեր, 2015թ.-ին՝ 61 :
- ✓ Կազմակերպվել է ՀՀ օրենսդիր և գործադիր մարմիններից ստացված իրավական ակտերի նախագծերի քննարկումներ, ստացված առաջարկությունները և դիտողությունները ներկայացվել են այդ մարմիններին:
- ✓ Ըստ անհրաժեշտության և ստացված հանձնարարականների կազմվել և համայնքների ՏԻՄ-երին է ուղարկվել 132 շրջաբերական գրություններ, 2016թ.-ին՝ 91:
- ✓ Վարչության աշխատակիցները մասնակցել են 33 համայնքներում Լոռու մարզպետի 18.01.2016թ. թիվ 5-Ա որոշմամբ ստեղծված հանձնաժողովի կողմից իրականացված վարչական վերահսկողության աշխատանքներին և դրանց վերաբերյալ քննարկումներ են

կազմակերպվել Լոռու մարզպետի տեղակալների մոտ: Մարզի համայնքներում իրականացված վարչական վերահսկողության արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ զգալի առաջընթաց կա համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակած լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ իրավական ակտերով կարգավորվող կարգերի և ընթացակարգերի հաստատման ուղղությամբ: Բոլոր համայնքների ավագանիների կողմից հաստատվել են տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության, հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման, համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության իրականացման, ՏԻՄ-երի կամավոր լիազորությունների իրականացման կարգերը:

✓ Պարբերաբար կազմակերպվել է մարզպետի, նրա տեղակալների և մարզպետարանի ղեկավարների այցելությունները համայնքներ, որոնք ուղեկցվել են տեղական ինքնակառավարման մարմինների և համայնքի բնակչության հետ հանդիպում-քննարկումներով, որոնց ժամանակ բնակչությունը հնարավորություն է ունեցել ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն և բացատրություններ իրենց հուզող հարցերի վերաբերյալ:

✓ Համակարգվել է համայնքների 2015 թվականի բյուջեների կատարման տարեկան հաշվետվություններին մարզպետարանի ներկայացուցիչների մասնակցության աշխատանքները:

✓ Համագործակցելով մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների և համայնքապետարանների հետ հավաքագրվել և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2013 թվականի մայիսի 2-ի «ՀՀ համայնքների տեղեկատվական բազայի արդիականացման նպատակով ՀՀ համայնքներից տվյալների հավաքագրման, ամփոփման և համայնքների տեղեկատվական բազա էլեկտրոնային ծրագրի մուտքագրման կարգը հաստատելու մասին» թիվ 54-Ա հրամանով հաստատված ձևաչափերին համապատասխան ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզի համայնքների տեղեկատվական բազան:

✓ Պարբերաբար հավաքագրվել և ըստ եռամսյակների ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել համայնքների ղեկավարների և ավագանիների կողմից կազմակերպված ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թվաքանակի վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև համայնքների բյուջեների հրապարակայնության (համայնքային բյուջեի եռամսյակային և տարեկան հաշվետվությունների, հաստատված բյուջեի և նրանում կատարվող փոփոխությունների) և ավագանու դերակատարության ու պատասխանատվության բարձրացման մասին տվյալները:

✓ Կազմակերպվել է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ընդունված որոշումների օրինականության վերահսկումը, թերի կամ գործող օրենսդրության պահանջներին չհամապատասխանող որոշումների մասին տեղյակ է պահվել դրանք ընդունող ՏԻՄ-երին և առաջարկվել է դրանք լրամշակել, համապատասխանեցնել գործող օրենսդրությանը: 2016 թվականին ստացվել են համայնքների ավագանիների 3797 որոշումներ:

✓ Ըստ անհրաժեշտության և մարզպետի, մարզպետի տեղակալների և աշխատակազմի ղեկավարի հանձնարարականների վարչությունը համագործակցել է մարզպետարանի աշխատակազմերի ստորաբաժանումների հետ առկա խնդիրների համատեղ լուծման համար: Մասնավորապես՝

✓ - համայնքներում կազմակերպված մշակութային միջոցառումների իրականացման հետ կապված վարչությունը աջակցել է կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը,

✓ - պետության կողմից գյուղատնտեսության ոլորտում իրականացվող ծրագրերի մասով աշխատանքներ են իրականացվել գյուղատնտեսության և բնապահպանության վարչության հետ:

✓ Ըստ անհրաժեշտության աշխատանքներ են տարվել հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ (զինկոմիսարիատներ, ոստիկանության մարզային վարչություն, վիճակագրության ծառայություն մարզային բաժին, փրկարարական մարզային վարչություն, «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունք և այլ ծառայություններ):

✓ Վարչությունը ակտիվ մասնակցություն է ունեցել «Լոռի-Արցախ» մարզային հանձնախումբի կողմից Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանն աջակցելու և հումանիտար օգնություն տրամադրելու համար դրամահավաքի կազմակերպման, ինչպես նաև «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Մարաթոն-2016» դրամահավաքի աշխատանքներին:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

2016 թվականին անցկացվել են ՏԻՄ-երի հերթական և արտահերթ ընտրություններ 94 համայնքներում, որից 79-ում համայնքի ղեկավարի և ավագանու անդամների, 5-ում համայնքի ղեկավարի, 10-ում ավագանու անդամների:

Վարչությունը մշտական մեթոդական, խորհրդատվական, գործնական օգնություն է ցուցաբերել 2016 թվականի փետրվարի 14-ին Թումանյան, Մարց, Քարինջ, Լորուտ, Շամուտ, Աթան, Աինիձոր համայնքները միավորման արդյունքում ձևավորված նոր Թումանյան համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին:

ՏԻՄ ընտրությունների նախապատրաստման և անցկացման կազմակերպման աշխատանքներում աջակցություն է ցուցաբերվել մարզի ԸԸՀ-երին և տեղամասային ընտրական հանձնաժողովներին:

ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունից ստացվել և համայնքապետարաններին է տրամադրվել 2015թ.-ի երկրորդ և 2016թ.-ի առաջին կիսամյակներում բնակչության պետական ռեգիստրում հաշվառված և հաշվառումից հանված քաղաքացիների ցուցակները:

Կարևորելով ՏԻՄ-երի բյուջետային կարողությունների զարգացումը և տեղական եկամուտների հավաքագրման աճի ապահովումը՝ մարզի բոլոր համայնքների ղեկավարներին և համայնքապետարանների աշխատակազմերին մշտական խորհրդատվական, մեթոդական, գործնական օգնություն է ցուցաբերվել համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման կազմակերպման հարցում: Իրականացվել է բյուջեների սեփական եկամուտների ցածր հավաքագրում, աշխատավարձերի և սոցիալական ապահովագրության գումարների պարտքեր ունեցող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության վերլուծություններ և արդյունքները քննարկվել են մարզպետի տեղակալների կողմից անցկացված խորհրդակցությունների ժամանակ: Բյուջեների սեփական եկամուտների ցածր հավաքագրում ունեցող համայնքների ղեկավարներին ուղարկվել են գրություններ:

2016 թվականին մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները կատարվել են 95,5%-ով (2015 թվականին՝ 99,8%), 2015 թվականի համեմատությամբ հավաքագրված սեփական եկամուտների գումարների աճը կազմել է 0,4%:

Աջակցություն է ցուցաբերվել համայնքապետարանների աշխատակազմերին գույքահարկի բազաների վարման աշխատանքները կազմակերպելու հարցում, ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայությունից ստացվել և աշխատակազմերին է տրամադրվել ֆիզիկական և իրավաբանական անձանց անվամբ հաշվառված տրանսպորտային միջոցների ցանկը: Ամիսը մեկ անգամ «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Վանաձորի հաշվառման քննական բաժանմունքից ստացվել, տեսակավորվել և ըստ համայնքների աշխատակազմերին է տրամադրվել հաշվառված և հաշվառումից հանված տրանսպորտային միջոցների ցուցակները:

2016 թվականին մարզի բոլոր համայնքների (բացառությամբ՝ Վանաձոր և Գյուլագարակ համայնքների) ավագանիները հաստատել են համայնքի զարգացման հնգամյա ծրագրերը,

դրանք կազմվել և հաստատվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից մշակված նոր մեթոդաբանության: Սպիտակ համայնքի ավագանին տարվա ընթացքում հաստատել է համայնքի զարգացման քառամյա ծրագիրը հին մեթոդաբանությամբ, առաջիկայում կհաստատվի հնգամյա ծրագիրը նոր մեթոդաբանության համաձայն:

Իրականացվել են աշխատանքներ Երևանում կայացած ՏԻՄ-երի կազմավորման 20-ամյակին նվիրված միջոցառմանը մարզի ներկայացուցիչների մասնակցության ապահովման ուղղությամբ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՐ

- Համայնքապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարվել են 139 մրցույթներ, որոնցից կայացել են 75-ը: Մրցույթներին մասնակցելու համար դիմել են 99 քաղաքացիներ, մրցույթներին մասնակցել են 96-ը: Մրցույթների արդյունքում հաղթող են ճանաչվել 75 մասնակիցներ, նրանցից 74-ը նշանակվել են թափուր պաշտոններում:

- Ապահովվել են համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հրապարակայնությունը՝ մարզպետարանի կայք էջում մշտապես տեղադրվել են հայտարարված մրցույթների վերաբերյալ տեղեկատվությունը, բացի այդ պատշաճ կերպով կազմվել և սահմանված ժամկետներում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն են ներկայացվել համայնքային ծառայության թափուր պաշտոնները համալրելու համար հայտարարված մրցույթների հայտարարությունները և ժամանակացույցերը: Մրցույթների արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ամիսը մեկ անգամ ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն և հանրային իրազեկման նպատակով դրանք տեղադրվել են մարզպետարանի կայքում:

- Վարչության աշխատակիցները համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմում մասնակցել են մարզի համայնքապետարանների աշխատակազմերի 86 համայնքային ծառայողների ատեստավորման աշխատանքներին:

- ««Մաստեր Սթայլ» ՍՊԸ-ի» ՀԿ-ի հետ կազմակերպվել է մարզի համայնքապետարանների աշխատակազմերի 80 համայնքային ծառայության պաշտոններ զբաղեցնող համայնքային ծառայողների վերապատրաստումը:

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից իրականացվել են մարզի 8 համայնքապետարանների աշխատակազմերի կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողություն, հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ և արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Իրականացված վերահսկողությունից հետո վերլուծվել են հայտնաբերված ընդհանրական թերությունները և շրջաբերական գրությամբ բոլոր համայնքների ղեկավարներին առաջարկվել է միջոցներ ձեռնարկել դրանց վերացման և կանխարգելման ուղղությամբ: Պետք է նշել, որ նախորդ տարիների համեմատ զգալիորեն նվազել են արձանագրված թերությունները:

- Քննարկվել են համայնքների քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերի համայնքային ծառայության անվանացանկերում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկությունները և դրանք ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարին: Տարվա ընթացքում աշխատակազմերի համայնքային ծառայության 8 պաշտոններ հանվել են:

- Մարզի քաղաքապետարանների և գյուղապետարանների աշխատակազմերից մշտապես հավաքագրվել են համայնքային ծառայողների մասին անհրաժեշտ տեղեկությունները (գրանցամատյան Ձև 1, 2):

• Մշտական մեթոդական և գործնական օգնություն է ցուցաբերվել մարզի տեղական ինքնակառավարման մարմիններին ՏԻՄ ոլորտի գործող օրենսդրության և հատկապես «Տեղական ինքնակառավարման մասին» և «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքների կիրարկման և գործավարության կազմակերպման հարցերում:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ

Մարզի 107 համայնքներից 57-ը ապահովված են համայնքային կառավարման տեղեկատվական համակարգով՝ 53.3% :

Մարզի 52 համայնքներ ունեն ինտերնետային կայքեր, սակայն այդ կայքերի շահագործման մակարդակը գոհացուցիչ չէ: 52 կայքերում ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից իրականացվել է մշտադիտարկում, որի արդյունքում որպես սահմանված կարգով վարվող կայքեր են համարվում մարզի 21 համայնքների կայքերը (ՀԿՏՀ ունեցող համայնքների 37.5%): Վարչության կողմից հետևողական աշխատանքներ են կատարվում համայնքների կողմից այդ կայքերում առկա նյութերի թարմացման ուղղությամբ:

ՀԿՏՀ ներդրած 40 համայնքների համակարգերը միացված են Mullbery համակարգին՝ էլեկտրոնային փաստաթղթաշարժ իրականացնելու նպատակով: Այդ համայնքներից մեծ մասը փաստաթղթաշարժը մարզպետարանի հետ չեն իրականացնում այդ համակարգում տարաբնույթ տեխնիկական անսարքությունների պատճառաբանությամբ:

Մարզի բոլոր համայնքները ապահովված են համակարգիչներով, սակայն որոշ համայնքներում առկա է 1 համակարգիչ, որով վարվում են նաև համայնքի գույքահարկի և հողի հարկի բազաները, իսկ այդ համակարգիչներով այլ գործառույթներ կատարելը խորհուրդ չի տրվում: Բացառությամբ Անտառաշեն համայնքից մարզի բոլոր համայնքների հետ փաստաթղթային շրջանառություն իրականացվում է էլեկտրոնային փոստի միջոցով: Անտառաշենի գյուղապետարանին էլեկտրոնային փոստ չի տրամադրվել ինտերնետի բացակայության պատճառով:

Հուլիս ամսին տեղեկատվական համակարգերի զարգացման և վերապատրաստման կենտրոնը իրականացրել է մարզի համայնքների կողմից ՀԿՏՀ շահագործման մշտադիտարկում, որի արդյունքները քննարկվել է մարզպետարանում, համայնքապետարանների և ՏՀԶՎԿ համապատասխան ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիական հասարակության կայացման ու որոշումների ընդունման գործընթացում քնակչության և քաղաքացիական ակտիվ խմբերի մասնակցության ապահովման, կառավարման գործընթացներում հասարակության տարբեր խավերի մասնակցությունը համայնքային և մարզային զարգացման ծրագրերի մշակման և իրականացման, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների առավել թափանցիկ գործունեությունն ապահովելու նպատակով, մարզպետարանի աշխատակազմի, համայնքների ղեկավարների, մարզի հասարակական կազմակերպությունների ջանքերով 2016թ.-ի ընթացքում իրականացվել է հետևյալ միջոցառումները՝

Մարզի տարածքում գործող ԶԼՄ-ների միջոցով պարբերաբար հաղորդումներ են հեռարձակվել՝ ներկայացնելով մարզպետի, մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների, համայնքների ՏԻՄ-երի գործունեությունը, գոյություն ունեցող հիմնախնդիրները և իրականացվող ծրագրերը:

Մարզի զարգացման ծրագրի իրականացման ընթացքի, ինչպես նաև՝ մարզի տարածքում պետական բյուջեի և միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի մասին տեղեկատվությունը առաքվել են բոլոր համայնքներին շրջաբերականների, ինտերնետային կայքէջի, մարզում գործող ԶԼՄ-ների միջոցով:

Հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչները մասնակից են դարձել մարզխորհրդի նիստերին, մարզպետարանում հրավիրվող տարբեր քննարկումներին, հասարակական լսումներին:

Պարբերաբար իրականացվել են մարզպետարանի ինտերնետային կայքէջի թարմացման աշխատանքներ, հանրային իրազեկման նպատակով կայքում տեղադրվել են մարզպետի որոշումներն ու կարգադրությունները, ՏԻՄ-երի որոշումները, առանձին բաժիններում տեղադրվել են մարզային բնույթի տարբեր խնդիրներին վերաբերող տեղեկատվական նյութեր:

Ուշադրություն է դարձվել համայնքապետարաններում և համայնքի բնակչության համար առավել տեսանելի վայրերում տեղեկատվական ցուցատախտակների առկայությանը, համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու որոշումների վերաբերյալ համայնքների բնակչությանը իրազեկելու նպատակով դրանք տեղադրվել են մարզպետարանի կամ համայնքապետարանների ինտերնետային կայք էջերում, մեկական օրինակ փակցվել են համայնքապետարաններում առկա տեղեկատվական տախտակներին և հանրության համար առավել մատչելի վայրերում: Հարկ է նշել, որ ղեկավար համայնքների զգալի մասում ցածր է ՏԻՄ-երի գործունեության հրապարակայնության և թափանցիկության մակարդակը, որոշ համայնքներում տեղեկատվական ցուցատախտակներին չեն փակցվում ՏԻՄ-երի կողմից ընդունված որոշումները կամ դրանք ուշ են թարմացվում:

Անհրաժեշտությունից ելնելով հասարակական կազմակերպությունների ջանքերով կազմակերպվել են բնակչության իրազեկման ծրագրեր: Ուշադրություն է դարձվել համայնքների զարգացման հնգամյա ծրագրերի, համայնքային բյուջեների կազմման և բյուջեների կատարման տարեկան հաշվետվությունների հաստատման հրապարակայնության գործընթացի վրա և կազմակերպվել են հանրային բաց լսումներ և (կամ) քննարկումներ: Համատեղ իրազեկման ծրագրեր են իրականացվել Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիայի և «Համայնքների համախմբման և աջակցման կենտրոն» ՀԿ-ի հետ:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբը Համայնքների ֆինանսիստների միավորման եւ ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային աջակցությամբ իրականացվող «Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» (ՀամաՏեղ) ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացրել է ՀՀ բոլոր տեղական ինքնակառավարման մարմինների կողմից ՀՀ «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքով եւ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով սահմանված թափանցիկության, հանրային հաշվետվողականության եւ մասնակցության ապահովման պարտավորությունների դիտարկման (մոնիտորինգ): Մոնիտորինգի հարցումներով գրեթե բոլոր ցուցանիշներով լավագույնը Լոռու մարզն է, որը հիմնականում պայմանավորված է վարչության համակարգված և արդյունավետ աշխատանքով:

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

ՀՀ Լոռու մարզպետի որոշումներով մարզի տարածքում կազմակերպվել և անց են կացվել «Մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման տարեկան հիմնական միջոցառումների պլան»-ով սահմանված՝

Հրամանադրաշարքային ուսումնավարժություն

Ալավերդի քաղաքում «Թումանյանի տարածաշրջանի խոշոր անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպումը» թեմայով:

Շրջաբային ուսումնավարժություններ.

Վանաձոր քաղաքում «Սուր վարակիչ հիվանդությունների օջախի վերացման կազմակերպում» թեմայով.

«Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների օջախի վերացում» թեմայով Լեռնապատ, Բազում, Հալավար, Լեռնանցք, Գոգարան, Լեռնահովիտ, Սարամեջ, Լեռնոնտովո, Մարգահովիտ և Ֆիոլետովո համայնքների կողմից.

«Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով Տաշիր, Միխայլովկա, Պետրովկա, Նորաշեն, Սարչապետ, Արծնի, Ապավեն, Ձյունաշող, Մեծավան և Ձորամուտ համայնքների կողմից.

«Սուր վարակիչ հիվանդությունների օջախի վերացման կազմակերպում» թեմայով Արջուտ, Բովաձոր, Այգեհատ, Արևածագ, Հազվի, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Ուրասար և Մղարթ համայնքներում:

Մարզի թվով 72 համայնքների կողմից անց են կացվել շտաբային ուսումնավարժություններ՝ «Սելավների առաջացման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում», «Խաղաղից ռազմական դրության անցնելու դեպքում ՔՊ միջոցառումների կազմակերպումը» և «Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմաներով:

Հատուկ տակտիկական ուսումնավարժություններ.

ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ վարչության անձնակազմի մասնակցությամբ անց են կացվել հատուկ տակտիկական ուսումնավարժություններ՝ Վանաձորի թիվ 1, Արմանիսի, Գուգարքի հիմնական և Մեծավանի թիվ 1 միջնակարգ դպրոցներում «Հակառակորդի օդուժի հարձակման դեպքում պատսպարման միջոցառումների կազմակերպումը» թեմայով, իսկ Կաթնաջուրի, Օծունի թիվ 2 միջնակարգ և Վանաձորի թիվ 3 հիմնական դպրոցներում «Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում տարահանման կազմակերպումը» թեմայով.

ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ անց են կացվել հատուկ տակտիկական ուսումնավարժություններ՝ Վանաձորի թիվ 22 հիմնական և Դարպասի միջնակարգ դպրոցներում՝ «Հրդեհի առաջացման դեպքում հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը» թեմայով, Սպիտակ թիվ 5 և Տաշիրի թիվ 2 հիմնական դպրոցներում՝ «Հրդեհի դեպքում տարահանման կազմակերպումն ու իրականացումը» թեմայով, իսկ Ագարակի, Ալավերդու թիվ 7 և Փամբակի միջնակարգ դպրոցներում՝ «Հրդեհի հետևանքով տուժածներին առաջին բուժօգնության ցուցաբերումը» թեմայով: Սեպտեմբերի 12-ին և 13-ին Վանաձորի թիվ 10 ավագ, Ախթալայի թիվ 1 միջնակարգ, Գարգառի միջնակարգ, Մեղովկայի միջնակարգ, Վանաձորի թիվ 5 ավագ, Դեբեդի միջնակարգ և Շիրականուտի թիվ 1 միջնակարգ դպրոցներում՝ «ՀՀ ԱԻ նախարարության գործունեությունը և հիմնական խնդիրները» թեմայով անց են կացվել դասախոսություններ:

Վանաձոր քաղաքում անց է կացվել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «ՃՏՊ-ի հետևանքով միջին ճնշման գազատարում առաջացած վթարի հետևանքների վերացում» թեմայով,

«Հիվանդների պաշտպանության միջոցառումների կազմակերպումը հրդեհի դեպքում» թեմայով «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից,

«Էներգետիկ համակարգում վթարի հետևանքի վերացում» թեմայով «ՀԷՑ» ՓԲԸ Դեբեդ մասնաճյուղի Ալավերդու էլ. ցանցի կողմից,

«Ջրամատակարարման ցանցում վթարի դեպքում հետախուզության և վթարավերականգնողական աշխատանքների իրականացում» թեմայով «Լոռի-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի կողմից,

«Միջին ճնշման գազատարում առաջացած վթարի հետևանքների վերացում» թեմայով «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռի ԳԳՄ-ի Գուգարքի ՏՏ-ի կողմից:

Օբյեկտային վարժանքներ

«Երկրաշարժի հետևանքով մասնակի փլուզված, «Վանաձորի բժշկական կենտրոն»-ում որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից,

«Սուր վարակիչ հիվանդությունների առաջացման դեպքում անհետաձգելի միջոցառումների կազմակերպումը» թեմայով «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊԲԸ-ի կողմից,

11.11.2016թ. «Հիվանդների տարահանման միջոցառումների կազմակերպումը հրդեհի դեպքում» թեմայով «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից,

Վանաձոր քաղաքի թիվ 22 հիմնական դպրոցում և Ստեփանավան քաղաքի թիվ 6 հիմնական դպրոցում անցկացվել է «Ուժեղ երկրաշարժի ժամանակ դպրոցի ղեկավար կազմի և շահագրգիռ կազմակերպությունների գործողություններն ու փոխհամագործակցությունը» թեմայով ցուցադրական վարժանքներ:

Ճշտգրտվել են «Լոռու մարզի քաղաքացիական պաշտպանության» և «Լոռու մարզի տարահանման» պլանները:

Համաձայն ՀՀ Լոռու մարզպետի կողմից հաստատված պլանի կազմակերպվել է ՀՀ ԱԻՆ «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» ՊՈԱԿ-ում 2016 ուսումնական տարում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման դասընթացների մասնակցությունը: Համաձայն հաստատված պլանի տարվա ընթացքում դասընթացներին պետք է մասնակցեին 45 ունկնդիր, որոնցից մասնակցել են 39-ը:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Լոռու մարզում 2016թ. գործել է.

ա/ 6 բուհ, որից 2-ը ոչ պետական, 9 միջին մասնագիտական և 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատություններ

բ/ 68 նախադպրոցական ուսումնական հաստատություն՝ 4379 երեխաներով, 2 ոչ պետական ՆՈՒՀ և 24 նախակրթարան /տեղակայված 24 դպրոցում /26 խումբ, 420 երեխա/ գ/ 166 հանրակրթական ուսումնական հաստատություն, այդ թվում՝ 80-ը՝ միջնակարգ, 68-ը՝ հիմնական, 4-ը՝ հատուկ /այդ թվում 1-ը՝ մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ/, 11 ավագ դպրոց և 3 վարժարան /2-ը՝ մասնագիտացված/: Վանաձոր քաղաքում գործում է մեկ արհեստագործական ուսումնարան՝ 13 խմբով (196 աշակերտ):

Մարզային ենթակայությամբ գործող 150 դպրոցները ընդգրկում են՝

- ♦ միջնակարգ դպրոցներ - 80
- ♦ վարժարան - 1
- ♦ հիմնական դպրոցներ - 69 /որոնցից 1-ը՝ հատուկ/
- ♦ 26120 սովորողները կոմպլեկտավորված են 1607 դասարաններում

2016-2017թթ. ուսումնական տարում մարզի 166 հանրակրթական դպրոցներում աշխատում են 3539 ուսուցիչ, այդ թվում 3126-ը՝ մարզային ենթակայության դպրոցներում /2670 կին և 456 տղամարդ/: Ուսուցիչ աշակերտ հարաբերակցությունը 2016-2017թթ. ուսումնական տարում կազմել է 1/8.3:

Նախադպրոցական կրթություն

2016 թվականին Լոռու մարզում գործել է 68 նախադպրոցական ուսումնական հաստատություն: Գործող նախադպրոցական ուսումնական հաստատությունների շենքային հզորությունը կազմում է 5268 երեխա-տեղ, որի միայն 86%-ն է շահագործվում:

2016թ. սեպտեմբերի 15-ի տվյալներով ուսումնադաստիարակչական աշխատանքները կազմակերպվել են 152 խմբով, որտեղ ընդգրկվել է 4379 երեխա: Ընդ որում, 5-6 տարեկանների թիվը 1807 է, որը կազմում է երեխաների ընդհանուր թվի 41%-ը: Երեխա/դաստիարակ հարաբերակցությունը կազմում է 1/13:

Մարզում 2009 թվականից գործում են նաև նախակրթարաններ, որոնք սկզբում գործել են «Մատչելիության ապահովում» վարկային ծրագրի շրջանակներում, այնուհետև՝ սկսած 2011 թվականից, աստիճանաբար անցել են պետական ֆինանսավորման:

2012 թ-ին նախակրթարաններ գործել են մարզի 5 դպրոցներում /6 խումբ, 127 երեխա/, 2013թ-ին՝ թվով 22 դպրոցում /27 խումբ, 451 երեխա/ և 2014թ-ին՝ թվով 21 դպրոցում /23 խումբ, 400 երեխա/, 2015թ-ին՝ 21 դպրոցում /21 խումբ, 355 երեխա/, 2016թ-ին՝ թվով 24 դպրոցում /26 խումբ, 420 երեխա/:

Գյուղական համայնքների ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների թիվը կազմել է մարզի ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների ընդհանուր թվի 26%-ը: Այս բացը լրացվում է գյուղական համայնքների դպրոցների կազմում գործող նախակրթարանների միջոցով: Եթե նախակրթարաններում ընդգրկված երեխաների թիվն ավելացնենք ՆՈՒՀ-երի 5-6 տարեկան երեխաների թվին, ապա 5-6 տարեկան երեխաների թիվը կկազմի մարզի ՆՈՒՀ-երում ընդգրկված երեխաների ընդհանուր թվի 50%-ը:

Արդեն 2-րդ տարին է՝ դրական տեղաշարժ է արձանագրվում երեխա/դաստիարակ հարաբերակցության մեջ: Նախկինում 12 երեխայի համար հաշվարկվում էր 1 դաստիարակ: Կրթական բարեփոխումների արդյունքում 2012թ-ին երեխա-դաստիարակ հարաբերակցությունը դարձել էր 1/12,4: 2013, 2014թթ. այն կազմել է 1/12,5, 2015 թ-ին՝ 12,6, իսկ հաշվետու տարում այն կազմել է՝ 1/13 :

2012-2016 թվականներին նախադպրոցական հաստատությունների քանակի և դրանցում ընդգրկված երեխաների թվի դինամիկան տրված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.

Տարեթիվը	Մանկապարտեզների թիվը	Խմբերի թիվը	Հաճախող երեխաների թիվը	5-6 տարեկան երեխաների թիվը
2012	67	158	4077	1638
2013	68	149	4346	1638
2014	69	155	4575	1828
2015	68	154	4538	1844
2016	68	152	4379	1807

Ընթացիկ տարում վերահսկողություն է իրականացվել նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության եւ կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարման նկատմամբ: Ուսումնասիրություններ են իրականացվել 9 համայնքների (Հաղպատի, Կուրթանի, Լեռնահովիտի, Մեծավանի, Սպիտակի թթ. 1,2 Տաշիրի թթ. 1,3,4, Վարդաբլուրի) ՆՈՒՀ-երում, տրվել են հանձնարարականներ՝ ուսումնասիրությունների արդյունքների ընթացքում բացահայտված ՀՀ օրենսդրության պահանջների, խախտումների և թերությունների վերացման վերաբերյալ:

Նախադպրոցական ուսումնական հաստատություններում փորձարարական եւ նորարարական գործունեություն կազմակերպելու նպատակով մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը համագործակցել է Կրթության ազգային ինստիտուտի Լոռու մասնաճյուղի հետ:

Միջնակարգ կրթություն

Մարզային ենթակայության 150 դպրոցում աշխատում է **3126** ուսուցիչ, որոնցից 2923-ը ունի բարձրագույն մանկավարժական, կամ բարձրագույն կրթություն /91.4%-ը/, մնացած 203-ը՝ միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն:

Ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը մարզում կազմում է 8.3՝ ինչպես նախորդ տարի:

Դասարանների միջին խտությունը 16.4 - է:

Ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 17.6 շաբաթական ժամ:

Հանրակրթական հաստատությունների հիմնական ցուցանիշները ըստ տարիների ներկայացված են աղյուսակ 2-ում և ստորև տեղադրված գծապատկերներում:

Աղյուսակ 2.

Ցուցանիշներ	2012/ 2013	2013/ 2014	2014/ 2015	2015/ 2016	2016/2017
Դպրոցների քանակը	152	151	151	151	150
Աշակերտների թվաքանակը՝ այդ թվում	25771	24861	25226	26120	26435
1-ին դասարան	2852	2848	3017	3055	3223
/9-րդ/ դասարան	2701	2183	1132	2145	2031
/12-րդ/ դասարան	1670	1135	1190	1096	959
Միջին հաշվով 1 դպրոց հաճախում են	170	160	160	173	176
Դասարանների միջին քանակը մեկ դպրոցում	10.7	10.3	10.4	10.6	10.7
Միջին հաշվով մեկ դասարան հաճախում են	15.8	15.9	15.9	16.2	16.4
Մանկավարժների թվաքանակը, նրանցից	3616	3121	3118	3126	3126
✓ բարձրագույն կրթությամբ	3354	2865	2862	2920	2923

✓ միջին մասնագիտական կամ միջնակարգ կրթությամբ	262	256	256	206	203
Մեկ մանկավարժին ընկնող աշակերտների միջին թիվը	7.2	7.9	8.1	8.3	8.3
Մեկ դպրոցում աշխատող մանկավարժների միջին թիվը	23.7	20.6	20.6	20.7	20.7

2016 թվականի սեպտեմբերի տվյալներով նախորդ տարվա համեմատ արձանագրվել է աշակերտների թվի աճ՝ 315-ով:

Հուլիս-օգոստոս ամիսների ընթացքում համակարգվել և վերահսկվել են մարզի դպրոցական տարիքի երեխաների հաշվառումը և նրանց ընդգրկումը հանրակրթական դպրոցներ:

Արդյունքում՝ 2016թ. սեպտեմբերին 1-ին դասարան է ընդունվել 3223 երեխա: Այս ցուցանիշը 168-ով ավել է նախորդ տարվա ցուցանիշից:

Ըստ դպրոցների տվյալների 2016թ. մարզի տարածքում հայտնաբերվել են տարբեր պատճառներով պարտուսից դուրս մնացած 23 երեխաներ: Պարտուսից դուրս մնացած երեխաների ծնողների կամ խնամակալների հետ կազմակերպվել են հանդիպումներ, կատարվել են բացատրական աշխատանքներ, որի արդյունքում 3 երեխա վերադարձել է դպրոց:

Կրթության ոլորտում աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրին միտված մարզի պարտուսի տարիքի երեխաների ընդգրկվածությունը հանրակրթական համակարգում կազմում է 99,9%:

Խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի 150 հանրակրթական դպրոցների խորհուրդներին՝ դպրոցների տարիֆիկացիաների կազմման, հաստիքացուցակների ձևավորման, ֆինանսատնտեսական և ուսումնադաստիարակչական հարցերի քննարկումների կազմակերպման, տնօրենների ու ուսուցիչների ընտրությունների և այլ հարցերում:

2016թ-ին ՀՀ Լոռու մարզային ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կառուցապատման և նորոգման նպատակով ներդրումը կազմել է 180.0 մլն. դրամ:

Ամրացման աշխատանքներ է իրականացվել Վանաձորի թիվ 18 դպրոցում. ներդրումը կազմել է 180.0 մլն. դրամ:

Տնօրենների կողմից սահմանված կարգով և պարբերականությամբ տեղեկատվություն է ներկայացվել գույքագրման, շենք-շինությունների ֆիզիկական վիճակի մասին: Ստացված տեղեկատվությունը մասնագիտական վերլուծության է ենթարկվել, որը հիմք է ծառայել հիմնանորոգման, արդիականացման ծրագրերի մշակման համար:

ՀՀ կառավարության 2006թ. հունվարի 26-ի թիվ 346-Ն որոշման համաձայն ՀՀ Լոռու մարզպետարանի ենթակայության թվով 2 դպրոցների ամրացված անշարժ գույքը հանձնվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության տնօրինությանը /մարզային ենթակայության թվով 150 հաստատություններին ամրացված գույքից հանձնված է 68-ինը/:

Ներկայացվել է թվով երկու ՀՀ կառավարության որոշման նախագծեր՝ «Պաղարքյուրի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը միացման ձևով վերակազմակերպելու մասին և «ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքին գույք նվիրաբերելու մասին», արդյունքում կայացվել են ՀՀ կառավարության որոշումներ:

Նախապատրաստվել և ներկայացվել են Լոռու մարզի հանրակրթական դպրոցների դասագրքերի 2016-2017 ուստարվա հայտերը:

ՀՀ կրթության պետական տեսչության 2016 թվականի աշխատանքային ծրագրի և ՀՀ կրթության պետական տեսչության պետի՝ 2016 թվականի մարտի 14-ի N 14-Ա կարգադրության համաձայն 2016թ. մարտի 29-ից մինչև ապրիլի 15-ը ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում և մարզային ենթակայության թվով 150 ուսումնական հաստատություններում իրականացվել է ուսումնասիրություն: Ուսումնասիրությամբ ընդգրկվող ժամանակահատված է ընդունվել 2012 թվականի օգոստոսի 20-ից մինչև 2016 թվականի մարտի 28-ը: Ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել են կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների կատարման խախտումներ: Տրվել են հանձնարարականներ խախտումներ գրանցած դպրոցների տնօրեններին՝ շտկել թերությունները և սահմանված ժամկետում կատարված աշխատանքների մասին տեղեկացնել ԿԳ նախարարության աշխատակազմի կրթության պետական տեսչությանը: Նման հանձնարարական տրվել է նաև մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գործառույթներում տեղ գտած թերությունները վերացնելու ուղղությամբ:

ՀՀ Լոռու մարզպետի հանձնարարությամբ հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից ՀՀ կրթության մասին օրենսդրության և կրթության պետական կառավարման լիազորված մարմնի ընդունած նորմատիվ ակտերի կատարումը և սովորողների կրթական մակարդակը ուսումնասիրելու նպատակով 2016թ-ի հունվար-մայիս ամիսների ընթացքում մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի աշխատակիցների կողմից կազմակերպվել են այցելություններ Վանաձորի, Սպիտակի և Ստեփանավանի տարածաշրջանների 19 դպրոցներ:

Մարզպետարանի ներքին աուդիտի բաժնի կողմից 2016թ. ընթացքում կատարվել է ներքին աուդիտ մարզի թվով 53 հանրակրթական ուսումնական հաստատություններում: Արդյունքում՝ խախտումների համար մեկ տնօրեն ստացել է <<խիստ նկատողություն>> կարգապահական տույժը (Ալավերդու թ. 1 հ/դ):

2016 թվականի ընթացքում դպրոցի տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար կազմակերպվել և անց է կացվել թվով 45 մրցույթ:

Կազմակերպվել և անցկացվել է ուսուցչի թափուր տեղի համար 950 մրցույթ:

2016թ. հունվարից սկսած նախապատրաստական աշխատանքներ են իրականացվել մարզի 604 ուսուցիչների պարզ ընթացակարգով ատեստավորելու ուղղությամբ: ՀՀ կառավարության 2010թ. հոկտեմբերի 14-ի N 1391-Ն որոշմամբ հաստատված հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի ատեստավորման կարգի համաձայն 2016թ. ատեստավորման ներկայացված ուսուցիչներից պարզ ընթացակարգով ատեստավորվել են 514-ը, տարբեր պատճառներով վերապատրաստման դասընթացներին չեն մասնակցել և չեն ատեստավորվել 90 ուսուցիչներ:

2016թ-ի հունվար-մարտ ամիսներին հաշվառվել են մարզի բոլոր դպրոցների 9-րդ դասարանի աշակերտները՝ ըստ <<Հայոց լեզու և գրականություն>>, <<Մաթեմատիկա>>, <<Օտար լեզու>>, <<Հայոց պատմություն>>, բնագիտական առարկաներ և << Ռուսաց լեզու>> առարկաներից ավարտական քննություններ հանձնելու ցանկության:


Իրականացվել է մեծածավալ նախապատրաստական աշխատանք ավարտական քննությունները 2015-2016 ուստարվա ավարտին և 2016-2017թ. ուստարվա համար նախատեսված 2016թ-ի դեկտեմբեր ամսին կայացած սովորողների գիտելիքների ստուգման, ավարտական և պետական ավարտական քննությունների կազմակերպման և անցկացման աշխատակարգի պահանջներին համապատասխան կազմակերպելու և անցկացնելու ուղղությամբ:

Հունվար-դեկտեմբեր ամիսների ընթացքում ոլորտին վերաբերող բազմաբնույթ հարցերի առնչությամբ կատարվել է քաղաքացիների ընդունելություն

Առարկայական օլիմպիադաների կազմակերպում

Փետրվարի 15-ից մարտի 9-ը կազմակերպվել և անց է կացվել օլիմպիադանների տարածքային և մարզային փուլերը, որոնց մասնակցել են համապատասխանաբար՝ 1451 և 601 աշակերտներ: Մարզային փուլի արդյունքում 115 /նախորդ տարում՝ 132/ աշակերտներ իրավունք են նվաճել մասնակցելու օլիմպիադայի հանրապետական փուլին:

Վերջնական արդյունքում մարզը ունեցել է հանրապետական փուլի 34 / նախորդ տարում՝ 29/ մրցանակակիր:



ՀՀ նախագահի ամենամյա մրցանակաբաշխության <<Լավագույն աշակերտ 2016>> անվանակարգի հաղթողներ են ճանաչվել <<Վանաձորի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների խորացված ուսուցմամբ հատուկ դպրոցի>> աշակերտներ Լուսինե Ղազարոսյանը և Արման Եղիազարյանը:

Նույն դպրոցի աշակերտներ Համլետ Խաչատրյանը և Սպարտակ Սադյանը մասնակցել են քիմիայի միջազգային օլիմպիադաներին (Մոսկվա, Թբիլիսի) և արժանացել բրոնզե մեդալների:

Կազմակերպվել և անց է կացվել <<Ամենախելացին>> հեռուստանախագծի երրորդ եթերաշրջանի ընտրական փուլի աշխատանքները Լոռու մարզի սովորողների շրջանում:

2016թ-ի ընթացքում Լոռու մարզում ՀՀ Կառավարության հաստատած ծրագրի շրջանակում Պաշտպանության, ԿԳ նախարարությունների և Լոռու մարզպետարանի հովանու ներքո անց է կացվել <<Ես սիրում եմ իմ երկիրը>>, <<Իմ ներառական դպրոցը>>, <<Կյանք արժեցող խաղաղություն>>, <<Նամակ զինվորին>>, <<Ես և էպոսը>> շարադրությունների հանրապետական մրցույթներ՝ միտված մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության զարգացմանը, անկախ և հզոր հայրենիքի կերտման գաղափարի խթանմանը մեր երիտասարդության շրջանում: Ուսումնական հաստատություններում բազմաթիվ միջոցառումներ են անցկացվել, նվիրված Հայոց Մեծ եղեռնի 101-ամյա տարելիցին, ՀՀ անկախացման 25-ամյակին և այլն:

Շախմատը Լոռու մարզի դպրոցներում

Շախմատը որպես պարտադիր առարկա հանրակրթական դպրոցներում մտել է 2011թվականին: Այն շարունակում է մեծ հետաքրքրություն առաջացնել սովորողների մոտ:

2014-15 ուսումնական տարում շախմատ առարկան ուսուցանել է տաս հազար հարյուր քառասունչորս աշակերտ, 2015-16 ուսումնական տարում աճել է և կազմում է տաս հազար երկու հարյուր վաթսուն, իսկ 2016-17 ուսումնական տարում՝ տաս հազար երկու հարյուր ութսունվեց:

2016թ. հունվարից մինչև սեպտեմբեր ամիսը անց է կացվել Լոռու մարզի դպրոցականների շախմատի տասերորդ օլիմպիադայի երեք փուլերը, որին մասնակցել են տաս հազար հարյուր

աշակերտներ: Հաշվի առնելով սովորողների հետաքրքրությունը շախմատ առարկայի նկատմամբ, ինչպես նաև առարկայի ազդեցությունը նրանց ստեղծագործական մտածողության վրա, համաձայն ԿԳ նախարարի հանձնարարականի մարզպետարանի ենթակայության հանրակրթական դպրոցներում ստեղծվել են շախմատի խմբակներ, որպես լրացուցիչ կրթական ծառայություն:

Ուսուցիչների մրցույթների կազմակերպում

ՀՀ կրթության և գիտության նախարարի 2013թ. դեկտեմբերի 5-ի թիվ 1354-Ն հրամանով հաստատված <<Տարվա լավագույն ուսուցիչ, դաստիարակ, տնօրեն մրցույթների անցկացման մասին>> կարգի պահանջներին համապատասխան ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. մարտի 22-ի թիվ 27, 28 և 29 կարգադրություններով ստեղծվել են <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Տարվա լավագույն ուսուցիչ>> և <<Տարվա լավագույն դաստիարակ>> մրցույթների անցկացման հանձնաժողովներ: Մարտ-ապրիլ ամիսների ընթացքում նախապատրաստվել և քննարկվել են <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն տնօրեն>>


«Տարվա լավագույն դաստիարակ» մարզային փուլի մասնակիցների գործերը, ստեղծվել են համապատասխան հանձնաժողովներ՝ նրանց մոտ դասալսումներ կազմակերպելու համար: Հիմք ընդունելով ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի օգոստոսի 20-ի թիվ 734-Ա/Ք հրամանով հաստատված «Հայոց լեզու և գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», բնագիտական /ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն/ առարկաների ուսուցիչների և դասվարների «Լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի անցկացման կարգը՝ ՀՀ Լոռու մարզպետի 2016թ. սեպտեմբերի 13-ի թիվ 167 կարգադրությամբ վերը նշված մրցույթի մարզային փուլի անցկացման նպատակով ստեղծվել է մարզային գնահատող հանձնաժողով: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ մրցույթի մարզային փուլի հաղթողներ են ճանաչվել դասվար՝ 3, հայոց լեզվի և գրականության՝ 2, հայոց պատմության՝ 2, հայոց եկեղեցու պատմություն՝ 3 և բնագիտական առարկաների՝ 4 ուսուցիչներ:

Սեպտեմբերի 29-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ ՀՀ ԿԳ նախարարության և Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին 2-րդի օրհնությամբ կազմակերպված «Լավագույն ուսուցիչ» մրցույթի մրցանակաբաշխության արարողությունը, որին Լոռու մարզից որպես մրցանակակիրներ մասնակցում էին 2-րդ մրցանակի արժանացած Վանաձորի Սայաթ-Նովայի անվան N 10 ավագ դպրոցի ուսուցչուհիներ Լիանա Մատինյանը «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից և Մարիա Գրիգորյանը «Քիմիա» առարկայից, ինչպես նաև Վանաձորի թիվ 28 հիմնական դպրոցի ուսուցչուհի, 3-րդ մրցանակի արժանացած Նարինե Վարդանյանը՝ «Հայոց եկեղեցու պատմություն» առարկայից:

Հափուկ /ներառական/ կրթություն

Հատուկ կրթություն մարզում իրականացվում է Վանաձորի թիվ 1 հատուկ /օժանդակ/ դպրոցում՝ 67 երեխա/ և Սպիտակի հատուկ դպրոցում՝ 70 երեխա:

2016 թվականին ներառական կրթություն իրականացրել են մարզի 20 հանրակրթական դպրոցներ, որտեղ, ընդհանուր հաշվով, ընդգրկված է 573 աշակերտ: Այդ դպրոցներից 4-ը ավագ դպրոցներ են:



* Գծապատկերում ներառված չեն ԿԳ նախարարության ենթակայության ներառական կրթություն իրականացնող ավագ դպրոցների տվյալները:

Խոցելի երեխաների սոցիալական ներառում. <<Երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի, ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնում>> ծրագրի շրջանակներում 2016թ-ի օգոստոս-դեկտեմբեր ամիսներին ԿԱԻ Վանաձորի մասնաճյուղի հետ համատեղ իրականացվել է մարզի բոլոր դպրոցների մանկավարժական կոլեկտիվների վերապատրաստումներ, որը կշարունակվի մինչև 2017թ-ի փետրվարի 3-ը:

Համագործակցության հանրապետական գործադիր մարմինների հետ

Մարզում գործում են 6 բուհ՝ որից 2-ը ոչ պետական, 9 միջին մասնագիտական և 2 արհեստագործական պետական ուսումնական հաստատություններ, որոնց հետ համագործակցելով և համապատասխան ուսումնասիրություններ իրականացնելով, մարզի սոցիալ-տնտեսական զարգացումների վերաբերյալ առաջարկություններ են ներկայացվել ՀՀ համապատասխան նախարարություններ՝ մասնագիտությունների ընտրության հետ կապված: Այս գործընթացը իրականացվում է յուրաքանչյուր տարի:

Ռազմահայրենասիրական դաստիարակություն

Աճող սերնդի դաստիարակության գործում կարևոր դեր է խաղում ռազմահայրենասիրական աշխատանքների կազմակերպումը հանրակրթական դպրոցում: Այդ խնդիրների լուծման ուղղությամբ էական աշխատանք է կատարվել Լոռու մարզի հանրակրթական դպրոցներում: Հանրահայտ է, որ հանրակրթության բնագավառում առանձնահատուկ նշանակություն ունի ՆԶՊ առարկայի դասավանդման գործընթացի կազմակերպումը: Նրա նպատակն է պատրաստել ռազմահայրենասիրական ոգով դաստիարակված ռազմագիտական անհրաժեշտ գիտելիքներ և բարոյականային բարձր հատկություններ ունեցող պատանիներ: Այս գործում մեծ դեր ունի ՆԶՊ առարկայի դասավանդման որակը: Մարզի դպրոցներում կա 248 միավոր ուսումնական զենք, որից 130-ը ուսումնական ինքնաձիգ զենք է, 19-ը՝ նռնականետ, 99-ը՝ օդամղիչ հրացան: 2016թ-ին դպրոցների ռազմագիտության դասասենյակները և լսարանները նորացվել են համապատասխան դիդակտիկ պարագաներով, ցուցադրական նյութերով, ստենդներով և տեսաֆիլմերով:

2016թ. ապրիլ-մայիս ամիսներին հաջողությամբ կազմակերպվեցին մեկօրյա ռազմադաշտային պարապմունքները: Դրանց մասնակցեցին 11-րդ դասարաններում սովորող 492 պատանիներ: Համագործակցված աշխատանք է կատարվել Լոռու մարզի Փրկարարական վարչության հետ:

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության գործում կարևոր նշանակություն ունի շրջանավարտների կողմից ռազմական ուսումնական հաստատություններ ընդունվելու աշխատանքների կազմակերպումը: Ուսումնական հաստատություններում, ի շնորհիվ տնօրենների և զինղեկների ռազմահայրենասիրական դաստիարակությունը կարևորելու և գործընթացը բարձր մակարդակով կազմակերպելու 2016թ. հանրապետության տարբեր ՌՈՒՀ-եր է ընդունվել 17 դիմորդ: Տարածքային զինկոմիսարիատների հետ համագործակցված աշխատանք է տարվում շրջանավարտների կողմից ՀՀ, ԱՊՀ և արտասահմանյան երկրների բուհեր ընդունվելու համար:

Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման գործում կարևոր է դպրոցների հետ ռազմաշեֆական աշխատանքների կազմակերպումը: Ներկա դրությամբ մարզի բոլոր դպրոցները կապված են շեֆ - զորամասերի հետ և արդյունավետ աշխատանք են տանում սովորողների՝ ՀՀ ազգային բանակում ծառայության նախապատրաստելու ուղղությամբ:

Ոչ պեղական միջոցներով կրթական օբյեկտների եւ նախադպրոցական հասարակությունների մասով իրականացրած ներդրումներ

Պարենի Համաշխարհային Ծրագրի Հայաստանյան գրասենյակի կողմից մարզի 138 դպրոցներում իրականացվում է <<Դպրոցական սնունդ>> ծրագիրը, որի շրջանակներում տարրական դասարանների եւ նախակրթարանների 11283 երեխաների համար 1-անգամյա սնունդ է կազմակերպվում:

Ծրագրում ընդգրկված են նաև դպրոցներում գործող 25 նախակրթարանները: Նախադպրոցական կրթության զարգացման ուղղությամբ համագործակցություն է իրականացվել Կրթության ազգային ինստիտուտի, ԿԳՆ կրթական ծրագրերի կենտրոնի, միջազգային, բարեգործական կազմակերպությունների («Վորլդ Վիժն», ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի UNICEF, «Փրկեցեք երեխաներին», «Քայլ առ քայլ և այլն), հասարակական կազմակերպությունների և այլ շահագրգիռ կառույցների հետ:

Ի կատարումն <<Դպրոցականների՝ 2016 թվականի ամառային հանգստի կազմակերպման նպատակով միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին>> ՀՀ վարչապետի՝ 30.05.2016թ. N 444-Ա որոշման 3-րդ կետի՝ նախապատրաստվել է մարզի սոցիալապես անապահով, ծնողազուրկ 7-13 տարեկան 415 աշակերտների ցուցակը, որոնք իրենց ամառային հանգիստը 3 հերթափոխով անց են կացրել Հանքավանի «Լուսաբաց» մանկական առողջարարական ճամբարում: Պատշաճ մակարդակով կազմակերպվել է երեխաների մեկնումը եւ վերադարձը:

Մարզի 31 ուսման գերազանց առաջադիմություն ունեցող, սոցիալապես անապահով ընտանիքների աշակերտներին և սովորողներին նշանակվել է <<Լոռու դպրոց>> հիմնադրամի անվանական կրթաթոշակ 3000-10000 դրամիչափով: 17 շնորհալի երեխաների <<Լոռու մշակույթ և սպորտ>> հիմնադրամի կողմից նշանակվել է 10000-20000 դրամի չափով կրթաթոշակ:

Նոր ուսումնական տարվա կապակցությամբ օգոստոս-սեպտեմբեր ամիսների ընթացքում <<Լոռու դպրոց>> հիմնադրամի կողմից մարզի ավելի քան 1200 անապահով ընտանիքների դպրոցական երեխաների հատկացվել են 11 անուն գրենական պիտույքներ, գրքերի վարձավճարներ և զանազան կարգի այլ օգնություններ:

Դասագրքերի շրջանառու համակարգով 2016-2017 ուստարվա սկզբում բաշխվել է 22 անուն 26 593 դասագիրք: Դասագրքերի վարձավճարների գանձումը մարզում կատարվել է 100 տոկոսով:

Ստացվել են տարրական դասարանների 19 անուն 33 055 դասագիրք, 1 անուն 142 ուսուցչի ձեռնարկ:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀՀ Լոռու մարզում մշակութային քաղաքականության իրականացման և ապահովման նպատակով 2016թ. կազմակերպվել են պետական, ազգային և այլ տոների, հիշատակի օրերի հետ կապված զանգվածային միջոցառումներ:

Կազմակերպվել և անց են կացվել.

Ամանորյա և Սուրբ ծննդյան օրվան նվիրված հանդիսություններ:

Հայոց բանակի կազմավորման 24-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ:

Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին նվիրված մարզային միջոցառումների վերաբերյալ՝ գրական-երաժշտական ցերեկույթներ:

Առաջին Հանրապետության տոնի և Ղարաբաղի իրադրություններին նվիրված համերգ-հանդիսություն, որը տեղի է ունեցել Վանաձորի «Կոտրած եկեղեցու» շրջակա տարածքում:

Մայիսյան հաղթանակներին նվիրված «Այսուհետև միշտ պիտի պահենք, պահպանենք մեր հաղթանակները» խորագրով միջոցառումներ:

Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 71-րդ և Շուշիի ազատագրման 24-րդ տարելիցին նվիրված միջոցառումներ:

ՀՀ Անկախության 25-ամյա հոբելյանին և Սահմանադրության օրվան նվիրված հանդիսություններ և տոնական համերգներ :

1988թ.Երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակին նվիրված միջոցառումների շրջանակներում կազմակերպվել է գրական-երաժշտական ցերեկույթներ:

«Պետական աջակցություն մշակութային միջոցառումներին» ծրագրի շրջանակներում կազմակերպվել են հետևյալ միջոցառում-հանդիսությունները.

ա/ Մայրության և գեղեցկության տոնին նվիրված հանդիսություն Գեղազիտության ազգային կենտրոնի Վանաձորի մասնաճյուղում.

բ/ «Ազգային նվագարանների երգի-պարի, ասմունքի» ամենամյա Լոռու մարզային փառատոնի կազմակերպում և անցկացում

գ/ «Վարդավառ» հանդիսություն Գյուլագարակ համայնքի «Հեքիաթ» հանգստյան գոտու տարածքում

Այլ միջոցառումների թվում՝

«Ազգային Գրադարանային Շաբաթ» Լոռու մարզային գրադարանում և մարզի շուրջ 45 գրադարաններում:

«Թանգարանային գիշեր» խորագրով միջոցառումներ թանգարաններում:

«Երեխաների պաշտպանության օրվան» նվիրված միջոցառումներ Վանաձորի Հայքի հրապարակում և այլ համայնքներում:

Անհայտ Կորած Ազատամարտիկների օրվան նվիրված միջոցառում

«Երաժշտության տոն» խորագիրը կրող համերգ-հանդիսություններ:

«Ծաղկի տոն» հանդիսության Թեժ լեռան հովտում և Վանաձոր քաղաքում:

«Ֆրանկոֆոնիայի» օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում:

«Բերքի տոն 2016» համաժողովրդական հանդիսության գեղարվեստական մասի կազմակերպում և անցկացում:

«Խորովածի տոն 2016» մրցույթ-փառատոնը Ախթալա համայնքում:

«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների 11-րդ միջազգային փառատոնի կազմակերպումը մարզի քաղաքային և գյուղական համայնքներում:

«Թումանյանական օր» ավանդական հանդիսությունը Դսեղ համայնքում:

«Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 9-րդ մրցույթ-փառատոն»-ի Լոռու մարզային եզրափակիչ փուլի կազմակերպում: Հաղթողները մասնակցել են Երևանում կայանալիք հանրապետական փուլին՝ արժանանալով մրցանակների և հուշանվերների:

Սանահինի միջնադարյան համալսարանի հիմնադրման 1050-ամյակին նվիրված ուխտագնացություն Սանահին վանքային համալիր:

ԼՂՀ «Մենք ենք մեր սարերը» երգի-պարի համույթի համերգները Լոռու մարզի Վանաձոր, Տաշիր, Ստեփանավան, Ալավերդի և այլ համայնքներում:

«Հայ Վերածնունդ» արվեստների հանրապետական 2-րդ փառատոն Վանաձորում:

«Իմ Հայաստան» համահայկական փառատոնի կազմակերպումը Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատում և Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի համերգասրահում:

Վանաձորի Շարա Տալյանի անվան երաժշտական դպրոցի հիմնադրման 50-ամյակին նվիրված հանդիսություն:

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» համահայկական փառատոնը, որը կայացավ ՀՀ Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում:

Լոռու մարզի երաժշտական դպրոցներից շուրջ 50 աշակերտներ մասնակցել են Երևանի Ա. Խաչատրյան համերգասրահում կազմակերպված համերգ-հանդիսությանը:

Հայ-Չինական փառատոնը, որի մեկնարկը տրվել է Լոռու մարզի Օձուն համայնքում: «Հայկական ներկայանակ» բացօթյա նկարչության փառատոնային ծրագիրը կարևորում է նման մշակութային շփումների նշանակությունը:

«Թատերական Լոռի» փառատոնը, որին մասնակցել են ինչպես հայաստանյան այնպես էլ Վրաստանի, Իրանի, Ճապոնիայի, Ռուսաստանի դաշնության թատերական կոլեկտիվները:

Ավանդույթ են դարձել Լոռու մարզի հետ բարեկամության խոր արմատներ ձգած ԼՂՀ Մարտակերտի վարչական շրջանի դպրոցականների այցելությունները Լոռի:

«Երևանյան հեռանկարներ» փառատոնի շրջանակներում Վանաձորի Էդ. Կզարթմյանի անվան երաժշտական դպրոցի դահլիճում տեղի է ունեցել Էստոնական ազգային արական երգչախմբի համերգը, որը նվիրված է եղել Հայոց ցեղասպանության 101-րդ տարելիցին:

Ճապոնական ֆիլմերի փառատոնի կազմակերպումը Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատում:

Միջմարզային կապերի ամրապնդման նպատակով կազմակերպվել են Գյումրիի Ա. Շիրյանի անվան երաժշտական դպրոցի շնորհալի սաների համերգը Ալավերդի քաղաքում: Վանաձորի «Հայրդաց» տան «Շողակն» և Գուգարաց թեմի «Սուրբ Տիրամայր» երգչախմբերի համերգները Տավուշի մարզի Դիլիջան քաղաքում:

«Երգը բարեկամության կամուրջ» մրցույթ-փառատոնի Լոռու մարզային փուլի կազմակերպում և անցկացում Շ. Ազնավուրի անվան մշակույթի պալատում: Տեղի հաղթողները մասնակցել են հանրապետական փուլին և արժանացել մրցանակային և խրախուսական տեղերի:

ՀՀ Ժող. նկարիչ Հրանտ Թադևոսյանի «Մի նկարի պատմություն» խորագիրը կրող ցուցահանդեսը Վանաձորի Ստ. Զորյանի տուն-թանգարանում:

«Վերակառուցում» խորագրով համահայկական դրամահավաքը, որը կայացել է Վանաձորի Շ.Ազնավուրի անվան մշակույթի պալատում:

Մշտապես աջակցություն է ցուցաբերվում մարզում գործող Վանաձորի Ուկրաինական համայնքի՝ «Վերբիչենկա» երգչախմբին, ովքեր մշտապես մասնակցում են կազմակերպվող մարզային միջոցառումների, ուկրաինայի անկախության օրվան նվիրված միջոցառումներին, հարկ եղած ժամանակ հյուրախաղային ծրագրերին:

ՄՊՈՐՏ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅՈՒՆ

2016թ. փետրվարի 7-ին Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց է կացվել <<Լոռվա ծմեռ-2016>> 46-րդ ավանդական մարզատոնահանդեսը: Համաձայն միջոցառման ծրագրի, Թեժ լեռան հովտում կազմակերպվել և անց են կացվել տարբեր մարզաձևերից և ազգային խաղերից մրցաշարեր, որոնց հաղթողները պարգևատրվել են պատվոգրերով և նվերներով:

2016թ.-ի մայիսին Վանաձորում անց է կացվել <<<< Լոռու մարզպետի գավաթ>> մրցաշարը՝ ֆուտզալ մարզաձևից, որին մասնակցել են տարածաշրջաններում հաղթած թիմերը, ինչպես նաև Վանաձորից 12 թիմ/ընդհանուր 16 թիմ/ : Մրցաշարի հաղթող է ճանաչվել ՎՊՀ-ի թիմը: Հաղթող և մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերը պարգևատրվել են մարզպետի պատվոգրերով, մարզպետի գավաթներով, մեդալներով, դրամական պարգևներով:

Կազմակերպվել է հանրակրթական դպրոցների սովորողների առաջին հանրապետական ուսումնամարզական խաղերը, որի Լոռու մարզային փուլում հաղթող է ճանաչվել Վանաձորի թիվ 23 հիմնական դպրոցի թիմը: Լոռեցիները փայլուն մասնակցություն են ունեցել հանրապետական եզրափակիչ փուլին՝ ճանաչվելով 1-ին ուսումնամարզական խաղերի չեմպիոն: Թիմին ընդունել և պատվոգրերով ու նվերներով պարգևատրել է ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանը:

Կազմակերպվել է ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն նախադպրոցական հիմնարկ>> մրցույթի տարածաշրջանային և մարզային փուլերը: Մարզային փուլի հաղթող է ճանաչվել Վանաձորի թիվ 31 ՆՈՒՀ-ի թիմը, որը գերազանց մասնակցություն է ունեցել Երևանում կայացած հանրապետական եզրափակիչ փուլին՝ գրավելով երկրորդ տեղ: Երեխաները մարզպետի կողմից արժանացել են ընդունելության և պարգևատրվել նվերներով:

Հուլիս ամսին կայացել են ՀՀ անկախության 25-րդ տարելիցին նվիրված ամենամյա դպրոցականների մարզական խաղերի տարածաշրջանային, մարզային և հանրապետական եզրափակիչ փուլի մրցումները, որին մասնակցել են Լոռու մարզի հավաքական թիմերը: Մեր մարզը ներկայացնող թիմերը եզրափակիչ փուլում գրավել են 3 առաջին տեղ /թեթև աթլետիկա տղաներ, սեղանի թենիս աղջիկներ, սեղանի թենիս տղաներ/:

Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի և Վանաձորի քաղաքապետարանի ենթակայության տակ գործող շախմատի դպրոցի ջանքերով կայացել են *դպրոցականների շախմատի օլիմպիադայի ներդպրոցական, համայնքային և մարզային փուլերը*:

Մարզի հանրակրթական դպրոցների 1-6-րդ դասարանի աշակերտների շրջանում կազմակերպվել է ՀՀ <<Ազգային Ժողովի Գավաթ>>-ի *խաղարկության մրցումների ներդպրոցական, տարածաշրջանային, մարզային փուլերը*: 3-6-րդ դասարանի 1-ին տեղ գրաված թիմերը <<Լոռու մշակույթ, սպորտ երիտասարդություն>> հիմնադրամի կողմից ստացել են մարզահագուստ և մարզակոշիկ հանրապետական փուլին մասնակցելու համար /թվով 12 աշակերտ/:

Կազմակերպվել են ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընդհանրություն>> մրցույթի 2016թ.տարածաշրջանային, մարզային փուլերը:

2016թ. Օգոստոսի 17-23-ը Ծաղկաձորում անց է կացվել <<Բազե-2016>> երիտասարդական հավաքը, որին մասնակցել է նաև Լոռու մարզը ներկայացնող ջոկատը: Լոռեցի երիտասարդները փայլուն մասնակցություն են ունեցել հավաքի ընթացքում կազմակերպված մրցումներին՝ երրորդ տարին անընդմեջ ճանաչվելով հավաքի լավագույն ջոկատ:

Սեպտեմբեր ամսին կազմակերպվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն հաշմանդամ մարզիկ>> մրցույթի Լոռու մարզային փուլը, որի հաղթողները մասնակցել են Ծաղկաձորում անցկացված եզրափակիչ փուլին: Գրավելով 2 առաջին, 2 երկրորդ և 2 երրորդ տեղ, Լոռու մարզի թիմը հասավ անախադեպ հաջողության՝ ընդհանուր հաշվարկում գրավելով 1-ին տեղը:

Սեպտեմբերին մարզի թվով 7 քաղաքներում և Գուգարք համայնքում կազմակերպվել են մարզական փառատոններ, որոնց ընդհանուր թվով մասնակցել են շուրջ 7.500 մարդ:

Մարզական փառատոնը լավագույնս կազմակերպելու համար Վանաձոր համայնքը 4-րդ անգամ հանրապետությունում գրավել է 1-ին տեղ:

Հոկտեմբերին կազմակերպվել են ավագ տարիքի դպրոցականների ամենամյա ռազմա-մարզական խաղերի դպրոցական, տարածքային և մարզային փուլերը: Մարզային փուլում հաղթող է ճանաչվել Լեռնապատի դպրոցի թիմը, որը նոյեմբերի 1-4 Երևանի Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում մասնակցել է հանրապետական եզրափակիչ փուլին:

Հոկտեմբեր ամսին ամփոփվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> > հանրապետական մրցույթների համար ներկայացված հայտերը: <<Լավագույն գյուղական մարզական համայնք>> անվանակարգում երրորդ տեղ է գրավել Լոռու մարզը ներկայացրած Լեռնապատ համայնքը:

2016թ. ընթացքում ՀՀ Լոռու մարզպետին կից գործող երիտասարդական խորհուրդը քննարկել է մարզի երիտասարդությանը հուզող բազմաթիվ խնդիրներ և ծրագրեր, ուսումնասիրվել են բազմաթիվ առաջարկություններ:

2016թ-ի ընթացքում Հայաստանի երիտասարդական հիմնադրամի Լոռու մարզային կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել են հանդիպումներ մարզի առավել ակտիվ երիտասարդների հետ: Տարբեր թեմաներով կազմակերպվել են բազմաթիվ քննարկումներ, կլոր սեղաններ մարզի տարածքում գործող հասարակական կազմակերպությունների, ԲՈՒՀ-երի ուսնողական խորհուրդների այլ շահագրգիռ կազմակերպությունների և անհատների հետ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2016թ. ընթացքում Լոռու մարզում գործել են հետևյալ բուժհաստատությունները

h/ h	բուժհաստատության տեսակը	քանակը	մահճակալների թիվը
	հիվանդանոց	1	45
	բժշկական կենտրոններ՝	5	400
	«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ		186
	«Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ		60
	«Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ		60
	«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ		50
	«Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ		40
	դիսպանսեր	1	35
	առողջության կենտրոն	1	10
	պոլիկլինիկաներ	4	
	Լոռու մարզային արյան փոխներարկման կայան	1	
	առողջության առաջնային պահպանման կենտրոններ /ամբուլատորիաներ/	18 (որից համայնքային ենթակայության՝ 5)	
	առողջապահական ընկերությունների կազմում գործող բուժակ-մանկաբարձական կետեր	95	
	Ընդամենը՝	31	486

Մարզի տարածքում գործող բուժհաստատություններ.

1.Առողջության առաջնային պահպանման և հիվանդանոցային բուժօգնություն իրականացնող հաստատություններ.

- ✓ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- ✓ « Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊԲԸ
- ✓ «Լոռու մարզային հոգեոնյարդաբանական դիսպանսեր» ՊԲԸ
- ✓ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- ✓ «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ
- ✓ « Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ
- ✓ «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ
- ✓ «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ

2. ԱԱՊ բուժօգնություն իրականացնող հաստատություններ՝ պոլիկլինիկաներ.

- ✓ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊԲԸ
- ✓ «Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊԲԸ
- ✓ «Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՊԲԸ
- ✓ « Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՊԲԸ

3. ԱԱՊ բուժօգնություն իրականացնող գյուղական ամբուլատորիաներ, առողջության առաջնային պահպանման կենտրոններ.

- ✓ «Ախթալայի առողջության կենտրոն» ՊԲԸ
- ✓ «Ճոճկանի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ
- ✓ «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ
- ✓ «Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ
- ✓ «Աքորու առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ
- ✓ «Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ
- ✓ «Դսեղի առողջության կենտրոն» ՊՈԱԿ
- ✓ «Թումանյանի առողջության կենտրոն» ՊԲԸ
- ✓ «Վարդաբլուրի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ
- ✓ «Ուռուտի բժշկական ամբուլատորիա» ՊՈԱԿ
- ✓ «Վահագնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ
- ✓ «Մարգահովիտի առողջության կենտրոն» ՊՈԱԿ
- ✓ «Լեռնապատի առողջության կենտրոն» ՊՈԱԿ
- ✓ «Շահումյանի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ
- ✓ «Գուգարքի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ
- ✓ «Ջրաշենի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ
- ✓ «Արևաշողի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՊՈԱԿ
- ✓ «Մեծավանի առողջության կենտրոն» ՊՈԱԿ

Մարզի առողջապահական ընկերություններում աշխատում են՝ բժիշկներ - 405, միջին բուժաշխատողներ- 1010, այլ- 576, ընդամենը՝ 1991 մարդ:

2016թ. ընթացքում առողջապահության համակարգում նախատեսված պետական պատվերի կատարողական աշխատանքների բազային ծավալը ներկայացվում է՝

2016թ. Բազային ծավալ հազ.դրամ		Կատարողական	Ֆինանսավորում
Հիվանդանոցային՝	1 579 648.5	1 572 796.8	1 572 796.8
Արտահիվանդանոցային՝	2 218 243.5	2 201 426.3	2 201 426.3
ԸՆԴԱՄԵՆԸ՝	3 797 892.0	3 774 223.1	3 774 223.1

Ընդունված կատարողականը ֆինանսավորվել է 100 %-ով:

Մարզային ենթակայության առողջապահական ընկերություններում վճարովի ծառայության մուտքերը ըստ տարիների՝

	Վճարովի ծառայության մուտքերը կազմել են՝ հազ.դրամ	որից համավճարը՝ հազ.դրամ
2014թ.	475415.9	33126.1
2015թ.	523786.7	31 571.1
2016թ.	526069.1	28632.5

Մարզում պետական պատվեր իրականացնող ընկերություններում ընդհանուր վճարովի ծառայության մուտքերը ըստ տարիների՝

	Վճարովի ծառայության մուտքերը կազմել են՝ հազ.դրամ
2014թ.	543309.7
2015թ.	570895.3
2016թ.	572801.0

Առողջապահության համակարգում ֆինանսավորումը շարունակվել է իրականացվել սահմանափակված բյուջեի ֆինանսավորման սկզբունքով:

Մարզպետարանի ենթակայության բաժնետիրական ընկերությունների ծախսերի վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական պատվերի ֆինանսավորումն ստանալուց եւ վճարումները կատարելուց հետո յուրաքանչյուր ամսվա 1-ի դրությամբ կրեդիտորական պարտքերը չեն գերազանցում տվյալ եռամսյակի համար մարզպետարանի կողմից հաստատված նախահաշվային գումարի մեկ երրորդը:

2016թ.արդյունքներով աշխատավարձի գծով պարտքեր առողջապահական ընկերությունները չունեն:

Ընթացքի մեջ է՝

«Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի կառուցման շարունակական աշխատանքները, որի ընդհանուր արժեքը կազմում է 4.6 մլրդ դրամ, որից ծննդատան մասնաշենքի արժեքն է 1.1 մլրդ. դրամ, մնացած մասնաշենքի արժեքը՝ 3.5 մլրդ: 2016թ.կատարվել են ավելի քան 850 մլն. դրամի աշխատանքներ:

Ավարտվել են՝

«Գուգարք» կենտրոնական պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով ընթացիկ վերանորոգման աշխատանքներ՝ պատուհանների և պատուհանագոգերի վերանորոգում 470170 դրամի չափով, կահույքի ձեռք բերում՝ 663.5 հազ. դրամի չափով:

«Օձունի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի կողմից սեփական միջոցներով Հազվու ԲՄԿ-ի 2 սենյակի և միջանցքի բետոնապատում:

«Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից սեփական միջոցներով «Ուլտրաձայնային սոնոգրաֆ» ապարատի ձեռքբերում՝ 2300.0 հազ. դրամ արժեքով:

«Գուգարքի ԱԱՊԿ» ՓԲԸ-ի կողմից սեփական միջոցներով միկրոլաբ 540 բիոքիմիական հատուկ ֆոտոմետրի ձեռքբերում՝ 430.000 դրամ արժեքով:

«Դիակոնիա-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից կատարվել է Շենավանի բուժակմանկաբարձական կետի կապիտալ վերանորոգում՝ մոտ 2 մլն.150 հազ.արժեքով, իսկ կահավորանքի և բուժսարքավորումների հագեցվածությունը իրականացվել է «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի միջոցներով՝ մոտ 700.000 դրամի արժողությամբ:

«Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում մարզային ակնաբուժական կենտրոնի ստեղծում: «Հայկական ակնաբուժական նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից ներդրումը կազմել է մոտ 42 մլն. դրամ, իսկ Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից

վերանորոգման աշխատանքների, կահավորման և լիցենզիայի պահանջները բավարարելու համար ներդրվել է մոտ 4 մլն. դրամ:

«Բաց հասարակություն» ՀԿ-ի հետ համատեղ հոգեկան հիվանդների խնամք իրականացնելու նպատակով Սպիտակ քաղաքում ստեղծվել է հոգեկան առողջության կենտրոն՝ նախատեսված 16 հիվանդների համար: Կենտրոնը սկսել է իր գործունեությունը 2016թ. հունիսի 1-ից: Կատարվել է 25 մլն. դրամի ներդրում:

ՀՀ Ան տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային կենտրոնի միջոցով «Սպիտակի բժշկական կենտրոն», «Ալավերդու բժշկական կենտրոն» և «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ների ֆյուրոգրաֆիայի ապարատների թվայնացում՝ յուրաքանչյուրը 23 մլն 400 հազ. դրամական արժեքով՝ 70մլն 200 հազ. ընդհանուր արժեքով:

«Դիակոնիա-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ին «Ուլտրաձայնային սոնոգրաֆ» ապարատի տրամադրում՝ 3.2 մլն:

«Դիակոնիա-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի Սանահին/Սարահարթ թաղամասի բուժկետի վերանորոգում՝ մոտ 8 մլն. արժեքով, սեփական միջոցներով գազաֆիկացում և կահավորում մոտ 1, 7 մլն. դրամ արժեքով:

«Դիակոնիա-Հայաստան» բարեգործական հիմնադրամի կողմից «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հակատուբերկուլյոզային մասնաշենքի վերանորոգում՝ մոտ 7.9 մլն. դրամ արժեքով:

«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ձեռք է բերվել վիդեոլարինգոսկոպ, ԷՍԳ հոլտեր և Զ/Ճ հոլտեր սարքավորումներ՝ 3630.0 դր արժեքով:

«Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել «Sono Scape S6» ուլտրաձայնային հետազոտման սարք՝ 6100.0 հազ. դր արժեքով:

«Վանաձորի թիվ 3 պոլիկլինիկա» ՓԲԸ-ները սեփական միջոցներով ձեռք է բերել միկրոպլանշետային ջերմային թափահարիչ և իմունոֆերմենտային վերլուծիչ՝ 1710.0 հազ դրամ:

«Վանաձորի թիվ 5 պոլիկլինիկա» ՓԲԸ-ն սեփական միջոցներով ձեռք է բերել գազի այրիչ՝ 307.5 հազ. դրամ:

Միասնական էլեկտրոնային համակարգի անցման նպատակով ՀՀ ԱՆ-ի կողմից մարզի որոշ առողջապահական ընկերություններին տրամադրվել են համակարգչային հավաքածուներ:

«Վորլդ Վիժն» կազմակերպության կողմից գույք է տրամադրվել նաև«Արևածագի ԱԱԴԿ» ՊՈԱԿ-ի կազմում գործող նոր վերանորոգված «Կարմիր Աղեգու» ԲՄԿ-ին:

Ընդամենը՝ 180788.0 հազ դրամ:

«Լոռու առողջապահություն» հիմնադրամը, որը ստեղծված է մարզի առողջապահության բնագավառին տարաբնույթ աջակցություն ցուցաբերելու նպատակով, առողջապահական ընկերությունների, Լոռու մարզից զոհված զինծառայողների ընտանիքներին, առողջական տարբեր խնդիրներ ունեցող բուժաշխատողների և մարզի տարբեր սոցիալական խնդիրներ ունեցող քաղաքացիների տրամադրվել է ֆինանսական աջակցություն՝ ընդամենը՝ 17993.0 հազ. դրամ:

2016թ մարզի առողջապահական ընկերություններում սահմանված կարգով ապահովվել է բնակչության անվճար բուժօգնությունը, իրագործվել են պետական առողջապահական ծրագրեր: Մարզպետի կողմից տրամադրվել է շուրջ 102 միջնորդագրեր՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերում չընդգրկված, սակայն անապահով վիճակում գտնվող անձանց բուժօգնություն ցուցաբերելու նպատակով: Մարզից Երևան քաղաքի առողջապահական ընկերություններ են ուղեգրվել 39 հիվանդներ, որոնք հիմնականում այն հիվանդներն են, որոնց բուժօգնությունը մարզում կազմակերպել հնարավոր չէր /տվյալ ծառայության բացակայություն կամ մասնագիտացված բուժօգնության կազմակերպում/:

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 2-ի N 1911-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 285-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի վերակազմակերպել են «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» և «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությունները՝ «Վանաձորի թիվ 4 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությունը միացնելով «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» պետական փակ բաժնետիրական ընկերությանը: Նույն որոշմամբ լուծարման գործընթաց է սկսվել «Կուրթանի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Ագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Գյուլագարակի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Գարգառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություններում՝ «Ստեփանավանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կազմում ստեղծելով Կուրթանի, Ագարակի, Գյուլագարակի, Գարգառի բուժակ-մանկաբարձական կետեր:

Ոլորտում բնակչության առողջական վիճակը բնութագրող կարևորագույն ցուցանիշներ են հիվանդացությունը և մահացությունը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ ինչպես հանրապետությունում, այնպես էլ մարզում դեռևս բարձր են հիվանդացության մակարդակները: Վերջին տարիներին տարբեր հիվանդություններով հիվանդացությունը ենթարկվել է էական ներկառուցվածքային և քանակական փոփոխությունների:

2012-2016թթ. տվյալները, որը բերվում են ստորև, ցույց են տալիս, որ մարզում առկա է շաքարային դիաբետով, հոգեկան հիվանդություններով, նորագոյացություններով հիվանդացության աճ:

	2012թ	2013թ	2014թ	2015թ	2016թ
Շաքարային դիաբետ	3902	4013	4312	4748	4906
Նորագոյացություններ	3004	3136	3289	3497	3531
Հոգեկան հիվանդություններ	4792 /այդ թվում 592-ը նարկոլոգ. կաբ./	4500, այդ թվում 596 -ը նարկոլոգ. կաբ./	5000, այդ թվում 655-ը նարկոլոգ. կաբ./	5062, այդ թվում 588-ը նարկոլոգ. կաբ./	5243, այդ թվում 604-ը նարկոլոգ. կաբ./
Սեռավարակներ	1312	1278	1197	1312	1269
Պարբերական հիվանդություններ	420	442	491	502	478
Տուբերկուլոզ	615	402	380	368	372

MSF /բժիշկներ առանց սահմանի/ կազմակերպությունը 5-6 տարի է զբաղվում է Լոռու մարզի դեղորայքակայուն տուբերկուլոզով հիվանդների բուժմամբ: Արդյունքում արձանագրվել է տուբերկուլոզի կայուն ձևերով հիվանդների թվի նվազեցում:

Լոռու մարզում հաշվառված և ծրագրային հեմոդիալիզական բուժում են ստանում 60 հիվանդներ:

ՀՀ առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոնից մարզի համար ձեռք է բերվում մարդասիրական օգնության ճանապարհով մարզին հասկացված՝ 81.951 հազ. դրամ արժեքով և կենտրոնացված գնումների միջոցով ձեռք բերված դեղորայքը՝ 120.063.7 հազ. դրամ արժեքով դեղորայք:

Պարբերաբար ՀՀ առողջապահության նախարարություն է ներկայացվել Լոռու մարզի առողջապահական ընկերություններին անհրաժեշտ մասնագետների պահանջարկը: ՀՀ ԱՆ-ի հետ համագործակցության արդյունքում ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ գործուղումներով Լոռու մարզ են գործուղվել բժիշկներ:

2016թ. մարզի առողջապահական ընկերություններ են ընդունվել 18 երիտասարդ մասնագետներ:

Շարունակական բնույթ է կրել բժշկական անձնակազմի վերապատրաստման գործընթացը: Մարզից ՌԴ-ի Սանկտ-Պետերբուրգ քաղաքում վերապատրաստում է անցել 1 բժիշկ, Մոսկվա քաղաքում 1 բժիշկ, Չինաստանի Հանրապետությունում՝ 1 բժիշկ:

ՀՀ Լոռու մարզպետարանի կողմից միջնորդագիր է տրամադրվել 5 բժիշկի կլինիկական օրդինատուրայում տարբեր մասնագիտություններով սովորելու՝ հետագայում մարզում աշխատելու պայմանով, և մեկ բժշկի մասնագիտական վերապատրաստում անցնելու:

Լոռու մարզ գործուղված, ինչպես նաև ոչ տեղաբնակ նոր նշանակված բժիշկ-մասնագետների բնակարանային կարիքները լուծելու հարցում ցուցաբերվում է նյութական և կենցաղային հետևողական աջակցություն /«Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում՝ 2 և «Ալավերդու բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում աշխատանքի են ընդունվել 1 սիրիահայ բժիշկներ/:

Կազմակերպվել և անց են կացվել «Արևածագի առողջության առաջնային պահպանման կենտրոն», «Մարգահովիտի առողջության կենտրոն», «Լեռնապատի առողջության կենտրոն» ՊՈԱԿ-ների և «Ախթալայի առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ի տնօրենների թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթները:

ԶԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնի կողմից Լոռու մարզի 5 համայնքներում միգրանտների շրջանում կազմակերպվել են լաբորատոր հետազոտություններ:

Մանկական բժիշկների հայկական ասոցիացիայի կողմից Երևան քաղաքում և Լոռու մարզում կազմակերպվել է «տեղամասային մանկաբույժի դպրոց»՝ տարբեր թեմաներով, որոնց մասնակցել են մոտ 50 մանկաբույժներ և ընտանեկան բժիշկներ:

Հայ-Ամերիկյան համալսարանում ՀՕՖ-ի կողմից կազմակերպվել է «Այսօրվա սնուցումը կարևոր է վաղը» թեմայով միջազգային համաժողով, որին Լոռու մարզից մասնակցել են 26 բժիշկներ:

ԱՀԿ-ն Իմունոկանխարգելման ազգային ծրագրով կազմակերպել է պոլիոմիելիտի եռավալենտ պատվաստանյութը երկվալենտով փոխարինելու վերաբերյալ դասընթացներ:

Նեոնատալ ծառայության բարելավման նպատակով նեոնատոլոգների հայկական ասոցիացիան «Վորդ Վիժն» միջազգային կազմակերպության հետ համատեղ կազմակերպել են 5-օրյա դասընթացներ մարզի բոլոր նեոնատոլոգների և նեոնատալ բուժքույրերի համար: Կազմակերպվել են նաև աշխատանքային այցեր ասոցիացիայի մասնագետների կողմից՝ տեղերում ցուցաբերելով մասնագիտական աջակցություն:

ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից կազմակերպվել է մարզի առողջապահական ընկերություններում աշխատող ԲՍՖՀ ուղեգրման գործընթացում ներգրավված բժիշկ մասնագետների վերապատրաստում:

«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության կողմից կազմակերպվել են բժշկական ֆորումներ մարզի մանկաբույժների, ընտանեկան բժիշկների, մանկական վիրաբույժների և մանկական վնասվածքաբանների համար:

Սրտաբանների ասոցիացիայի կողմից Երևանում կազմակերպված գիտաժողովին մարզից մասնակցել են 5 սրտաբաններ:

«Էրեբունի» բժշկական կենտրոնի առաջատար մասնագետների կողմից Լոռու մարզի բժիշկների համար կազմակերպվել է գիտաբժշկական կոնֆերանս, որին մասնակցել են թվով 62 բժիշկներ՝ նյարդաբաններ, սրտաբաններ, թերապևտներ, ընտանեկան բժիշկներ:

Զորակոչային և նախազորակոչային աշխատանքները մարզում ապահովում են 5 տարածաշրջանային և 1 ստացիոնար /վիրաբուժական եւ թերապևտիկ պրոֆի/ բժշկական հանձնաժողովները:

Համաձայն ՀՀ ԱՆ28.03.2014թ. թիվ 617-Ա և ՀՀ ՊՆ 01.04.2014թ.թիվ 5-Ա համատեղ հրամանի և ՀՀ ԱՆ 13.05.2014թ. թիվ 1014-Ա հրամանի Լոռու մարզում նախազորակոչիկների, զորակոչիկների և զինծառայողների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացը իրականացվել է ըստ կցագրված բուժհաստատությունների ցանկի՝ Վանաձոր քաղաքի և Գուգարքի տարածաշրջանի համար՝ «Վանաձորի թիվ 1 պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ում,

տարածաշրջանների համար՝ համապատասխան տարածաշրջանային բժշկական կենտրոններում:

Համաձայն «Այլընտրանքային ծառայության մասին» ՀՀ օրենքի, այլընտրանքային ծառայության հարցերով հանրապետական հանձնաժողովի որոշմամբ 2015 թվականի հունվարի 13-ից «Լոռու մարզային հոգեյարդաբանական դիսպանսեր» ՊԲԲԸ-ում երեք անձինք շարունակում են իրականացնել այլընտրանքային ծառայություն:

2016թ. մարզում արձանագրվել է երեխայի 18 մեռելածին դեպք, 0-7 օրեկան երեխայի 6 մահ, 0-1 տարեկան երեխայի 7 ստացիոնար և 1 տնային մահ, 1-5 տարեկան երեխայի 3 ստացիոնար և 3 տնային մահ/ :

Լոռու մարզ	մանկական մահացություն /պրոմիլե/	պերինատալ մահացություն /պրոմիլե/
2011թ	9.6	13.1
2012թ	5.6	14.4
2013թ	6.0	11.3
2014թ	3.8	9.3
2015թ	8.2	13.3
2016թ	5.8	9.2

2016թ. «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում արձանագրվել է 1 մայրական մահ:

2011-2016թթ. Լոռու մարզում ծնելիության, մահացության և բնական աճի ցուցանիշներ

Լոռու մարզ		Ծնելիություն	Մահացություն	Բնական աճ
2011	բացարձակ թիվ	3123	2935	0.7 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	11.1	10.4	
2012	բացարձակ թիվ	3049	2789	0.9 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	10.6	9.7	
2013	բացարձակ թիվ	2919	2777	0.6 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.5	11.9	
2014	բացարձակ թիվ	3211	2644	2.2 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.1	9.9	
2015	բացարձակ թիվ	2931	2777	0.6 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	11.1	10.5	
2016	բացարձակ թիվ	2856	2760	0.4 պրոմիլե
	ըստ 1000 բնակչի	12.7	12.3	

Թումանյանի տարածաշրջանի Շնող համայնքում արձանագրված «Լեյշմանիոզ» դեպքի, գրիպով հիվանդացության շեմի բարձրացման հետ կապված ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Լոռու մարզային կենտրոնի հետ համատեղ կազմակերպվել են խորհրդակցություններ, առողջապահական ընկերությունների հետ համատեղ իրականացվել է ակտիվ աշխատանք: Նրանք ստացել են համապատասխան մեթոդական ցուցումներ անհրաժեշտության դեպքում իրենց վրա դրված պարտականությունները ճիշտ և պատշաճ կատարելու համար:

ՀՀ առողջապահության նախարարության հետ համատեղ վարչությունը իրականացրել է նաև հատուկ /առանձին/ և սոցիալական անապահով խմբերի քաղաքացիներին հանրապետության առողջարաններ ուղեգրման գործընթացը: 2016թ. «Ջերմուկ», «Գանձադքյուր», «ԱՍԱՐ» առողջարաններ են ուղեգրվել 22, 103, 31 թվով քաղաքացիներ, իսկ «Արարատ» մոր և մանկան առողջարան՝ մինչև 18 տարեկան 8 երեխա:

2016թ. «Ոչ վարակիչ հիվանդությունների վերահսկում և կանխարգելում» ծրագրի շրջանակներում մարզում կատարվել է գլյուկոզայի հետազոտություն 14044 մարդ /66.8%/, պապ-քսուք՝ 7388 մարդ /76.4%/, արյան գերճնշման հետազոտություն՝ 19793 մարդ / 94.3%/:

2016թ. բուժաշխատողի օրվա կապակցությամբ կազմակերպվել և հանդիսավորությամբ նշվել է մարզային նշանակության ամենամյա միջոցառում «Լավագույն բուժաշխատող» անվանակարգով: Մարզպետի կողմից ստեղծված հանձնաժողովի կողմից ընտրվել և պարգևատրվել են վեց լավագույն մասնագետներ և մեկ բարեգործական կազմակերպություն՝ «Դիակոնիա-Հայաստան», բազմաթիվ բուժաշխատողներ արժանացել են պատվոգրերի և շնորհակալագրերի:

2016թ ապահովվել է մարզի ՔՊ բժշկական ծառայության մասնակցությունը մարզային փրկարարական վարչության կողմից կազմակերպված շտաբային ուսումնավարություններին՝ տարածաշրջանների բժշկական ծառայության պետերի, մարզի բժշկական ծառայության ղեկավար կազմի պատրաստականությունը ստուգելու և կատարելագործելու նպատակով:

Մարզում առողջապահական ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների հետ ընթացել են սերտ համագործակցային աշխատանքներ, մասնավորապես՝

- ✓ «Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության, ԱՄՆ ՄԶԳ-ի Առողջության առաջնային պահպանման բարեփոխումների /ԱԱՊԲ/ ծրագրերի հետ:
- ✓ «Հայաստանի մանուկներ հիմնադրամ» /COAF/ բարեգործական կազմակերպության կողմից Լոռու մարզի Թումանյան, Դսեղ, Քարինջ, Մարց, Դեբեդ, Ձորագյուղ, Մեծ Այրում, Աքորի, Արևածագ, Վահագնի համայնքներում իրականացվել են առողջապահական ծրագրեր՝ 12.350.000 դրամ արժեքով:
- ✓ «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» ԲՀԿ-ի կողմից «Վանաձորի բժշկական կենտրոն», «Տաշիր բժշկական կենտրոն», «Սպիտակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ներին, «Խնամքի տուն» հոգեկան առողջության կենտրոնին տրամադրվել է բժշկական նշանակության պարագաներ:
- ✓ «Լե լաբոդատուադ Սերվիե», «Գրինդեքս» դեղագործական ֆիրմաները մարզում կազմակերպել են սեմինարներ, որոնց մասնակցել են մարզի գրեթե բոլոր մասնագիտությամբ բժիշկներ:
- ✓ Լոռու մարզին Ֆրանսահայ բժիշկների միության Փարիզի մասնաճյուղի կողմից 2011թ. տրամադրվեց շարժական ստոմատոլոգիական կլինիկա, որի միջոցով անվճար ստոմատոլոգիական բուժօգնություն և սպասարկում կստանա մարզի 0-18 և 60-ից բարձր տարիքի ողջ ազգաբնակչությունը: Շարժական կլինիկան հերթականությամբ կայանվում է մարզի բոլոր պոլիկլինիկաներում, առողջության առաջնային պահպանման կենտրոններում և ամբուլատորիաներում՝ սպասարկելով նաև նրանց կազմի մեջ գտնվող բուժակ մանկաբարձական կետերի սպասարկման տարածքի ազգաբնակչությանը: Շարժական կլինիկան վերջացնելով Մարգահովիտ, Գուգարք, Դսեղ, Լեռնապատ, Գարգառ, Գյուլագարակ, Փամբակ, Շահումյան, Գյուլագարակ, Վարդաբլուր համայնքների ազգաբնակչության ստոմատոլոգիական սպասարկումը՝ տեղակայվել են Դարբաս համայնքում սպասարկելով 1995 մարդ:

Մարզի տարածքում գործում են բուժական տարբեր թեքումներով հետևյալ կենտրոնները՝ Վանաձորում «Հովարդ Կարագյոզյան» բարեգործական ատամնաբուժական և ակնաբուժական կենտրոնը սպասարկում է մանկական ազգաբնակչությանը:

- Ակնաբուժական ծառայություն՝ տարվա ընթացքում ընդունել է 5340 երեխա, անվճար տրվել է 218 ակնոց, Երևանում անվճար կատարվել է 3 վիրահատություն, իրականացվել է 3017 ապարատային բուժում:
- Ատամնաբուժական ծառայություն՝ տարվա ընթացքում ընդունել է 11055 երեխա, առաջնակի գրանցվել են 2114 երեխա, իրականացվել է 3477 ատամի հեռացում, կանխարգելիչ միջոցառումներ՝ 7477, լիցքեր՝ 8133, ռենտգեն հետազոտություններ՝ 1936: Սպիտակում՝ Ավետարանչական եկեղեցու հովանավորությամբ գործող «Հույս Հայաստանին» և «Ֆրանսահայ միության» մանկական բժշկական կենտրոնները, /հատկացվում է անվճար դեղորայք/:

Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործող /0322/ 2-33-99 հեռախոսահամարով թեժ գծի մասին իրազեկում բնակչությանը և համայնքների ղեկավարներին /համապատասխան հայտարարություն տպագրվել է մարզային լրագրում, հայտարարվել մարզխորհրդի ժամանակ/, տեքստը տեղադրվել է մարզպետարանի կայք-էջում, մարզի առողջապահական ընկերություններում տեսանելի վայրում փակցված են թեժ գծի հեռախոսահամարը՝ ազգաբնակչության կողմից բարձրացված հարցերին արագ արձագանքելու նպատակով: Թեժ գծի աշխատանքի արդյունքում նաև վեր են հանվում համակարգում առկա թերություններ, բացթողումներ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ


Սոցիալական աջակցություն

ՀՀ Լոռու մարզի 2014-2017թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրում համալիր կերպով ներկայացվել են ենթաբնագավառները և առաջարկվել բարելավման ենթածրագրեր, որոնք առնչվում են բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների մատչելիությանը, իրազեկության բարձրացմանը, հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների և հատուկ կարիքներ ունեցող երեխաների հիմնախնդիրների լուծմանը:

Ընտանիքների անապահովության գնահատման (ընտանեկան նպաստի) համակարգի բարելավումը ՀՀ կառավարության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի սոցիալական օժանդակության հիմնական բաղադրամասերից մեկն է:

Բնակչությանը սոցիալական ծառայություններ մատուցելու գործընթացը օրակարգային լինելով հանդերձ, մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինները (ՍԱՏՄ-ներ) նկատելի աշխատանք են տարել ընտանիքների փաստագրումը վաղօրոք կազմված ժամանակացույցով իրականացնելու ուղղությամբ:

ՍԱՏՄ-ների կողմից յուրաքանչյուր ամիս թարմացվել են տեղեկատվական շտեմարանները, որը կարևոր հանգամանք է անապահով խմբերին ուղղված միջոցների հասցեականությունը առավել հստակեցման գործում: Մարզպետարանի կողմից իրականացվել են ընտանեկան նպաստի և միանվագ դրամական օգնության նշանակման և վճարման գործընթացի վերահսկողությունը, հաշվետվությունների հավաքումն ու ամփոփումը, ինչպես նաև այդ տվյալների ամենամսյա վերլուծությունը: Աշխատանքների մասին բնակչությանը իրազեկվել է մամուլի, հեռուստատեսության (հարցազրույցներ, հոդվածներ), ինչպես նաև մարզպետարանի /վարչություն, ՍԱՏՄ-ներ/ և սոցիալական ուղղվածություն ունեցող ՀԿ-ներ ներկայացուցիչների հանդիպումների միջոցով:



2016թ. ընթացքում ՍԱՏՄ-ները փաստագրել են 24.149 ընտանիք (կանխատեսվել էր 25.204-ը), նրանցից նպաստի իրավունքը պահպանել են 17.672-ը, իրավունքը կորցրել՝ 2.202 ընտանիք (որոնցից՝ 135-ը փաստագրման, 1.296-ը չփաստագրման, իսկ 771-ը՝ ՍԱՏՄ-ների ուսումնասիրության արդյունքում): Նոր նպաստառու են դարձել 3.088 ընտանիքներ: 01.01.2017թ. դրությամբ նպաստառու են ամսական միջինացված 20.313 ընտանիք:

Մարզի ՍԱՏՄ-ները իրենց աշխատանքներն իրականացրել են պետության կողմից տրամադրված միջոցների սահմաններում: 2016թ. ընթացքում մարզի սոցիալական աջակցության տարածքային մարմինները տնտեսել են շուրջ 305 մլն դրամ:

Մարզում 2016թ. ընթացքում ՍԱՏՄ-ների կողմից վճարվել է ավելի քան 6 մլրդ 566 մլն դրամ պետական նպաստներ /ներառյալ՝ հրատապ օգնությունները/, այդ թվում՝ վճարվել է ավելի քան 6.26 մլրդ դրամ ընտանեկան նպաստ /ներառյալ՝ սոցիալական/ և հրատապ օգնություն՝ ավելի քան 303 մլն դրամ:

Նպաստառու ընտանիքի 1.129 երեխայի համար վճարվել է կրկնակի չափով ծննդյան նպաստ՝ 56.7 մլն դրամ/, առաջին դասարան հաճախող 1.688 երեխայի համար վճարվել է միանվագ օգնություն՝ շուրջ 42.275 մլն դրամ, 25 ընտանիքներում մահացած անդամի համար՝ 1.25 մլն դրամ, հրատապ օգնություն է վճարվել ավելի քան 203 մլն դրամ /միջին հաշվով յուրաքանչյուր ամիս 962 ընտանիքների/:

Ամբողջական վճարումների պատկերը, ըստ տարածաշրջանների

Պետական նպաստների մասով՝

/մլն դրամ/

Բնութագրիչներ		Վանաձոր		Սպիտակ		Ստեփանավան		Թումանյան		Տաշիր	
		Ընտ./ անձ /միջ./	Գումար	Ընտ./ անձ /միջ./	Գումար	Ընտ./ անձ /միջ./	Գումար	Ընտ./ անձ /միջ./	Գումար	Ընտ./ անձ /միջ./	Գումար
Ընտանեկան նպաստ	Ցուցակային	4846	1744.3	3769	1355.2	4004	1314.5	1206	460.9	1156	427.05
	Վճարված	4714	1678.6	3685	1316.7	3984	1305.6	1173	444.03	1130	414.35
Սոցիալական նպաստ	Ցուցակային	2277	491.29	1155	252.48	843	180.9	662	145.17	395	85.33
	Վճարված	2206	469.8	1114	240.3	828	176.4	638	136.93	375	80.45
Ընդամենը՝	Ցուցակային	7123	2235.6	4828	1607.7	4846	1495.4	1869	606.15	1551	512.38
	Վճարված	6920	2148.36	4799	1557.0	4812	1482.0	1810	580.9	1505	494.8

Հրապապ օգնություններ

/մլն դրամ/

Բնութագրիչներ		Վանաձոր		Սպիտակ		Ստեփանավան		Թումանյան		Տաշիր	
		Ընտ./ անձ	Գումար	Ընտ./ անձ	Գումար	Ընտ./ անձ	Գումար	Ընտ./ անձ	Գումար	Ընտ./ անձ	Գումար

		/միջ./		/միջ./		/միջ./		/միջ./		/միջ./	
Երեխայի ծննդյան միանվագ օգնություն /50.000դր./	Ցուցա կային	289	14.45	502	25.1	169	8.55	72	3.7	99	5.0
	Վճարվ ած	288	14.4	502	25.1	168	8.5	72	3.7	99	5.0
Երեխայի առաջին դասարան հաճախման միանվագ օգնություն /25.000դր./	Ցուցա կային	645	16.125	415	10.375	280	7.075	175	4.375	179	4.475
	Վճարվ ած	639	15.98	415	10.375	280	7.075	175	4.375	179	4.475
Ընտանիքի անդամի մահվան դեպքում /50.000դր./	Ցուցա կային	12	0.6	3	0.15	8	0.4	1	0.05	1	0.05
	Վճարվ ած	12	0.6	3	0.15	8	0.4	1	0.05	1	0.05
Եռամսյակային հրատապ օգնություն /18.000 դր./ միջին.	Ցուցա կային	345	73.11	246	52.14	229	48.13	89	18.97	78	16.89
	Վճարվ ած	335	70.56	241	50.89	226	47.46	87	18.37	74	15.72
Ընդամենը վճարված			1015.4		86.52		63.44		26.49		25.24

2016թ. մարզում սահմանված ժամկետներում վճարվել են պետական նպաստները և հրատապ դրամական օգնությունները:

Համաձայն ՀՀ ՍԱՊԾ-ի կողմից տրամադրված տեղեկատվության՝ 2016թ. ՀՀ Լոռու մարզում ծննդյան պետական նպաստ է տրվել 2964 երեխայի /2015թ.՝ 3774/ համար:

Ստորև, ըստ ծնված երեխաների հերթական կարգաթվի, ներկայացվում է համառոտ տեղեկատվությունը /2015-2016թթ.՝ համեմատականով/.

Տարածաշրջանը		Երեխաների թիվը	Նպաստների թվաքանակը՝ ըստ երեխայի հերթական կարգաթվի				
			Առաջին երեխա	2-րդ երեխա	3-րդ երեխա	4-րդ երեխա	5-րդ և հաջորդ երեխա
Վանաձոր	2015թ.	1613	718	636	217	32	10
	2016թ.	1318	573	501	199	27	18
Սպիտակ	2015թ.	737	342	268	114	10	3
	2016թ.	537	206	222	84	19	6
Ստեփանավան	2015թ.	425	200	137	71	13	4
	2016թ.	354	150	132	61	10	1
Թումանյան	2015թ.	653	274	242	116	17	4
	2016թ.	515	205	180	110	13	7
Տաշիր	2015թ.	346	164	132	38	9	3
	2016թ.	240	81	99	56	3	1
Ամբողջը՝	2015թ.	3774	1698	1415	556	81	24
	2016թ.	2964	1215	1134	510	72	33

ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից ստացված տվյալների /հարակից բազաներ/ համադրումները համակարգված ձևով է իրականացվում, իսկ հաշվետվային

գործընթացը իրականացվում է մարզպետարանի կողմից թվային, իսկ մարզի ՍԱՏՄ-ների կողմից՝ անհատական տվյալների ներկայացմամբ և տեղեկատվական շտեմարանների փոխանակմամբ (աշխատավարձ, մաքսային, անհատ ձեռնարկատիրական, անշարժ գույքի և անձնական ավտոմեքենայի առկայություն, էլեկտրաէներգիա, մինչև 2 տարեկան երեխայի խնամք, կենսաթոշակային, հաշմանդամության և զբաղվածության տվյալներ և այլն): Նկատելի աշխատանքներ են տարվել համադրման արդյունքում քաղաքացիներին ավելի վճարված գումարների ետգանձման ուղղությամբ:

2016թ. ընթացքում մարզի սոցիալական ծառայությունները սխալ տեղեկություններ ներկայացրած քաղաքացիներից ետ են գանձել շուրջ 14.733 մլն դրամ, որից շուրջ 7.45 մլն դրամը բաժին է ընկնում Վանաձորի սոցիալական աջակցության տարածքային բաժնին:

Հաշվետու ժամանակաշրջանում՝ 2016թ. ընթացքում, ըստ մարզի ՍԱՏՄ-ների, ավելի վճարված նպաստների հետգանձման վերաբերյալ տեղեկատվություն, գործընթացը անընդհատ և շարունակական է՝

/մլն դրամ/

	Հետգանձման ենթակա	Փաստացի ետ է գանձվել 2016թ. ընթացքում	Սոցիալական աջակցության խորհուրդների և դատական ատյանի կողմից մարված	Մնացորդը՝ 01.01.2017թ դրությամբ
Վանաձորի ՍԱՏՄ	17.75	7.45	3.13	10.31
Սպիտակի ՍԱՏԳ	4.97	3.48	0	1.49
Ստեփանավանի ՍԱՏԳ	2.25	2.04	1.02	0.21
Թումանյանի ՍԱՏԳ	1.12	0.8	0.07	0.32
Տաշիրի ՍԱՏԳ	1.53	0.97	0	0.56
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ	27.62	14.73	4.23	12.89

Շարունակվել է վերահսկվել մարզի սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների կողմից քաղաքացիներին տարբեր կազմակերպություններ /այդ թվում՝ հանրապետության բժշկական հաստատություններ, կրթական, կոմունալ և այլն/ ներկայացվող տեղեկանքների տրամադրման գործընթացը:

2016թ. ընթացքում մարզի ՍԱՏԳ-ների կողմից տրամադրվել են 9.110 տեղեկանքներ /2015թ. տրամադրվել է 8.588 տեղեկանք/, պատկերը հետևյալն է.

Տեղեկանքների բնույթը և տրամադրող մարմինը	Վանաձորի ՍԱՏՄ	Սպիտակի ՍԱՏԳ	Ստեփանավանի ՍԱՏԳ	Թումանյանի ՍԱՏԳ	Տաշիրի ՍԱՏԳ	Լոռու մարզ
Ա /անձնագրային ծառայություն	1.221	349	326	139	350	2.385
Բ /բժշկական ընկերություններ	1.944	740	880	501	261	4.326
Գ /գիտա - կրթական հաստատություններ	899	330	174	121	42	1.566
Դ /այլ ծառայություններ/	234	310	149	66	70	829
Ամբողջը՝	4.298	1.729	1.529	827	727	9.110


Մարզի ՍԱՏՄ-ների կողմից շարունակվել են ավանդի դիմաց տրվող փոխհատուցման գործընթացը: 2016թ. ընթացքում փոխհատուցվել է 493 անձ՝ ավելի քան 105.153 մլն դրամի չափով /2015թ.՝ 387 անձ 80.6 մլն դրամի չափով/:

2007-2016թթ. ընթացքում փոխհատուցվել են 15.706 քաղաքացիներ՝ շուրջ 2 մլրդ 748 մլն դրամ:

Մարզպետարանի կողմից համակարգվել են ընտանեկան նպաստի գործունեությունը կանոնակարգող անհրաժեշտ օրենսդրական և մեթոդական հրահանգների ՍԱՏԳ-ներին տրամադրման աշխատանքները:

Կենսաթոշակային ապահովություն

ՀՀ ԱՍՀՆ-ի սոցիալական ապահովության պետական ծառայության (ՍԱՊԾ) կողմից տրամադրվել է Լոռու մարզի կենսաթոշակառուների տեղեկատվական թվային բազան:




ՀՀ Լոռու մարզում կենսաթոշակ են ստանում 52.120 մարդ, հաշմանդամություն ունեն 19.382-ը (որից առաջին խումբ՝ 811, երկրորդ խումբ՝ 7.869, երրորդ խումբ՝ 9.932, մանկուց հաշմանդամություն ունեն 770 երեխա), ծնողազուրկ են 2.307 երեխա:

Կենսաթոշակի հիմնական մասը կազմում է 16.000 դրամ, աշխատանքային ստաժի մեկ տարվա արժեքը՝ առաջին 10 տարվա համար (800 դրամ), 10 տարին գերազանցող յուրաքանչյուր տարվա համար 500 դրամ:

Մարզում սահմանված ժամկետներում վճարվել են 2016թ. բոլոր ամիսների կենսաթոշակները:

Աշխատաշուկա և զբաղվածություն

2016թ. Լոռու մարզում շարունակվել է ակտիվ աշխատաշուկայի ստեղծման և զբաղվածության խթանման քաղաքականությունը: Մարզի զբաղվածության տարածքային կենտրոններից ստացված տվյալների հիման վրա պատկերը հետևյալն է.



Գործազուրկների թիվը կազմում է առ 01.01.2017թ. դրությամբ՝ 10399 մարդ, որից՝ 7191-ը կանայք են (Վանաձոր՝ 4515/3105-ը կին, Ալավերդի 1591/1092, Ստեփանավան՝ 2224/1629, Սպիտակ՝ 1704/1085, Տաշիր՝ 365/280): Քանի որ պետական ծրագրերը ավելի պահանջարկված ու նպատակամետ են, այդ պատճառով էլ նկատելիորեն բարձրացել է գործազուրկների ակտիվությունը տվյալ ծրագրերում ընդգրկվելու նախաձեռնողականությունը:

Աշխատանք փնտրողների թիվը 01.01.2017թ. կազմել է 11017 մարդ, նախորդ ժամանակահատվածում՝ 11159 մարդ /Վանաձոր՝ 4665, Ալավերդի՝ 1850, Սպիտակ՝ 1777, Ստեփանավան՝ 2292, Տաշիր՝ 433/: Նրանցից աշխատանքի է տեղավորվել 1001 մարդ, որից՝ 716 կին (Վանաձոր՝ 533 /որից՝ 420՝ կին/, Ալավերդի՝ 104 /որից՝ 69 կին/, Ստեփանավան՝ 209 /որից՝ 116 կին/, Սպիտակ 89 /որից՝ 68 կին/, Տաշիր՝ 66 /որից՝ 43 կին/:

Զբաղվածության ամենամյա ծրագրերով աշխատանքի է ընդունվել 246 մարդ /Վանաձոր՝ 130, Ալավերդի՝ 17, Սպիտակ՝ 27, Ստեփանավան՝ 41, Տաշիր՝ 31/:

Մարզում բարձր մակարդակի վրա է մնում աղքատությունը: Աղքատության մակարդակը մարզում կազմում է 36.4%՝ նախորդ տարվա 38.6%-ի դիմաց: Իսկ ծայրահեղ աղքատները՝ 3.0%՝ նախորդ տարվա 2.6%-ի դիմաց, այսինքն բարձրացել է ծայրահեղ աղքատների թիվը:

Միջին ամսական աշխատավարձը մարզում կազմում է 145302 դրամ, միջին հանրապետականի՝ 180111 դրամի դիմաց (80.7 %):

ՀՀ կառավարության 17.04.2014թ. թիվ 534-Ն որոշման պահանջների համաձայն՝

ա/ Մարզպետի կողմից հաստատված ժամանակացույցով մարզի 4 համայնքներում /Վանաձոր, Փամբակ, Գարգառ և Մեծ Պարնի համայնքներում/ իրականացվել են վարձատրվող հասարակական աշխատանքներ:

բ/ գյուղական բնակավայրերի բնակչության շրջանում՝ աշխատաշուկայում աշխատաշուկայում անմրցունակ, գյուղատնտեսական նշանակության հողի սեփականատեր կամ վարձակալ կամ անհատույց օգտագործող հանդիսացող անձանց ներգրավմամբ իրականացվեց Սեզոնային զբաղվածության խթանման ուղղված ծրագիրը, որի շրջանակներում 554 ծրագրերի համար պետությունը ֆինանսավորել է շուրջ 79.8 մլն դրամ /նախորդ տարի 280 ծրագրեր՝ շուրջ 42.2 մլն դրամ/, որից՝ Վանաձոր՝ 161 /24.17 մլն դրամ/, Ալավերդի՝ 47 /9.97 մլն դրամ/, Սպիտակ՝ 168 /19.6 մլն դրամ/, Ստեփանավան՝ 142 /18.51 մլն դրամ/, Տաշիր՝ 36 /7.55 մլն դրամ/:

Զբաղվածության պետական գործակալության կողմից Վանաձորում 22.07.2016թ. անցկացվեց «Աշխատանքի տոնավաճառ», որին մասնակցություն ունեցան 26 գործատուներ, փաստվեց 327 թափուր աշխատատեղերի պահանջարկը, ևս 204-ը՝ սպասելիքով:

Աշխատատեղերի պահանջարկը հիմնականում սպասարկման բնագավառից են /մատուցող, խոհարար, բարմեն, վարորդ, մեքենաների տեխսպասարկման մասնագետ, կաթի վերամշակման բնագավառի մասնագետ՝ պանրագործ, բժիշկ, գյուղական համայնքներում՝ մանկավարժ և այլն:

ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ համայնքների հետ համագործակցային եռամյա՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավումը զբաղվածության խթանման միջոցով» (LIFE՝ Կյանք) ծրագրի աջակցությամբ համայնքի ենթակայության ներքո Վանաձորում կազմավորված բարեկարգման հարցերով և համայնքային գույքի պահպանման և սանմաքրման աշխատանքներով զբաղվող «Նեցուկ» ՀՈԱԿ-ում և Սպիտակում՝ ջերմոցային տնտեսությունում աշխատում են 14-ական հաշմանդամություն ունեցող անձինք: Վանաձորում գործող «Էրիկոտ» ընկերությունում աշխատում են 15 հաշմանդամություն ունեցող անձ /որից՝ հուշանվերների արտադրությունում՝ 10, իսկ արծաթյա զարդերի արտադրությունում՝ 5/:

Աջակցություն հաշմանդամություն ունեցող անձանց և տարեցների

Մարզի թվով 3 բժշկասոցիալական փորձաքննական հանձնաժողովների կողմից 2016թ. հաշմանդամություն ունեցող անձանց համար լրացվել են 208 ՎԱԾ (վերականգնողական անհատական ծրագրեր), որից 32 սայլակ, 48 այլ պարագաներ (օրթոպեդիկ կոշիկ, գուլպա), 30

ծեռնափայտ, 23 հենակ, 12 քայլակ, 13 լսողական սարք, պրոթեզավորվել է 56 անձ (որից՝ 27 կրծքի), ծայնաստեղծ սարք՝ 4:

Հաշմանդամություն ունեցող անձանց համակողմանի աջակցությունը շարունակում է մնալ մարզպետարանի առաջնահերթ գործառույթներից մեկը: Մարզպետարանը սերտ համագործակցային աշխատանք է իրականացնում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ, գործընթացում ներգրավելով մարզի ակտիվ կառույցներին, մասնավորապես՝ հաշմանդամների վերականգնողական պարագաներով ապահովելու ուղղությամբ առանձնանում են «Երուսաղեմի Սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամը, «Լիարժեք կյանք», «Սպիտակ բազե» և «Երիտասարդական ալիք» ՀԿ-ները՝ աջակցություն ստանալով երևանյան «Սատար» հաշմանդամների հարցերով զբաղվող ՀԿ-ից /վերջինս զբաղվում է նաև հաշմանդամային գույքի արտադրությամբ/:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայր ապահովելու ուղղությամբ աշխատանքները դեռևս բավարար չեն /մասնավորապես՝ թեքահարթակների կառուցման/ աշխատանքները, թեև առկա է նպաստավոր օրենսդրական դաշտ, սակայն պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններ, հասարակական, մշակութային, մարզական կառույցներ, ընտրատեղամասեր և այլն, շարժողական խնդիրներ ունեցող անձանց համար մուտքի մատչելիության ապահովումը դեռևս հիմնախնդիր է մնում:

Մարզի համայնքապետարաններում կառուցվել են ավելի քան 30 թեքահարթակներ, շուրջ 40-ում մատչելիության ապահովման խնդիր կա, իսկ մյուսները մատչելի են շինարարական տեսակետից անվասայլակ օգտագործող մարդկանց համար:

Մարզի 163 կրթական հաստատություններից 103-ում առկա է թեքահարթակ, շինարարական տեսակետից մատչելի են 26-ը, իսկ 34 դպրոցում դեռևս թեքահարթակ չկա:

Մարզի իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող 31 առողջապահական ընկերություններից /5 ընկերություն միավորվել են/ 28-ում առկա են թեքահարթակներ, շինարարական տեսակետից մատչելի են 3-ը: Նույն ընկերությունների կազմում գործող շուրջ 90 բուժական կաբարձական կետերից 12-ում կառուցված են թեքահարթակներ, իսկ մնացածը կարելի է մատչելի համարել, քանի որ տեղակայված են հիմնականում միահարկ շինություններում:

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող Լոռու մարզային հանձնաժողովը 2016թ. հրավիրել է 5 նիստ /որից՝ 1-ը արտագնա/ օրակարգային 22 հարցերով: Հանձնաժողովի նիստերը եղել են ընդլայնված, դռնբաց և լուսաբանվել են ԶԼՄ-ներով /մամուլ, հեռուստատալիներություն/, իսկ Լոռու մարզային հանձնաժողովի գործունեության մասին առկա բոլոր տվյալները տեղակայվել են մարզպետարանի կայք-էջում՝ առանձնացված ըստ նիստերի հերթականության և արձանագրությունների: ՀՀ ԱՍՀ նախարարության հաշմանդամների և տարեցների հիմնահարցերի վարչության մասնագետը հանդես է եկել օրակարգային զեկուցումով, «Օրրան» կազմակերպության Վանաձորի «Գրիգորյան կենտրոնի» սաները բեմադրել են «Նորեկը» թեմատիկ ներկայացումը:

Հանձնաժողովը 2016թ. նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 15-ը հայտարարվել է հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և հիմնահարցերի լուծմանը նվիրված միամսյակ /իրազեկումը կատարվել է նշված լրատվամիջոցներով/: Համառոտագրությունը ներկայացվել է տարեվերջյան նիստում:

Դեկտեմբերի 3-ին ԶԼՄ-ների մասնակցությամբ ընթացած մամուլի ասուլիսին Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների սոցիալական իրացման, տարվա ընթացքում կատարված աշխատանքների մասին խոսեցին «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ /նախագահ՝ Անուշ Ասլանյան/ և Հանձնաժողովի քարտուղար Վ.Ջաղինյանը:

Մարզպետարանը սերտ համագործակցության մեջ է մարզում գործող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների /նրանց մասնաճյուղերի/ հետ, նրանցից մեծ մասը ընդգրկված են մարզպետարանում գործող տարբեր հանձնաժողովներում կամ տարածաշրջանային համակարգող խորհուրդներում: Մասնավորապես՝ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ, «Հայկական Կարիտաս» ԲՀԿ, «Վորլդ Վիժն Հայաստան» ՄԲԿ, «Լիարժեք

կյանք» ՀԿ, «Խուլերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ, «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամ, «Երիտասարդական ալիք» ՀԿ, «Սպիտակ բազե» ՀԿ, «Լուսաստղ» ԲՀԿ, «Մանկական կենտրոն» ԲՀԿ, «Մոլորակ» ԲՀԿ, «Ունիտոն» ՀԿ, «Սպիտակ-Ֆերմեր» ՀԿ, «Լոռու զարգացման կենտրոն» ՀԿ, «Ապագա Սպիտակ» տարածքային զարգացման ՀԿ, «ՀՀ պատերազմի, զինված ուժերի, աշխատանքի վետերանների խորհուրդ» ՀԿ, «Ստեփանավանն է խոսում» ԲՀԿ, «Զոհված ազատամարտիկների ընտանիքների միություն» ՀԿ, «Համայնքային համախմբման և աջակցման կենտրոն» համայնքային ՀԿ, «Համայնքային իրավաբանների միավորում» ՀԿ, Գործատուների տարածքային միություն, Երիտասարդ տնտեսագետների ասոցիացիա և այլն:

2016թ. ընթացքում առողջարանային ուղեգրերով մարզի հաշմանդամության հիմնախնդիրներով զբաղվող ՀԿ-ների միջնորդությամբ 40 շահառուներ կազդուրվել են Աղվերանի «Գանձաղբյուր», առողջարանում:

Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող «Սպիտակ բազե» ՀԿ-ն իր աշխատանքները կազմակերպում է մարզպետարանի աջակցությամբ «Սպիտակի բժշկական կենտրոնի» մասնաճյուղից մեկույն տրամադրված տարածքում:

Հաշմանդամություն ունեցող անձանց և նրանց հիմնահարցերով զբաղվող միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների սոցիալական աջակցության ծրագրերի վերաբերյալ տեղեկությամբ ներկայացված է ստորև:

ա/ Տեղեկատվություն մարզում գործող ցերեկային կենտրոնների վերաբերյալ

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառուների թիվը /տարեկան/	Ֆինանսավորման աղբյուրը
1	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ	Վանաձոր, Ներսիսյան 6	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	136	պետություն
2		Սպիտակ, Զարեցի 10	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	106	պետություն
3		Ալավերդի, Սանահիտ Սարահարթ թաղամաս 19ա	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	126	պետություն
4		Տաշիր, Իսանջյան 3	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	51	պետություն
5	«Լիարժեք կյանք» ՀԿ	Ստեփանավան, Նժդեհի 17/23ա	Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթադաստիարակչական ծառայություն	40՝ մշտական հաճախմամբ	պետություն
6		Տաշիր, Գագարինի 7	Հաշմանդամություն ունեցող երեխաների կրթադաստիարակչական ծառայություն	20՝ մշտական հաճախմամբ	պետություն
7	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ	Տաշիր	Տարեց, նաև հաշմանդամ անձանց զբաղվածություն	60	դոնոր կազմակերպության միջոցներով

բ/ Տեղեկատվություն մարզում գործող տնային պայմաններում միայնակ հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական սպասարկման վերաբերյալ

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառուների թիվը /տարեկան/	Ֆինանսավորման աղբյուրը
1	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ	Վանաձոր, Ներսիսյան 6	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	82	պետություն
2		Ալավերդի, Սանահիտ-Սարահարթ	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	12	պետություն

		թաղամաս 19ա			
3	«Հայկական Կարիտաս» ԲՀԿ	Վանաձոր	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք	80	դոնոր կազմակերպության միջոցներով
4	Հայկական Կարմիր Խաչի Լոռու մարզային մասնաճյուղ	Վանաձոր	Տարեց, նաև հաշմանդամ տարեցների խնամք /ծրագիրը նոր է սկսվել/	30	Շվեյցարական և Հայկական կարմիր խաչի աջակցությամբ

գ/ Տեղեկատվություն մարզում գործող հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամք տրամադրող հաստատությունների վերաբերյալ

	Անվանումը	Տեղակայման վայրը /հասցե/	Տրամադրվող ծառայության համառոտ նկարագրություն	Շահառուների թիվը /տարեկան/	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Վանաձորի տարեցների տուն	Վանաձոր, Մայմեխի խճ. 8	Միայնակ, սոցիալապես անապահով տարեցների խնամք	50-55 /միջինը/	ՀՕՖ ֆինանսավորում և պետական աջակցություն
2.	Կյանքի հաց ՀԿ-ի «Հույսի տուն» հանգստավայր	Վանաձոր, Աբեղյան	անօթևան, անժառանգ /անխնամ/ և անկողնային խնամքի կարիք ունեցող տարեցների /ներառյալ՝ հաշմանդամություն ունեցող անձանց/ խնամքի ծառայություն	30-50 /միջինը/	մասնավոր կառույց է

Ընդգրկվում աշխատանքներ են իրականացնում մարզում գործող տեղական ՀԿ-ները /ներկայացվում է համառոտագիրը/:

«Լիարժեք կյանք» ՀԿ-ն առանձնանում է իր բազմակի ծրագրերով, շարունակել է գործել ՀԿ-ի Հատուկ կարիքներով անձանց կրթության և զարգացման Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների համայնքային կենտրոնը, որտեղ սպասարկվում են Ստեփանավանի և Տաշիրի տարածաշրջանների 60 հաշմանդամ երեխաները, ինչպես նաև 160 դիսկի գոտում գտնվող երեխաներն ու պատանիները /ուսուցում, ազատ ժամանցի կազմակերպում/:

«Հաշմանդամություն ունեցող երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ներդրած ջանքերի համար» անվանակարգում «Լիարժեք կյանք» սոցիալական հասարակական կազմակերպությունը պարգևատրվեց Հաշմանդամություն ունեցող երեխաների Ստեփանավանի ներառական ամառային ճամբարի, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց «Անկախ կյանքի կենտրոնի» գաղափարից մինչև իրականացում կենսագործունեության համար

Ստեփանավանում 16.04.2016թ. բացվեց «Լիարժեք կյանք» ՀԿ-ի Անկախ կյանքի կենտրոնը, որ վերանորոգվել և կահավորվել է Աղետների դիսկի նվազեցման ազգային պլատֆորմ հիմնադրամի, Գերմանական Կարմիր Խաչի Բադեն-Վյուրտեմբերգի երկրամասային կազմակերպության և ԱՄՆ Խաղաղության Կորպուսի աջակցությամբ:

• «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ-ն այս տարի առավել քան ամենաակտիվն էր, իրականացրեց յոթ ծրագրեր: Իսկ «Հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության բնագավառում ներդրած ջանքերի համար» անվանակարգում «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» հասարակական կազմակերպության փոխնախագահ Անուշ Առաքելյանը պարգևատրվեց “Mobility International – USA”-ի կողմից իրականացված «Կանանց առաջնորդության և հաշմանդամության ինստիտուտ» ծրագրի շրջանակում հաղթող ճանաչվելու համար:

• «Երուսաղեմի բժշկական Սուրբ Ղազարի Օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամը 2016թ. «Սոցիալական ծառայությունների մատչելիության և հասանելիության գործում ներդրած ջանքերի համար» անվանակարգում հիմնադրամի տնօրեն Ժակլին Հեքիմյանը պարգևատրվեց իր արդյունավետ աշխատանքի համար, մասնավորապես՝ ՀՀ Լոռու մարզի բուժհաստատություններին, Արտակարգ իրավիճակների Լոռու մարզային վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնին, հաշմանդամություն ունեցող անձանց, Արցախյան և

սիրիական պատերազմների հետևանքով տեղահանված ընտանիքներին բազմաթիվ բարեսիրական ծրագրեր իրականացնելու համար:

- «Խուլերի կրթամշակութային կենտրոն» ՀԿ-ն կազմակերպել է մի շարք մարզամշակութային միջոցառումներ և էքսկուրսիաներ: ՀԿ-ի անդամ Սենիկ Սերոբյանը այս տարի հռչակվեց Խուլերի ըմբշամարտի աշխարհի կրկնակի չեմպիոն, արժանանալով մարզպետի անհատական պարգևին:

- Վանաձորի «Մանկական կենտրոն» ՀԿ-ի աջակցությամբ իրականացվում են տարբեր ծրագրեր, մասնավորապես՝ ամեն տարի իրականացվում է Լոռու մարզի ողնաշարի խնդիրներ ունեցող շուրջ 100 հաշմանդամ երեխաների բուժզննումը Գերմանիայից ժամանած բժիշկների կողմից:

- «Սպիտակ բազե» և «Երիտասարդական ալիք» ՀԿ-ներն իրականացնում է մի շարք ծրագրեր, մասնավորապես՝ վերականգնողական տարբեր պարագաների բաշխում /անվասայլակ, քայլակ, հենակ, ձեռնափայտ և այլն/, «Խաչվող ուղիներ» ՀԿ-ն՝ հաշմանդամ երեխաների շրջանում իրականացնում է «Արթթերապիա» ծրագիրը, «Մոլորակ» մշակութային լրատվական ԲՀԿ-ն կազմակերպում է հաշմանդամ երեխաների մասնակցությունը տարբեր միջոցառումներին, «Ինֆորմացիոն կենտրոն» ՀԿ-ն հաշմանդամների ուսուցանում է համակարգչային դասընթացներ և այլն:

ՀՀ Լոռու մարզի հաշմանդամություն ունեցող մարզիկները 2016թ. արձանագրել են մի շարք հաջողություններ, մասնավորապես՝

- ✓ Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն հաշմանդամ մարզիկ» մրցույթի հանրապետական եզրափակիչ փուլին՝ ՀՀ Լոռու մարզը գրավեց պատվավոր առաջին տեղը /թիմի ավագ՝ Ռուբեն Մխիթարյան/: Անհատական ցուցանիշներով հաղթողներ դարձան Սարգիս Աթաբեկյան /շախմատ/ և Անուշ Ասլանյանը /շաշկի/: 2-րդ տեղ գրավեցին Հարություն Մխիթարյանը /բազկամարտ/ և Անգելինա Քառյանը /եռամարտ/, 3-րդ տեղ՝ Սենիկ Սերոբյանը /եռամարտ/ և Աշոտ Ավաերոյանը /շաշկի/:

- ✓ Խուլերի աշխարհի կրկնակի չեմպիոն դարձավ միջազգային կարգի սպորտի վարպետ Սենիկ Սերոբյանը /Վանաձոր, ըմբշամարտ՝ հունահռոմեական ոճ/, ով նաև բրոնզե պարգև ստացավ ազատ ոճում: Սենիկը այս տարի ևս տարձավ ՀՀ չեմպիոն: Խոստումնալից մարզիկը նախկինում նվաճել է աշխարհի փոխչեմպիոնի, Եվրոպայի կրկնակի փոխչեմպիոնի, ՀՀ կրկնակի չեմպիոնի կոչումները:

- ✓ ՀՀ Նախագահի մրցանակի համար հաշմանդամություն ունեցող անձանց «Լավագույն մարզական ընտանիք-2016» մրցաշարի հանրապետական եզրափակիչ փուլում ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքից առաջին խմբի հաշմանդամ Ստասիկ Լյովայի Նազարյանի ընտանիքը գրավեց առաջին տեղը:

- ✓ Խուլերի աշխարհի փոխչեմպիոն դարձավ 2015թ. Եվրոպայի չեմպիոն Ռոբերտ Գևորգյանը /Վանաձոր, ձյուդո/:

- ✓ Խուլերի ՀՀ չեմպիոն դարձավ Սարգիս Աթաբեկյանը /Վանաձոր, շախմատ/:

- ✓ Ծանրակշիռ հաջողություններ է արձանագրել վանաձորցի անվասայլակով տեղաշարժվող Հարություն Մխիթարյանը, ով Հաշմանդամային սպորտի զարգացման գործում ունեցած ներդրման և բարձր արդյունքներ ցույց տալու համար 2016թ. արժանացավ ՀՀ սպորտի և երիտասարդության նախարարի շնորհակալագրի:

Հարությունը այս տարի ունեցել է հետևյալ նվաճումները. Հայաստանի երիտասարդական հիմնադրամի կողմից կազմակերպված բազկամարտի առաջնություն /50 կգ քաշային կարգ/՝ աջ և ձախ ձեռքերով – 1-ին տեղ, Հաշմանդամային սպորտի 14-րդ հանրապետական փառատոն՝ պաուերլիֆթինգի /ծանրամարտ, սեղմում պառկած դիրքից, 54 կգ քաշային կարգ - 1-ին տեղ և բազկամարտ /մինչև 70 կգ/ - աջ ձեռքով - 1-ին տեղ, ՀՀ պաուերլիֆթինգի ֆեդերացիայի Վ.Ժամհարյանի 60-ամյակին նվիրված մրցաշար / ծանրամարտ, սեղմում պառկած դիրքից, 48կգ քաշ/ – 1-ին տեղ, ՀՀ բազկամարտի ֆեդերացիայի Ա.Սարգսյանի 70-ամյակին նվիրված ՀՀ առաջնություն /բացարձակ քաշային կարգում աջ ձեռքով/՝ 2-րդ տեղ: Նախորդած տարիներին ՀՀ բազմակի չեմպիոն և ռեկորդակիր Հարություն Մխիթարյանը եղել է նաև IWAS

/ամպուտանտների և սայլակավորների/ ֆեդերացիայի համաշխարհային խաղերի բրոնզե մեդալակիր, ՀՀ հաշմանդամային սպորտի ամենամյա «Փյունիկ» մարզական խաղերի բազմակի հաղթող /ծանրամարտ/, վերջին 10 տարիների անփոփոխ առաջատարն է:

✓ Հաշմանդամների համահայկական 14-րդ փառատոնի շախմատի առաջնությունում Լոռու մարզի կույրերի կազմակերպության անդամ Համլետ Մեջլումյանը գրավեց առաջին տեղը: Համլետը նաև ՀՀ հավաքականի կազմում /4 խաղատախտակ/, իսկ մրցակիցներն էին Վրաստանի և Ադրբեջանի հավաքականները, Վրաստանի Բակուրիանի քաղաքում նվաճեցին Հարավային Կովկասի առաջնության փոխանցիկ գավաթը: Նախկինում Համլետը քանիցս նվաճել է Կովկասի շախմատի առաջնության չեմպիոնի կոչումը, լուրջ հաջողությունների հասել ՀՀ առաջնություններում:

✓ Միջազգային կարգի սպորտի վարպետ Սերոբ Աբրահամյանը /Տաշիր/ դարձավ ՀՀ չեմպիոն /բազկամարտ/ ծախ ձեռք – 1-ին տեղ: Նախկինում Սերոբը եղել է բազկամարտի աշխարհի չեմպիոն, Եվրոպայի փոխչեմպիոն, ՀՀ բազմակի չեմպիոն բազկամարտից և ծանրամարտից /պառկած վիճակից՝ հրում վարժությունում/:

✓ Սերգեյ Կիրակոսյանը /Տաշիր/ դարձավ ՀՀ չեմպիոն՝ բազկամարտից: Նախկինում Սերգեյը քանիցս նվաճել է ՀՀ չեմպիոնի կոչումը:

✓ Սերյոժա Մելքոնյանը /Ստեփանավան/ դարձել է ԼՂՀ-ի Բոչայի բաց առաջնության հաղթող:

ՀՀ Լոռու մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությունում գործում է թեժ գիծ՝ 0322 2-33-99 հեռախոսահամարով /առողջապահության և սոցիալական ապահովության հարցերով/, իսկ «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կողմից իրականացվող «Ամեն ինչ մեզ համար, մեզ հետ» ծրագրի շրջանակներում գործում է 080001311 անվճար թեժ գիծը: Հեռաձայնողների հարցերն առնչվում են առողջապահական, սոցիալական և շատ այլ ոլորտներում խախտված իրավունքներին, որոնց անմիջապես անդրադարձ է եղել: «Լիարժեք կյանք» ՀԿ-ի և գործընկեր կազմակերպությունների գրասենյակներում իրավաբանի կողմից մատուցվել է անվճար իրավաբանական խորհրդատվություն:

Մարզպետարանի ուշադրության կենտրոնում են եղել նաև տարեց անապահով քաղաքացիների հիմնահարցերը: Լոռու մարզի բնակչության /230.000/ շուրջ 14%-ը /շուրջ 32.500 մարդ/ 63 տարեկանից բարձր են, որից՝ ծերության սոցիալական կենսաթոշակ են ստանում շուրջ 2%-ը, իսկ աշխատանքային կենսաթոշակառուների գերակշիռ մասը կանայք են: Տարեցները հիմնականում ունեն գրեթե նույն հիմնախնդիրները, ինչ հաշմանդամություն ունեցողները:

Հոկտեմբերին մարզի մի շարք համայնքներում անցկացվել են Տարեցների մեծարման միջոցառումներ: Այցելությունները և տոնական միջոցառումները լուսաբանվել են մարզի ԶԼՄ-ների կողմից:

ՀՀ Լոռու մարզպետի կողմից 30.000-ական դրամ և «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» հիմնադրամի /տնօրեն՝ Ժակլին Հեքիմյան/ կողմից անկողնային սպիտակեղենի հավաքածու է հանձնվել մարզի 100-տարեկանն անց թվով 7 երկարակյացներին: Համայնքներից ստացված տեղեկատվության համաձայն համայնքի ղեկավարներն իրենց կողմից ևս 20.000 դրամ հավելումով այցելելություններ են կազմակերպել համայնքի ամենատարեց բնակիչներին: Ցանկը ներկայացվում է ստորև՝

1. Անդրեասյան Լուսիկ Թորոսի /ծնվ. 1912թ./ - Վանաձոր
2. Կիրակոսյան Խորեն Սարգսի /ծնվ. 1913թ./ - Փամբակ
3. Սիմոնյան Հերիքնազ Դավթի /ծնվ. 1913թ./ - Ձորագյուղ
4. Պետրոսյան Դեսպին Մովսեսի /ծնվ. 1915թ./ - Օծուն
5. Փիլյոյան Բավական Համբարի /ծնվ. 1915թ./ - Սարահարթ
6. Մաճկալյան Սանամ Զաքարի /ծնվ. 1915թ./ - Լեջան
7. Հարությունովա Տառյանա Իվանովնա /ծնվ. 1916թ./ - Տաշիր:

ՀՀ Լոռու մարզպետ Արթուր Նալբանդյանի կողմից 200.000 դրամ է նվիրաբերվել «Վանաձորի ծերանոցին»՝ Տարեցների միջազգային օրվա տոնական միջոցառման և խնջույքի կազմակերպման համար: Տոնական միջոցառմանը մասնակցել են մարզպետի տեղակալ

Տիգրան Բադոյանը և այլ պաշտոնատար անձինք: Մարզպետարանի կողմից կազմված ծրագրի համաձայն ծերանոցի բնակիչների համար տրվեց տոնական համերգ, իսկ «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» հիմնադրամի կողմից անկողնային սպիտակեղենի հավաքածու /20 կոմպլեկտ/: Ծափողջույների արժանացան ՀՀ վաստակավոր արտիստ Ստեփան Դավաթյանը, ասմունքող-հանդիսավար, Մ.Խորենացի մեդալակիր Ջիվան Սարգսյանը, վերջինիս Պոեզիայի թատրոնի սաներ Դայանա Ամիրխանյանը, Մանե Սոֆյանը և ուրիշներ:

Ուսումնասիրվել է նաև երկարակյացների ընտանիքներին պետական աջակցությամբ սատարելու հարցը: Ներքոշարադրյալ թվով 4 անձանց ընտանիքները ընդգրկված են անապահովության գնահատման համակարգում, որպես նպաստառու: Իսկ մեկ ընտանիք ընդգրկվել է եռամսյակային հրատապ օգնության ցուցակում:

Մարզկենտրոնում ավանդույթ դարձած «Վանաձորի օր» միջոցառումների շրջանակներում տեղ էին գտել նաև տարեցներին նվիրված միջոցառումները, մասնավորապես՝ հոկտեմբերի 1-ին Վանաձորի Գուսան Զաքարյանի անվան մշակույթի տան /տնօրեն՝ Ասատուր Սողոյան/ սաների ուժերով կայացավ Տոնական համերգ Տարեցների տան, «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի և թաղամասի տարեցների համար: Շաբաթվա ընթացքում տարեցների համար տոնական միջոցառումներ կայացավ նաև Վանաձորի թիվ 1 և 2 մշակույթի տներում: Իսկ Վանաձորի Ստեփան Զորյանի տուն-թանգարան կատարված էքսկուրսիայի և ֆիլմի դիտմանը մասնակից կլինեն Վանաձորի տարեցների տան շահառուները:

Ինչպես ամեն տարի այս տարի ևս «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ-ի շահառուների համար կազմակերպվեցին տոնական միջոցառումներ: Վանաձորում նրանց համար միջոցառումները ներառվել էին «Վանաձորի օր» միջոցառման շրջանակներում, իսկ «Առաքելություն Հայաստան» ԲՀԿ Ալավերդու կենտրոնի տարեցներին շնորհավորել են Ալավերդու քաղաքապետարանի Երգի թատրոնի /գեղարվեստական ղեկավար Աղասի Գևորգյան/ սաները:

Յուրօրինակ նախաձեռնությամբ է հանդես եկել «Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Տնային խնամք միայնակ ծերերին» ծրագիրն իրականացնողները, որոնք հոկտեմբեր ամսվա ընթացքում կազմակերպեցին տարբեր միջոցառումներ:

Մարզի ՍԱՏՄ-ների կողմից 2016թ. ընթացքում 17 անձանց համար կազմվել են փաստաթղթային փաթեթ՝ ծերանոցներում տեղավորելու խնդրով /նախորդ տարի՝ 18/:

Փախստականների և միգրացիայի հիմնահարցեր

01.01.2017թ. դրությամբ մարզում փաստացի բնակվում են ավելի քան 7500 փախստական, որից քաղաքացիություն են ստացել շուրջ 6000 անձ: Աշխատունակ են՝ 3.465 մարդ (46.2%), նախկին քաղաքաբնակներ՝ 6.750 մարդ (90%):

1999-2005թթ. բնակարանային խնդիր է լուծվել փախստականների 292 ընտանիքների համար /Փախստականների նորվեգական խորհրդի, ՄԱԿ-ի և ՀՀ պետությունների միջոցներով (20՝ Արջուտում, 16՝ Տաշիրում, 54՝ Վանաձորում, 52՝ Սպիտակում, 56՝ Ստեփանավանում, 58՝ Նոր Խաչակապ, Ղուրսալի, Ջրաշեն, Սարամեջ համայնքներում):

Դեռևս բնակարանի կարիքավոր ընտանիքների թիվը մարզում կազմում է 195:

2006-2016թթ. Լոռու մարզում փախստական ընտանիքների բնակարանային ապահովման ծրագրի չի իրականացվել:

Զոհված և հաշմանդամ զինծառայողների հիմնահարցեր

ՀՀ կառավարության 09.06.2005թ. թիվ 947-Ն որոշման պահանջներով է ընթանում զոհված (մահացած) և հաշմանդամ (վիրավոր) զինծառայողների (ազատամարտիկների) ունեցող ընտանիքների բնակարանային ապահովման աշխատանքները:

Ներկայումս ՀՀ Լոռու մարզում բնակարանի կարիքավոր են 89 (29 զոհվածի և 60 զին-հաշմանդամություն ունեցողի) ընտանիքներ, որից՝ 6-ը հաշվառվել են 2016թ.: Նախորդած տարիներին Լոռու մարզում բնակարան կամ բնակարան ձեռք բերելու համար ֆինանսական աջակցություն են ստացել զոհվածի և զինհաշմանդամի 224 ընտանիքներ:

2016թ. ՀՀ ՊՆ բնակապահովման ծրագրից օգտվեց զոհված զինծառայողի մեկ ընտանիք՝ 3.882.000 դրամ, իսկ մեկ զինհաշմանդամ հանվեց հաշվառումից, քանի որ անձնական միջոցներով բնակարան է ձեռք բերել:

29.06.2016թ. Վանաձորում նշվել է անհայտ կորած զինծառայողների հիշատակի օրը թվով 15 անհայտ կորած զինծառայողների ընտանիքների մարզպետի կողմից տրամադրվել է 20.000-ական դրամ, ամբողջը՝ 300.000 դրամ:

ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

2016թ-ի ընտանիքի, կանաց եւ երեխաների իրավունքների պաշտպանության բնագավառում իրականացվել են բազմաթիվ աշխատանքներ.

Ուսումնասիրվել են թվով 840 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ, կատարվել են նրանց կարիքների գնահատում, ուսումնասիրման և գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր և ապահովվել դրանց իրականացումը համապատասխան հաստատություններում: Ուսումնասիրման և գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական ծրագրեր և ապահովվել դրանց իրականացումը համապատասխան հաստատություններում:

2016թ-ին 23 երեխա տեղավորվել է մանկատուն որից՝

Վանաձորի մանկատուն են տեղավորվել առանց ծնողական խնամքի մնացած և կյանքին ու առողջության համար անբարենպաստ պայմաններում գտնվող թվով 22 երեխա:

1 երեխայի տրվել է եզրակացություն մասնագիտացված մանկատուն տեղավորելու համար :

23 երեխա դուրս է գրվել մանկատնից:

01.01.2017թ. դրությամբ մանկատանը բնակվում է 64 երեխա:

Վանաձորի երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն են ընդունվել 24երեխա:

Վանաձորի երեխաների խնամքի եւ պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատությունից դուրս 23երեխա:

01.01.2017թ. դրությամբ կենտրոնում խնամվում են 105 երեխա:

2016թ-ի ընթացքում «Նորք» ավերմատարացված տեղեկատվական համակարգ են մուտքագրվել կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ՝ դրանում հաշվառելով,

ա) 23 առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձանց և օրենքով սահմանված կարգով ներկայացվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն կենտրոնացված հաշվառման,

բ) 21 որդեգրել ցանկացող անձանց (դրական եզրակացության հիման վրա) որպես որդեգրողի թեկնածու, տվյալները գրանցվել են հաշվառման մատյանում, լրացվել որդեգրողի թեկնածուի անձնական քարտը և, պատճենը փոխանցվել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն,

գ) 8 որդեգրման ենթակա երեխաների տվյալները եւ անձնական քարտի պատճենները ներկայացվել են Հայաստանի Հանրապետության աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն՝ կենտրոնացված հաշվառման վերցնելու համար:

դ) 1 մանկուց հաշմանդամ երեխաներ

ե) 24 երեխաներ խնամքի եւ պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում գտնվող

զ) 22 մանկատանը գտնվող երեխաներ

է) 95 կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներ

ը) 3 խնամատար ընտանիքի երեխաներ

Ոստիկանության հետ համագործակցություն

Ոստիկանության համապատասխան ծառայությունների և ԽՀՀ-ների հետ համատեղ քննարկվել են մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների խնդիրները, անհրաժեշտության դեպքում արվել են ուղղորդումներ համապատասխան հաստատություններ: Պրոֆիլակտիկ աշխատանքներ են իրականացնվել իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների հետ: Իրականացվել է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը՝ նրանց ներգրավելով հանրակրթական /հատուկ հանրակրթական/ ուսումնական հաստատություններում: Ընդհանուր հաշվառման մեջ են գտնվում 22 երեխա. Ամփոփ պատկերն է՝

ընդհանուր	տղա		աղջիկ
22	21		1
հանցագործություն կատարած	զանցանք կատարած	կրթությունից դուրս մնացած	մուրացիկ թափառաշրջիկ
19	2	1	0

Ընդհանուր ներառական դպրոցներում – 666 երեխա

Ընդհանուր հայրուկ դպրոցներում -116 երեխա

Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող - 782 երեխա

Տնային ուսուցում - 27 երեխա

Լոռու մարզի համայնքներում «Վորլդ Վիժն» միջազգային կազմակերպության հետ համատեղ համայնքներում կազմակերպվել են հանդիպումներ, որտեղ կատարվել են իրազեկման աշխատանքներ օրենսդրական դաշտի վերաբերյալ, տրամադրվել են նյութեր, աշխատանքների բարելավման նպատակով իրականացվել է մոնիտորինգ, դեպքերի քննարկումներ, արդյունքում աշխատանքային ցուցումներ են տրվել:

«Առավոտ» ՀԿ-ի հետ համատեղ իրականացվել է ուսումնասիրություն և կանխարգելվել է 30 երեխայի մուտքը խնամքի հաստատություն և մանկատուն

Բեռնաթափման ծրագրի շրջանակներում ընտանիք է վերադարձել Վանաձորի մանկատան 6, Վանաձորի երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 հաստատության 4, Վանաձորի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ /օժանդակ/ դպրոցի 1, Սպիտակի թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ /օժանդակ/ դպրոցի 8 , Ստեփանավանի ԲՀԿ-ի 1 երեխա

Արցախի քառօրյա պատերազմում զոհված զինծառայողների այն ընտանիքներին, որտեղ կան անչափահաս երեխաներ «Առավոտ» ՀԿ-ն իր աջակցությունն է ցուցաբերել սննդի և հագուստի տեսքով

Ուսումնասիրվել են մարզի ԽՀՀ-երի գործունեություններ, կատարվել է խորհրդատվություն ԽՀՀ-ների աշխատանքների վերաբերյալ:

Բաժնում կատարվել է մոտ 840 քաղաքացիների ընդունելություն, որի ընթացքում տրվել են համապատասխան ցուցումներ և խորհրդատվություններ տարբեր հարցերի շուրջ՝ սոցիալական, հոգեբանական, մանկավարժական, իրավաբանական:

2016 թվականի ընթացքում մասնակցել են «Հոգեբանական աջակցություն մեծահասակներին և երեխաներին ճգնաժամային իրավիճակներում» դասընթացին, որը կազմակերպել էր ՄԱԿ-ի փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակը: «Անչափահասների շրջանում հանցավորության կանխարգելման ռազմավարական ծրագիր»-ի մշակմանը, որը կազմակերպել էր ՀՀ ոստիկանությունը, «Սոցիալական դեպքի վարում» դասընթացին, որը

կազմակերպել էր ՀՕՖ-ը, «Խոցելի երեխաների սոցիալական ներառում. երեխայի խնամքի համակարգի բարեփոխման շրջանակներում այլընտրանքային խնամքի ընտանիքի աջակցության և ներառական կրթության ծառայությունների ընդլայնում» ծրագրի մշակմանը, որը կազմակերպել էր ՀՀ կրթության նախարարությունը և ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը, «Ընդդեմ գենդերային բռնության 2011-2015թթ-ի ռազմավարական ծրագիր»-ի մշակմանը, որը կազմակերպել էր «Հասարակություն առանց բռնության» ՀԿ-ն:

Գուգարաց թեմի առաջնորդ Տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջանի օրհնությամբ և Լոռու մարզպետարանի ակտիվ մասնակցությամբ «Ձեռք մեկնիր եղբորդ» բարեգործական ծրագրի շրջանակներում դրամահավաք է կազմակերպվել կարիքավոր ընտանիքների համար, այդ թվում երկկողմանի ծնողագրուկ 15-ամյա Նունե Լևոնի Ղազախեցյանի համար բնակարան գնելու նպատակով:

Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ընտանիքներին աջակցություն տրամադրող «Դիակոնիա» կազմակերպությունը բաժնի հետ համագործակցելով իրականացրել է հումանիտար օգնության ծրագրեր՝ սննդի, հագուստի, գրենական պարագաների տեսքով: Թվով 1250 շահառուներ օգտվել են ծրագրից: «Դիակոնիա» կազմակերպության հետ համատեղ կազմակերպվել է մոտ 20 սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգիստը ճամբարում:

Ամերիկյան «Ամբոր» կազմակերպությունը Լոռու մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի հետ համագործակցությամբ կյանքի դժվարին իրավիճակում գտնող 1 ընտանիքի տրամադրել է հավեր և հավի կեր:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի աջակցել է ստանալ վարսահարդարի մասնագիտացում՝ տրամադրելով ուսման վճար և վարսահարդարման պարագաներ:

Երեխաների ցերեկային խնամք իրականացնող կենտրոնների հետ համագործակցությունը եղել է սերտ և արդյունավետ: Կազմակերպվել են դեպքերի քննարկումներ, համատեղ տնայցեր, երեխաների և ընտանիքների կարիքների գնահատում և համապատասխան աջակցություն որոշ դեպքերում խորհրդատվական, կամ ծառայությունների մատուցման կամ էլ նյութական-հումանիտար օգնության տեսքով:

Մարզում գործող ցերեկային խնամք իրականացնող չորս կազմակերպությունների հետ տարվա ընթացքում եղել է սերտ համագործակցություն: ԱՀԱԸ Վանաձորի «Շող» երեխաների համայնքահեն ցերեկային կենտրոնի, Հայկական Կարիտաս բարեսիրական կազմակերպության Վանաձորի եւ Տաշիրի «Փոքրիկ իշխան» կենտրոնների և «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության հետ բաժինը պարբերաբար կատարել է շահառու կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների և նրանց ընտանիքների հետ իրականացվող աշխատանքների և դեպքերի քննարկում, որի արդյունքում կանխարգելվել է թվով 108 երեխայի մուտքը հատուկ հաստատություններ: Առանձին դեպքերում իրականացվել են համատեղ տնայցեր, մասնագիտական խորհրդատվություն և թեմատիկ քննարկումներ: Այն ընտանիքների հարցերով, որտեղ առկա են եղել բարդ կամ կազմակերպության ռեսուրսներից լայն խնդիրներ, բաժնի միջամտությամբ կազմակերպվել են մի քանի կառույցների հետ համատեղ ընդլայնված քննարկումներ՝ հարցերին առավել ամբողջական լուծում տալու նպատակով: Վանաձորի «Շող» երեխաների համայնքահեն ցերեկային կենտրոնի խնդրանքով շահառու ծնողների հետ իրականացվել են նաև խմբային սոցիալ- հոգեբանական և ծնողավարման հմտությունների զարգացմանն ուղղված աշխատանքներ:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱԴԵՐ, ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐ

Արտաքին կապերի եւ միջազգային համագործակցության շրջանակներում 2016 թվականին մարզում իրականացվել են խոշորածավալ աշխատանքներ, որոնք զգալի ներդրում են ունեցել մարզի զարգացման գործընթացում: Այսպիսով՝ արդյունավետ համագործակցություն է իրականացվել շուրջ 43 միջազգային կառույցների հետ:

Շարունակվել է նաեւ սերտ համագործակցությունը Ֆրանսիայի ՊԱԿԱ, Ռոնո Ալպ ռեգիոնների, եւ Վրաստանի Աջարիա շրջանների հետ: Լոռու մարզը հանդիսանում է Ֆրանկոֆոն Ռեգիոնների Միջազգային Ասոցիացիայի (AIER) լիիրավ անդամ 2011թ-ի նոյեմբերի 24-ից եւ Հայաստանում «Ֆրանկոֆոնիայի օրեր» ծրագրի երկամսյակի շրջանակներում՝ 2016-ին մարզի համայնքներում ակտիվորեն իրականացվել են բազմաբնույթ միջոցառումներ՝ ցուցահանդեսներ, ֆիլմերի դիտումներ, դասախոսություններ, ցուցադրություններ, պոեզիայի ընթերցումներ ու ֆրանսիական երգերի կատարումներ, տոնական համերգներ եւ գրական երաժշտական ցերեկույթներ: Շարունակվել է համագործակցությունը Լոռու մարզի եւ Եվրոպական Տարածաշրջանային Ասամբլեայի (ԵվՏԱ/AER) հետ, իրականացվել են անհրաժեշտ տեղեկատվության փոխանակումներ: Մարզը վերջինիս լիիրավ անդամ է հանդիսանում 2010թ-ի նոյեմբերի 11-ից:

Հայ - ֆրանսիական համագործակցության շրջանակներում **Ֆրանսիայի ՊԱԿԱ (Պրովանս Ալպեր Լազուրի Ալի)** ռեգիոնի հետ համագործակցությամբ մի շարք ծրագրեր են իրականացվում: 2015թ-ին կնքվեց ՊԱԿԱ ռեգիոնի հետ 2015-2017թթ. համագործակցության համաձայնագիրը: Համաձայնագրով նախատեսվում է ընդհանուր 451 000 եվրոյի աշխատանքների իրականացում. ընդ որում՝ վերջիններիս մի մասը ուղղված է մարզում տուրիզմի եւ ագրոտուրիզմի զարգացմանը: Ախթալայում նախատեսվող թանգարանի հիմնման նպատակով Ֆրանսիայից ժամանած մասնագետները, 2015թ-ին իրականացված համապատասխան ուսումնասիրություններ հիմնան վրա, 2016թ-ին ներկայացրին թանգարանի հիմնման նախագիծը: Ագրոտուրիզմի զարգացման ծրագրի շրջանակներում Ֆրանսիայում վերապատրաստում անցած 8 մասնագետները 2016 թվականի ապրիլին Ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղում անցկացրեցին վերապատրաստման 2-օրյա դասընթաց ֆերմերների պիլոտային խմբի համար: Ապրիլի 12-ից 13-ը կայացած դասընթացին մասնակցեց նաեւ ՊԱԿԱ/CRIPT-ի ագրոտուրիզմի գծով էքսպերտ Միրիամ Բորելը: Ֆերմերների պիլոտային խմբի կողմից առաջարկվեց է հիմնել ասոցիացիա ագրոտուրիզմի զարգացման աշխատանքների համակարգման եւ ֆերմերների շահերի պաշտպանության համար: Ըստ այդմ՝ Լոռու տուրիզմի զարգացման հիմնադրամին կից հիմնվեց Լոռի ագրոտուր ասոցիացիան (ԼԱՏԱ):

ՊԱԿԱ ռեգիոնը Ուսանողական գարուն փառատոնի շրջանակներում Սպիտակից հյուրընկալեց Լոռու երիտասարդ դպրոցականների պատվիրակությանը:

Ավավերդում Ֆրանսիայից դասախոսի եւ փարձագետի ուղեկցությամբ ժամանած 3 երիտասարդ ուսանողների կողմից ապրիլին անցկացվեցին համապատասխան ուսումնասիրություններ ռաֆթինգի ծրագրի շրջանակներում ժամանման գոտու/կայանատեղու կարգավորման ուսումնասիրությունների համար: Սեպտեմբերին 6 երիտասարդ ֆրանսիացի ուսանողներ ժամանեցին համապատասխան վայր՝ դասախոսների եւ Ավավերդու քոլեջի ուսանողների հետ տարածքը կարգավորելու համար:

Համագործակցության արդյունքում հիմնադրված «Թումանյան աշխարհ» զբոսաշրջային գրասենյակի կողմից 2016թ-նի ընթացքում իրականացվել են բազմաբնույթ աշխատանքներ. նոր գործընկերների վերհանում, տուրարտադրանքի ստեղծում և շուկայահանում, զբոսաշրջիկների խմբերի ընդունում և ուղեկցում, էքսկուրսիաների կազմակերպում, տեղեկատվության տրամադրում, ինտերնետային կայքի թարմացում, վիճակագրություն, ռաֆթինգի բազայի տարածքի արահետի մաքրում և բարեկարգում, զբոսաշրջային նոր ռեսուրսների բացահայտում և այն: «Լոռի» տուրիզմի զարգացման հիմնադրամի համայնքային հատկացումները 2016թ-ին կազմել են 2.625.000 դրամ:

Լոռու մարզում ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող ծրագրեր

✓ Հայաստան-Վրաստան անդրսահմանային համագործակցություն ծրագրի վերջնական փուլը հաղթահարած ծրագրերից մեկը Լոռու մարզի էկոտուրիզմի զարգացման «Հեծանվավարությունը եւ գյուղական համակցված միջսահմանային զբոսաշրջությունը որպես ինովացիոն մոտեցում անդրսահմանյան համագործակցության խթանման ուղղությամբ» ծրագիրն է: Ծրագրի կրողներից է ՀԿ կենտրոն հասարակական կազմակերպությունը: ԵՄ ներդրումը 225 հազ. եվրո է:

✓ ԵՄ ֆինանսավորմամբ «Միգրացիայի սոցիալ-տնտեսական դրական ազդեցության ուժեղացումը Հայաստանում ավելի լավ ապագայի համար» ծրագիրը իրականացվում է CISP իտալական ՀԿ-ի կողմից:

✓ Եվրոմիությունը Հայաստանում ֆինանսավորում է նաեւ Վերականգնվող էներգիայի և էներգիայի արդյունավետ օգտագործման ծրագիրը, որը մեկնարկեց 2015-ին եւ որի արժեքը կազմում է 510000 եվրո: Սպիտակի քաղաքապետարանը հանդես է գալիս որպես համաֆինանսավորող: Ծրագրի իրականացնողը «Հաբիթաթ ֆոր հյումանիթի» ՀԿ-ն է:

✓ «ՀՀ մարզերում աղքատության նվազեցում տուրիզմի ներդրման միջոցով - հետագա զարգացումներ և կայունության ապահովում» ծրագրի նպատակն է աջակցել ՀՀ թիրախային մարզերում աղքատության նվազեցման գործընթացներին: Տևողությունը. 8 Հունվար, 2015 - 7 Հունվար, 2017: ԵՄ ներդրում. 200,000 €: Իրականացնող. ՍՈՍԵ բարեգործական հասարակական կազմակերպություն:

✓ ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարությունը՝ համագործակցելով ԵՄ Հայաստանյան գրասենյակի հետ, իրականացնում է «Աջակցություն ՏԿՆ-ին, Աջակցություն տարածքային զարգացման գործընթացներին» ծրագիրը՝ հոլանդական ECORYS կազմակերպության աջակցությամբ:

Լոռու մարզպետարանի և «Դիակոնիա» հայ-հոլանդական բարեգործական հիմնադրամի միջև 2016թ-ին ստորագրվեց համագործակցության հուշագիր: Միտված բնակչության սոցիալ-հոգեբանական վիճակի բարելավմանը և բարեկեցության ապահովմանը, հիմնադրամը մի շարք բարեգործական ծրագրեր է իրականացրել մարզում՝ նպաստելով: Բնակչության անապահով շերտերին ցուցաբերվել է սոցիալական օգնության դրամական և նյութական տեսքով: Բազմաթիվ նախագծեր իրականացվում են Լոռու մարզպետարանի հետ համագործակցությամբ: 2016թ. Լոռու մարզում ցուցաբերվել է շուրջ 16.003.646 ՀՀ դրամի սոց. օգնություն: Հիմնադրամի կողմից մարզի համայնքներում 2016թ-ին կատարվել է շուրջ 66.5մլն. դրամի ներդրում: Ներդրումային աշխատանքներ են կատարվել «Ալավերդու բժշկական կենտրոն» և Ալավերդու ԲԿ» ՓԲԸ-ներում, Սանահին Սարահարթի բուժ. կետում, Շենավանի բուժակմանկաբարձական կետում, «Տաշիրի ԲԿ» ՓԲԸ-ում, «Մեծ Պարնու առողջության կենտրոն» ՊՓԲԸ-ում, Վանազորի N 1 հատուկ օժանդակ գիշերօթիկ դպրոցում, Վանաձորի Մանկատուն ՊՈԱԿ-ում: Մեծ Պարնի համայնքում իրականացվել են կորնգանի և ցորենի մշակման ծրագրեր, իսկ Մարց համայնքում՝ մեղվաբուծության ծրագիր:

ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի Հայաստանյան գրասենյակի (UNICEF) և «World Vision» կազմակերպության կողմից մի շարք առողջապահական ընկերություններում ստեղծվել են Ծնողական կրթության կենտրոններ և Մայրության դպրոցներ, որոնք ամբողջությամբ վերանորոգվել և կահավորվել են: Ստեղծված ծնողական կրթության կենտրոններում նշանակվել են աշխատանքները համակարգող պատասխանատու բուժաշխատողներ և իրականացվել են թեմատիկ դասընթացներ և խորհրդակցություններ: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի ֆինանսավորմամբ՝ «Տեղական սոցիալական պլանավորում և սոցիալական ծառայությունների միջև համագործակցության ինստիտուցիոնալացում. Սոցիալական արձագանք աշխատանքային միգրացիայի» ծրագրի շրջանակներում իրականացվել է մարզում սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների միջև համագործակցության իրականացման պիլոտային ծրագիր, որի թիրախն էր երեխայի՝ խնամքի սոցիալական հաստատություններում (ընդհանուր

տիպի մանկատներ, մասնագիտացված մանկատներ, բարեգործական մանկատներ, խնամքի հաստատություններ, հատուկ դպրոցներ և այլն) տեղավորելու կանխարգելումը: Ծրագրում ընդգրկվել են Վանաձորի և Գուգարքի տարածաշրջանի 3 դեպք վարողներ:

«Հայաստանի մանուկներ հիմնադրամ» (COAF) բարեգործական կազմակերպությանը, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով, ընդլայնում է գործունեությունը մարզի համայնքներում: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումն սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Հիմնադրամի ծրագրերը Լոռու մարզում մեկնարկել են 2014թ.: 2016 թվականին Հիմնադրամը գործունեություն է ծավալել մարզի Թումանյան, Դսեղ, Քարինջ, Մարց, Դեբեդ, Ձորագյուղ, Մեծ Այրում, Աբորի, Արևածագ և Վահագնի համայնքներում: Լոռու մարզում ծրագրերի իրականացման համար Հայաստանի մանուկներ հիմնադրամի 2016 թվականի բյուջեով նախատեսված գումարը Առողջապահական Կրթական Սոցիալ-հոգեբանական ծրագրերի համար կազմել է 53.168.000 ՀՀ դրամ:

Փրկենք երեխաներին (Save The Children) միջազգային կազմակերպության կողմից՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ Սպիտակի քաղաքապետարանի և «Սպիտակի ֆերմեր» իկ-ի կողմից «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» (LIFE) ծրագրի շրջանակներում Սպիտակ քաղաքում հիմնվեց ջերմոցային տնտեսություն: Ծրագրի իրականացմանն աջակցել են նաև Լոռու մարզապետարանը և մի շարք այլ կառույցներ:

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) ֆինանսավորմամբ Համայնքների ֆինանսիստների միավորումը (ՀՖՄ) իրականացվել է «Մոդելային համայնքներում արդյունքահեն բյուջետավարման ներդրում» ծրագիրը, որի շրջանակներում կազմվել են ծրագրի շրջանակներում ընդգրկված պիլոտային համայնքների 2016թ. բյուջեները արդյունքահեն ձեռնապահով և արդյունքահեն բյուջեների հակիրճ տարբերակները: Լոռու մարզից ծրագրի պիլոտային համայնքներն են եղել Թումանյան, Ալավերդի, Սպիտակ և Օձուն համայնքները:

ԱՐԴԻ (Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն) ծրագիրը, որը ֆինանսավորվում է ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կողմից, իրականացվում է Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոն» և «Հեյֆեր Փրոջեքթ Ինթերնեյշնլ» կազմակերպությունների Հայաստանյան մասնաճյուղերի կողմից: Ծրագրի նպատակն է գյուղական համայնքներում խթանել զբաղվածությունը՝ տնտեսական զարգացման խոչընդոտները վերացնելու ճանապարհով: Ծրագիրն աջակցություն է տրամադրում գյուղատնտեսության երեք հիմնական ոլորտներում՝ կաթի վերամշակում, մրգերի վերամշակում և գյուղական զբոսաշրջություն: Լոռու մարզում 2016թ-ին ծրագիրը գործունեություն է ծավալել Ծնող, Մեծ Այրում, Եղեգնուտ, Շամուտ և Ճոճկան համայնքներում: Ծրագրերի իրականացման բյուջեն, ներառելով համայնքների, շահառուների և կոոպերատիվների համաֆինանսավորումը (մինչև 6-12%), կազմել է 161.6մլն.դրամ:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» Հայաստան ՄԲԿ-ի և Լոռու մարզապետարանի միջև 2016թ.-ին կնքվել է հուշագիր մարզում ծրագրեր իրականացնելու նպատակով: Կազմակերպության կողմից Լոռու մարզում 181.7մլն. դրամի ընդհանուր արժողությամբ ծրագրեր են իրականացվել սոցիալական, տնտեսական, կրթության, առողջապահության, երեխաների պաշտպանության, զբոսաշրջության և երիտասարդների ձեռներեցության զարգացման ոլորտներում (Ալավերդու տարածաշրջան՝ 88.4մլն. դրամ, Ստեփանավանի տարածաշրջան՝ 181.7մլն. ՀՀ դրամ):

Հսկայական աշխատանքներ են տարվել ջրամատակարարման համակարգերի բարելավման ուղղությամբ: **Ասիական զարգացման բանկի** եւ Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի վարկային ծրագրերի միջոցներով «Հայջրմուկոյուղի» ՓԲԸ-ի սպասարկման տարածքում գտնվող մի շարք համայնքներում խմելու ջրի մատակարարման եւ ջրահեռացման համակարգերի բարելավման համար: Ջրամատակարարման որակի բարձրացմանը միտված հաջորդ խոշոր ծրագիրը իրականացվում է Հայ-Գերմանական համագործակցության շրջանակներում: «Լոռի-ջրմուկոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպասարկվող համայնքներում KFW գերմանական վարկային ծրագրի կողմից:

Արժանահիշատակ է Վանաձորում տեխնոլոգիական կենտրոնի (ՎՏԿ) հիմնման ծրագիրը: Այն մեկնարկել է 2013 թ-ին՝ **Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ** «Է. հասարակության եւ մրցունակության համար նորարարության» վարկային ծրագրի միջոցներով: Կապալառու «Ախուրյանի Կոպչին» և «Ագաթ-777» ՍՊԸ-ների կողմից կատարվել է տեխնոլոգիական կենտրոնի հիմնանորոգում 2155.1մլն դրամ պայմանագրային արժեքով: Աշխատանքները սկսվել են 2015թ-ի օգոստոսին և 2016թ. հուլիսի դրությամբ հիմնական աշխատանքներն ավարտվել են: Կենտրոնի պաշտոնական բացումն տեղի է ունեցել սեպտեմբերին:

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՐԶԴԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ

2016թ. հոկտեմբերին մի խումբ պաշտոնատար անձանց ուղեկցությամբ ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով Լոռու մարզ էր ժամանել ներկա գտնվելու Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնի բացման արարողությանը, որի հիմնման ծրագիրը իրականացվել է ՀՀ կառավարության կողմից՝ գլխավոր օպերատոր ճանաչված «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի միջոցով: Աշխատանքային այցի շրջանակներում ՀՀ Նախագահն այցելեց նաև Վանաձորի բժշկական կենտրոնի շինհրապարակ, որտեղ կառուցվում է նոր բժշկական համալիրը: Նա ներկա գտնվեց նաև Վանաձորում Ֆուտբոլի ակադեմիայի բացման արարողությանը՝ իրականացված համատեղ ներդրումային ծրագիր Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի և Ֆուտբոլի եվրոպական միության կողմից:

2016թ.-ին երկու անգամ Լոռու մարզ է այցելել ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանը: 1-ին աշխատանքային այցը եղել է մայիսին Տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանի և մի խումբ պաշտոնատար անձանց ուղեկցությամբ: Պատվիրակությունը այցելել է Դեբեդ համայնք ծանոթանալու «Սմարթ» նորարարական կենտրոնի կառուցման շինաշխատանքների ընթացքին, որի կառուցումն իրականացվում է Հայաստանի մանուկներ հիմնադրամի ֆինանսավորմամբ: Վարչապետը այնուհետև ուղևորվել է Թումանյան համայնք ծանաթոնալու համայնքի խոշորացման ծրագրի արդյունքներին: Նա եղավ նաև Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի արտադրամասերում, ծանոթացավ այն շահագործող «Վալլեքս» խմբի կողմից իրականացված ներդրումային ծրագրերի արդյունքներին:

Երկրորդ աշխատանքային այցը հուլիսի 13-ին էր Տարածքային կառավարման և զարգացման նախարար Դավիթ Լոքյանի, Էկոնոմիկայի նախարար Արծվիկ Մինասյանի, Գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի, Քաղաքաշինության նախարար Նարեկ Սարգսյանի և այլ պաշտոնատար անձինք ուղեկցությամբ: Պատվիրակությունը այցելել է Սպիտակի թոջնաբուժական ֆաբրիկա՝ ծանոթանալով դրա գործունեությունը և առաջիկա ներդրումային ծրագրերին, Վանաձորի տեխնոլոգիական կենտրոն, Վանաձորի նախկին

ճոպանուղու տարածք՝ ծանոթանալու դրա վերագործարկման հետ կապված ծրագրերին ու խնդիրներին, Վանաձորի հիվանդանոցային համալիր՝ ծանոթանալու շինարարական աշխատանքների ընթացքին, Վանաձորի «Ավտոգեն-Մ» մեքենաշինական գործարան՝ տեղեկացվելով դրա արտադրական գործընթացներին և առաջիկա ծրագրերին, այնուհետև Ստեփանավանի տարածաշրջանի 39,6 կիլոմետր երկարությամբ Ագարակ-Օձուն-Մ-6 ավտոճանապարհի հիմնանորոգված հատված, որի հիմնանորոգման նպատակով ներդրվել է 3.5 մլրդ դրամ ՀՀ պետբյուջեից և Համաշխարհային բանկից: Նա եղավ Ստեփանավանի պոլիկլինիկայում, ինչպես նաև Յաղդան և Գյուլագարակ համայնքներում:

Մայիսի 20-ին մարզ է այցելել ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը ծանոթանալու Սպիտակի տարածաշրջանի Սարամեջ համայնքի «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարում և մրցունակություն» ծրագրի շրջանակներում ձեռք բերված գյուղտեխնիկային և կատարված աշխատանքներին, Սպիտակի թոշնաբուժական ֆաբրիկայի գործունեությանը և Հայաստանի ազգային ագրարային համալսարանի Վանաձորի մասնաճյուղի պայմաններին: Այցի ընթացքում ամփոփվել են նախորդ տարվա աշխատանքները, անդրադառնալով է կատարվել ձեռքբերումներին, քննարկվել են թերացումների և բացթողումների պատճառները և նախանշվել հաջորդ տարվա անելիքները:

Հուլիսի 27-ին աշխատանքային այցով Լոռու մարզ ժամանած ՀՀ փոխարտգործնախարար Աշոտ Հովհաննիսյանը մարզպետ Արթուր Նալբանդյանի հետ մասնակցել է մարզպետարանի դահլիճում կազմակերպված հանդիպմանը մարզպետարանի ստորաբաժանումների, քաղաքային համայնքների ղեկավարներ և մարզի ակտիվ գործիչների մասնակցությամբ:

Նոյեմբերի 16-ին աշխատանքային այցով Լոռու մարզում էր եկել ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար Վահան Մարտիրոսյանը ծանոթանալու 2016թ-նի սեպտեմբերից մեկնարկված Եվրոպական ներդրումային ու Ասիական բանկերի ֆինանսավորմամբ և պետբյուջեի համաֆինանսավորմամբ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման Մ6 միջպետական ճանապարհի վերակառուցման աշխատանքների ընթացքին:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊԵՐ

Լրափոփություն

Լոռու մարզում գործում են 6 հեռուստաընկերություն, 1 ռադիոխմբագրություն/, տեղական լրատվական երեք կայք /Loriinfo.com, lorinews.info, armweeklynews.am/, 7 տպագիր պարբերական: Բացի տեղական լրատվամիջոցներից, մարզում լրագրական գործունեություն է ծավալում նաև հանրապետական զանգվածային լրատվամիջոցների 8 թղթակից:

Տպագիր լրատվամիջոցներ ունեն Վանաձորը (1 օրաթերթ, 1 շաբաթաթերթ, 4 պարբերաթերթ և 2 ամսագիր), Ալավերդին՝ 1 շաբաթաթերթ, Սպիտակը՝ 2 ամսաթերթ և Մարգահովիտ գյուղը՝ 1 պարբերաթերթ:

Հեռահաղորդակցություն

2016 թ. հոկտեմբերից մարզի տարածքում մեկնարկեց հեռուստահաղորդակցության թվային համակարգը՝ հանրապետական և օտարերկրյա թվով 9 հետևյալ հեռուստաընկերությունների հաղորդումներով.

«Հ1» հանրային, «Հ2», «Արմենիա», «Շողակաթ», «Շանթ» «Կենտրոն» «Երկիր մեդիա», «PTP Планета» և «Ֆորտունա» հեռուստաընկերություններ:

Թվային հեռարձակման շնորհիվ մեկընդմիջտ լուծվեց հատկապես գյուղական համայնքներում հեռուստահաղորդումների որակի ապահովման երբեմնի խնդիրը:

Բացի վերոնշյալներից, Վանաձորում գործում են հեռուստահաղորդումների մասնավոր 3 մալուխային ծառայություններ, որոնք առավել մեծ թվով ծրագրեր դիտելու հնարավորություն են ընձեռում:

Հեռուստաընկերություն ունի 4 համայնք՝ Վանաձոր՝ 4, մեկական հեռուստաընկերություն՝ Ալավերդի և Սպիտակ քաղաքները:

Տեղական ռադիոցանց ունի Վանաձոր քաղաքը:

Մարզային և հանրապետական զանգվածային լրատվամիջոցներով մշտապես լուսաբանվել են մարզպետարանի աշխատակազմի գործունեությանը վերաբերող իրադարձությունները, մարզխորհրդի նիստերը, հանրային հնչեղության բանակցությունները, խորհրդակցությունները: Իսկ այնպիսի հարցերի մասին, որոնք իրենց բնույթով ռազմավարական, սոցիալ-տնտեսական կարևոր նշանակություն են ունեցել, մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարների և գլխավոր մասնագետների հետ կազմակերպվել են հեռուստահարցազրույցներ, «Կլոր սեղան»-ներ, ասուլիսներ և այլն:

2016թ.-ի ընթացքում տեղական հեռուստահաղորդումներով և մարզային թերթում բավարար չափով լուսաբանվել են մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը, բոլոր մեծ թե փոքր իրադարձային միջոցառումները, իսկ մարզխորհրդի նիստերը բաժնի կողմից ընդարձակ լրատվությամբ լուսաբանվել են «Լոռու մարզ» թերթում և մարզպետարանի պաշտոնական կայքէջում:

Մարզի բոլոր ԶԼՄ-ներին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն Լոռու մարզպետարանի և նրա կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության, ծրագրերի, կազմակերպվող միջոցառումների մասին: Հանրապետության բարձրաստիճան պաշտոնյաների մարզային աշխատանքային այցելությունների ժամանակ ԶԼՄ-ների ներկայացուցիչներին տրամադրվել են մամլո հաղորդագրություններ, սահմանված կարգով կատարվել լրագրողների հավատարմագրում:

Հաշվետու տարվա ընթացքում օպերատիվորեն սպասարկվել է նաև Լոռու մարզպետարանի պաշտոնական կայքէջի «Մամլո հաղորդագրություն» բաժինը, ուր զետեղվել են հաղորդագրություններ մարզին առնչվող հանրային կարևորության իրադարձությունների, դեպքերի մասին:

Բաժինը հետևողական է եղել հանրապետական և տեղական լրատվամիջոցներում Լոռու մարզին վերաբերող հարյուրից ավելի կարևորագույն հրապարակումների նկատմամբ: Քննադատական բնույթի հրապարակումների կրկնօրինակները տրամադրվել են մարզպետին, մարզպետարանի համապատասխան ստորաբաժանումների պետերին համապատասխան հետևություն անելու, հարկ եղած դեպքում արծագանքելու համար:

Լոռու մարզպետարանի գործունեության հանրային իրազեկման գլխավոր տեղեկատվական բազան շարունակում է մնալ տարածքային կառավարման միասնական համակարգում գործող մարզպետարանի www.http://ori.mtad.am պաշտոնական կայքը, որի «Տեղեկատվական հարթակ» բաժնի «Նորություններ» էջի սպասարկումը համարվում է բաժնի կարևորագույն գործառնություններից մեկը: Այստեղ զետեղվում է Լոռու մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեությունը լուսաբանող տեսանյութերով մշտապես թարմացվող ամենօրյա տեղեկատվություն: Այդ էջում են լուսաբանվել նաև ՀՀ պաշտոնատար անձանց, արտերկրի պատմիրակությունների այցելությունները, մարզային հիշարժան դեպքերն ու իրադարձությունները:

Բաժնի տեղեկատվական գործառնությունները 2016թ.-ին հարստացան մի քանի կարևոր նորամուծություններով.

• Գործարկվեց «Լոռու մարզպետարան» ֆեյսբուքյան էջը, որի բաժանորդների թիվը ներկա պահին հասնում է 3500-ի և գնալով ավելանում է, իսկ ՀՀ կառավարության հանձնարարությամբ ստեղծվեց յուրօրյան էջ, ուր օպերատիվ կարգով տեղ են գտնում մարզպետարանի գործունեությանն առնչվող տեսանյութեր:

• Նախորդ տարիներին մարզային հեռուստաընկերություններով հեռարձակվող «Մարզպետարանի ժամ» ամենշաբաթյա հաղորդաշարը փոխարինվեց մարզային «Ֆորտունա» հեռուստաընկերությամբ թողարկվող «Լոռու մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ներկայացնում է» ամենօրյա, առավել օպերատիվ հավելվածով:

• Բաժինը ստանձնեց «Տեղեկատվության ազատության մասին» օրենքի շրջանակներում զանգվածային լրատվամիջոցներից, հասարակական կազմակերպություններից ու քաղաքացիներից մարզպետարանին ուղղված հարցումներին ժամանակին և պատշաճ պատասխանելու կանոնակարգման պարտականությունը: 2016թ. ստացվել է մարզպետին և կառուցվածքային ստորաբաժանումներին ուղղված 28 գրավոր և շուրջ 70 բանավոր հարցում, որոնց տրվել է հիմնավոր պատասխան՝ օրենքով սահմանված ժամկետների մեջ:

• Բաժնի նախաձեռնությամբ «Ֆորտունա» մարզային հեռուստաընկերությամբ մեկնարկեց մարզպետարանի կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների լուսաբանումը/թողարկվել է 9 հաղորդում/:

Աշխատանք Հասարակական կազմակերպությունների հետ

Մարզում գրանցում ունեն 50-ից ավելի հասարակական կազմակերպություններ, որոնցից ակտիվորեն գործում են շուրջ 30-ը: Դրանցից շատերը ակտիվ համագործակցում են մարզպետարանի աշխատակազմի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի, մյուս ստորաբաժանումների հետ:

Մարզպետարանի հետ առավել ակտիվ փոխհամագործակցում են «Առավոտ», «Խաչվող ուղիներ», հունական «Էլպիդա», «Օրիոս» բնապահպանական, «Օրրան», «Հայկական Կարիտաս», կազմակերպությունները, «Հայկական Կարմիր Խաչի Լոռու մարզային կազմակերպությունը», «Թոփչք», «Համալսարանական կրթությամբ կանայք», «Լիարժեք կյանք», «Զանգակ», «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ», «Մանկական կենտրոն» և այլ ՀԿ-ներ:

ՀԿ ներկայացուցիչները մշտապես հրավիրվում են մարզպետարանում տեղի ունեցող կամ մարզպետարանի կողմից կազմակերպվող միջոցառումներին, բաժինը մշտապես օգնել ու համագործակցել է «Հայաստանի երիտասարդ կանանց ասոցիացիա» և իրավական հարցերի գծով ՀԿ-ներին՝ մարզում նրանց կողմից կազմակերպվող միջոցառումների ժամանակ:

Ազգային փոքրամասնությունները բաժնի գործառնություններում

Լոռու մարզի ներկայիս տարածքը խորհրդային տարիներին ազգային փոքրամասնություններով ամենաբնակեցվածներից էր: Սակայն վերջին մեկուկես-երկու տասնամյակներում տարածաշրջանում սկիզբ առած էթնիկական տեղաշարժերի հետևանքով արտագաղթեցին նաև մեծ թվով այլազգի բնակիչներ:

2016թ. հունվարի տվյալներով Լոռու մարզում բնակվում է 3107 ռուս, 875 հույն, 653 եզդի, 27 քուրդ, 8 ասորի, 349 այլ ազգերի ներկայացուցիչներ: Հայ ազգաբնակչության հետ նրանք ապրում են իրավահավասարության պայմաններում և բոլոր պայմաններն ունեն ազգային մշակույթի ու կրթության պահպանման համար: Դրանց են նպատակաուղղված ազգային հասարակական ու մշակութային կազմակերպությունները:

Մարզպետարանը մարզում բնակվող ազգային փոքրամասնությունների հիմնախնդիրներին իրազեկվում, հարկ եղած դեպքում համակողմանի աջակցություն է ցուցաբերում նրանց հասարակական կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: Մարզում գործում է այդպիսի 5 կազմակերպություն՝ հունական սփյուռքի ազգապահպանական «Էլպիդա», «Պոնտոս» և «Ալմի», ռուսազգի փոքրամասնության սոցիալական, մշակութային, կրթական հիմնախնդիրներով զբաղվող «Օբչեստվո Ռոսիի», ազգային մշակույթի և ազգամիջյան կապերի զարգացման հարցերով զբաղվող «Ուկրաինա»: Նրանց ներկայացուցիչները մշտապես հրավիրվում են մարզխորհրդի նիստերին, պետական,

ազգային տոների հանդիսություններին, համահամայնքային և մարզային միջոցառումներին: Տոնահանդեսներում կատարումներով հանդես է գալիս ուկրաինացիների երգչախումբը:

2016թ. նույնպես մարզի զանգվածային լրատվամիջոցները բազմիցս լուսաբանել են ազգային փոքրամասնությունների առօրյան:

Վերոնշյալ հասարակական կազմակերպությունները միջոցառումների, էքսկուրսիաների կազմակերպման ժամանակ, որպես կանոն հովանավորվում են Լոռու մարզպետի կողմից:

Նկատենք, որ ազգային փոքրամասնությունների ՀԿ-ները, դրանց ներկայացուցիչները չեզոք դիրքորոշում են որդեգրել հատկապես քաղաքական ոլորտում, գրեթե չեն մասնակցում քաղաքական տարբեր հոսանքների կողմից երբևէ կազմակերպվող միջոցառումներին, մասնավոր՝ բողոքի ակցիաներին:

Ազգային փոքրամասնությունների կողմից իշխանությունների նկատմամբ էական դժգոհություն չի եղել, մյուս ազգությունների ներկայացուցիչների հետ հարաբերություններում տիրում է փոխադարձ հարգանքի և վստահության մթնոլորտ:

Աշխատանք կրոնական կազմակերպությունների հետ

2016թ. մարզում գործունեություն են ծավալել Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու Գուգարաց թեմը, Հայ կաթողիկե եկեղեցու Տաշիրի թեմը, Հայ Ավետարանական եկեղեցու Լոռու թեմը, Վանաձորի Ավետարանական հավատքի, մորմոնների(Հիսուս Քրիստոսի վերջին օրերի սրբեր), Յոթերորդ օրվա ադվենտիստների եկեղեցիները, Եհովայի վկաների հետևորդները:

Մարզպետարանի առնչությունները՝ գործող կրոնական կազմակերպությունների ղեկավարների և ներկայացուցիչների հետ, եղել են պաշտոնական գործառույթներից բխող հանգամանքներով:

Հայ Առաքելական եկեղեցու Գուգարաց թեմի առաջնորդ Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանի հետ հանդիպումներում քննարկվել են.

- Թեմին պատկանող «Ծիծեռնակ» ճամբարում արցախցի և սիրիահայ երեխաների ամառային հանգստի կազմակերպման

- «Ձեռք մեկնիր եղբորդ» կարգախոսով բարեգործական ծրագրի գործունեության

- Մարզպետարանի նախաձեռնած «Լոռին-Արցախին» ակցիայի շրջանակներում ապրիլյան մարտական գործողությունների մասնակիցներին ֆինանսական միջոցներով, սննդով, հագուստով, բուժական և այլ անհրաժեշտ պարագաներով օգնությունների հավաքագրման-առաքման գործընթացի համատեղ անցկացման ակցիայի իրականացման և այլ հարցեր:

Տարվա ընթացքում Լոռու մարզի զանգվածային լրատվամիջոցները՝ անդրադարձել են ազգային փոքրամասնությունների առօրյայի ու խնդիրների լուսաբանմանը, կրոնական կազմակերպությունների գործունեությանը:

Կրոնական կազմակերպությունների առաջնորդները, ներկայացուցիչները որևէ դժգոհություն չունեն մարզպետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների պատասխանատվություններից:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Լոռու մարզային փրկարարական վարչությունը ամբողջությամբ և ժամանակին է կատարել 2016 թվականի ընթացքում «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության համակարգերի նախապատրաստման 2017 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ով նախատեսված միջոցառումները, վերադասի կողմից արձակված հրամանները, հրահանգները և հանձնարարականները, ինչպես նաև լրացուցիչ պահանջվող միջոցառումները:

Մշակվել և սահմանված կարգով մարզպետի հաստատմանն է ներկայացվել Լոռու մարզի տարածքում 2016թ. ընթացքում հնարավոր ջրհեղեղների հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման մասին, որոշման նախագիծը հավելվածների հետ միասին, որը հաստատվել է 17 փետրվարի 2016թ. թիվ 51-Ա որոշմամբ:

ՀՀ Լոռու մարզպետի 16.12.2016թ. «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի տարածքում 2016-2017 թվականների ձմեռային ժամանակահատվածում հնարավոր առատ ձյան, ուժեղ ձնաքթի, ձնահյուսի և մերկասառույցի առաջացման, դրանց հետեվանքով տրանսպորտային միջոցների արգելափակման և (կամ) ճանապարհատրանսպորտային պատահարների ժամանակ անհրաժեշտ միջոցառումների կազմակերպման մասին» թիվ 491-Ա որոշմամբ հաստատվել են առատ ձյան ժամանակ մարզպետարանի ստորաբաժանումների, կազմակերպությունների և համայնքների ղեկավարների անհրաժեշտ միջոցառումները:

2016 թվականի ընթացքում

Լոռու մարզային փրկարարական վարչության կողմից սպասարկվել են արտակարգ իրավիճակների, դեպքերի, պատահարների առաջացման վերաբերյալ 842 ահազանգ, որոնցից՝ 357-ը – տեխնածին, 81-ը – տարերային, 404-ը – սոցիալ - կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Արտակարգ դեպքերի ու պատահարների հետևանքով զոհվել են 41, վիրավորվել 498 մարդ: Նյութական վնասի չափը կազմել է 315.265.576 դրամ:

2015 թ-ի ընթացքում ԼՄՓ վարչություն հաղորդագրություններ են ստացվել մարզում գրանցված 696 արտակարգ դեպքերի և պատահարների վերաբերյալ, որոնցից՝ 378-ը - տեխնածին, 57-ը - տարերային և 261-ը - սոցիալ-կենցաղային և այլ բնույթի դեպքեր:

Զոհվել են 49, վիրավորվել 386 մարդ: Նյութական վնասը կազմել է 3.100.400.762 դրամ:

2015 թ-ի համեմատությամբ ընդհանուր դեպքերը աճել են 146-ով, ընդ որում՝ 21-ով նվազել են տեխնածին, աճել են 24-ով տարերային բնույթի դեպքերը, 143-ով սոցիալ-կենցաղային բնույթի դեպքերը: Զոհվածների թիվը նվազել է 8-ով, վիրավորներինը աճել է 112-ով: 2015 թ-ի նույն ժամանակահատվածի համեմատությամբ 2.785.135.186 դրամով նվազել է արտակարգ դեպքերի հետևանքով առաջացած նյութական վնասի չափը:

Դեպքերի արձագանքման և հետևանքների վերացման նպատակով ՀՀ ԱԻՆ ՓԾ Լոռու մարզային փրկարարական վարչության ստորաբաժանումների կողմից իրականացվել է՝ 1616 ելք (2015թ.՝ 1757), այդ թվում՝ հրդեհների - 370 (2015թ.՝ 311), վթարների և պատահարների - 124 (2015թ.՝ 177), կեղծ կանչի 15 (2015թ.՝ 23), կենցաղային օգնության - 264 (2015թ.՝ 195), այլ մեկնումներ - 843 (2015թ.՝ 1051):

Հաշվետու ժամանակաշրջանում մարզի բնակչության պաշտպանության համակարգի օպերատիվ նախապատրաստման ուղղությամբ պլանավորվել և անց են կացվել՝

❖ Հրամանատարաշտաբային ուսումնավարժություն

- ✓ Հունիսի 23-ին Ալավերդի քաղաքում «Թումանյանի տարածաշրջանի խոշոր անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպումը» թեմայով:

❖ Շտաբային ուսումնավարժություններ

- ✓ ապրիլի 11-22-ը «Գյուղատնտեսական կենդանիների վարակիչ հիվանդությունների օջախի վերացում» թեմայով Լեռնապատ, Բազում, Հալավար, Լեռնանցք, Գոգարան, Լեռնահովիտ, Սարամեջ, Լերմոնտովո, Մարգահովիտ և Ֆիոլետովո համայնքների կողմից,
- ✓ մայիսի 6-20-ը «Ջրհեղեղների, հեղեղումների և սելավների դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմայով Տաշիր, Միխայլովկա, Պերրովկա, Նորաշեն, Սարչապետ, Արծնի, Ապավեն, Ձյունաշող, Մեծավան և Ձորամուր համայնքների կողմից,
- ✓ օգոստոսի 10-23-ը «Սուր վարակիչ հիվանդությունների օջախի վերացման կազմակերպում» թեմայով Արջուր, Բովաձոր, Այգեհատ, Արևածագ, Հագվի, Ծաթեր, Կարմիր Աղեկ, Ուրասար և Մղարթ համայնքներում,

- ✓ հոկտեմբերի 20-ին Վանաձոր քաղաքում «Սուր վարակիչ հիվանդությունների օջախի վերացման կազմակերպում» թեմայով,
- ✓ Մարզի թվով 72 համայնքների կողմից անց են կացվել շտաբային ուսումնավարժություններ՝ «Սելավների առաջացման դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում», «Խաղաղից ռազմական դրության անցնելու դեպքում ՔՊ միջոցառումների կազմակերպումը» և «Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության կազմակերպում և հետևանքների վերացում» թեմաներով:
- ❖ **ՄՓՎ փրկարարական ծառայողների հետ անցկացված շտաբային ուսումնավարժություններ**
 - ✓ մարտի 21-ին՝ «Խոշոր անտառային հրդեհների հրդեհաշիջման կազմակերպում» թեմայով,
 - ✓ սեպտեմբերի 26-ին՝ «Սուր վարակիչ հիվանդությունների օջախի վերացման կազմակերպում» թեմայով:
- ❖ **Հատուկ տակտիկական ուսումնավարժություններ.**
 - ✓ ՔՊ միջազգային օրվա կապակցությամբ վարչության անձնակազմի մասնակցությամբ անց են կացվել հատուկ տակտիկական ուսումնավարժություններ՝ մարտի 1-ից 3-ը Վանաձորի թիվ 1, Արմանիսի, Գուգարքի հիմնական և Մեծավանի թիվ 1 միջնակարգ դպրոցներում «Հակառակորդի օդուժի հարձակման դեպքում պատսպարման միջոցառումների կազմակերպումը» թեմայով, իսկ Կաթնաջուրի, Օծունի թիվ 2 միջնակարգ և Վանաձորի թիվ 3 հիմնական դպրոցներում «Հակառակորդի հարձակման սպառնալիքի դեպքում տարահանման կազմակերպումը» թեմայով,
 - ✓ ԱԻ աշխատակցի օրվա կապակցությամբ սեպտեմբերի 7-ից 9-ը վարչության անձնակազմի մասնակցությամբ անց են կացվել հատուկ տակտիկական ուսումնավարժություններ՝ Վանաձորի թիվ 22 հիմնական և Դարպասի միջնակարգ դպրոցներում՝ «Հրդեհի առաջացման դեպքում հրդեհաշիջման աշխատանքների կազմակերպումը» թեմայով, Սպիտակ թիվ 5 և Տաշիրի թիվ 2 հիմնական դպրոցներում՝ «Հրդեհի դեպքում տարահանման կազմակերպումն ու իրականացումը» թեմայով, իսկ Ագարակի, Ալավերդու թիվ 7 և Փամբակի միջնակարգ դպրոցներում՝ «Հրդեհի հետևանքով տուժածներին առաջին բուժօգնության ցուցաբերումը» թեմայով: Սեպտեմբերի 12-ին և 13-ին Վանաձորի թիվ 10 ավագ, Ախթալայի թիվ 1 միջնակարգ, Գարգառի միջնակարգ, Մեղովկայի միջնակարգ, Վանաձորի թիվ 5 ավագ, Դեբեդի միջնակարգ և Շիրակամուտի թիվ 1 միջնակարգ դպրոցներում՝ «ՀՀ ԱԻ նախարարության գործունեությունը և հիմնական խնդիրները» թեմայով անց են կացվել դասախոսություններ,
 - ✓ Հուլիսի 29-ին Վանաձոր քաղաքում անց է կացվել ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն «ՃՏՊ-ի հետևանքով միջին ճնշման գազատարում առաջացած վթարի հետևանքների վերացում» թեմայով,
 - ✓ Նոյեմբերի 15-ին «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից՝ «Հիվանդների պաշտպանության միջոցառումների կազմակերպումը հրդեհի դեպքում» թեմայով,
 - ✓ Նոյեմբերի 16-ին «ՀԷՑ» ՓԲԸ Դեբեդ մասնաճյուղի Ալավերդու էլ. ցանցի կողմից՝ «Էներգետիկ համակարգում վթարի հետևանքի վերացում» թեմայով,
 - ✓ Նոյեմբերի 16-ին «Լոռի-ջրմուկյոյոյի» ՓԲԸ-ի կողմից՝ «Ջրամատակարարման ցանցում վթարի դեպքում հետախուզության և վթարավերականգնողական աշխատանքների իրականացում» թեմայով,
 - ✓ Նոյեմբերի 16-ին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Լոռի ԳԳՄ-ի Գուգարքի տարածքային տեղամասի կողմից՝ «Միջին ճնշման գազատարում առաջացած վթարի հետևանքների վերացում» թեմայով:

❖ **Օբյեկտային վարժանք.**

Նոյեմբերի 9-ին «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից՝ «Երկրաշարժի հետևանքով մասնակի փլուզված, «Վանաձորի բժշկական կենտրոն»-ում որոնողափրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների իրականացումը» թեմայով,

Նոյեմբերի 10-ին «Վանաձորի ինֆեկցիոն հիվանդանոց» ՊՓԲԸ-ի կողմից՝ «Սուր վարակիչ հիվանդությունների առաջացման դեպքում անհետաձգելի միջոցառումների կազմակերպումը» թեմայով,

Նոյեմբերի 11-ին «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից՝ «Հիվանդների տարահանման միջոցառումների կազմակերպումը հրդեհի դեպքում» թեմայով:

ՀՀ կառավարության 2015թ. հունվարի 22-ի «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության ոլորտներում ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների պատրաստման և տվյալ ոլորտների հիմնահարցերով բնակչության ուսուցման կարգն ու ծրագիրը սահմանելու և ՀՀ կառավարության 2003թ. հունվարի 30-ի №34-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» № 46-Ն որոշման համաձայն մշակված և ՀՀ Լոռու մարզպետի կողմից 13.01.2016թ-ին հաստատված պլանի՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Ճգնաժամային կառավարման պետական ակադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունում 2016թ. ուսումնական տարում ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի, մարզի համայնքների և կազմակերպությունների ղեկավար աշխատողների և մասնագետների պատրաստման դասընթացներին, 2016թ-ի ինն ամսվա ընթացքում ուսուցման ծրագրով նախատեսված 45 ուսուցանվողներից փաստացի ուսուցում են անցել 39 մասնակիցներ:

Կապի և ազդարարման համակարգ

Մարզում չկա կենտրոնացված ազդարարման համակարգ: Բնակչության ազդարարման համար պահանջվող 217 էլ. շալկներից առկա են 57-ը, որոնցից անսարք են 16-ը: 107 համայնքներից ազդարարում հնարավոր է իրականացվել 24 համայնքում:

Մեծավանի և Գետիկի ջրամբարների պատվարների փլուզման դեպքում հնարավոր ջրածածկման գոտում գտնվող թվով 6 համայնքների բնակչությանն ազդարարելու նպատակով, ՀՀ ԱԻՆ ՓԾ-ի կողմից 2009թ. մարզում տեղադրվել է վաղ ազդարարման համակարգ, որի ղեկավարումն պետք է իրականացվեր Վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնից: Համակարգում ընդգրկված են 19 էլեկտրաշալկներ՝ Տաշիր-7, Մեծավան-4, Միխայլովկա-2, Շիրակամուտ-3, Սարահարթ-2, Գեղասար-1: Ալավերդի, Ախթալա և Տավուշի մարզի Այրում համայնքներում, Դեբեդ գետի ավազանի հնարավոր ջրածածկման գոտում գտնվող տեղամասերում, Գերմանական GTZ ծրագրով 2010թ-ին տեղադրվեցին ևս 7 շալկներ և միացվեցին նույն համակարգին: (Ալավերդի 5, Ախթալա 1, Այրում 1), սակայն համակարգը ներկա պահին չի գործում:

ԶՈՐԱԿՈՋ ԵՎ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ


Հաշվետու ժամանակաշրջանում մարզում զորակոչը կազմակերպելու և անցկացնելու նպատակով համակարգվել է մարզային ուստիկանության, դատախազության, տարածաշրջանային զինվորական կոմիսարիատների, մարզի տեղական ինքնակառավարման մարմինների և հիմնարկ-ձեռնարկությունների գործունեությունը, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով զորակոչային տարիքի և 16 տարեկանը լրացած պատանիների հաշվառման, կցագրման, զորակոչից խուսափող զինակոչիկների հայտնաբերման և նրանց զորակոչելու ուղղությամբ:

2016թ. զորակոչի պետական առաջադրանքը կատարվել է 100.0%-ով (2016թ. ամառային զորակոչը 106.7%, 2016թ. ձմեռային՝ 93.7%):

Համակարգվել է այլընտրանքային աշխատանքային ծառայություն անցնող քաղաքացիների հետ տարվող աշխատանքները:

Մարզի տարածքում տեղակայված զինվորական ստորաբաժանումներին ցուցաբերվել է տարաբնույթ օժանդակություն: Տարածաշրջանային զինկոմիսարիատներին աջակցություն է ցույց տրվել վարժական հավաքների կազմակերպման աշխատանքում: Մարզպետարանի կողմից իրականացրած կազմակերպչական միջոցառումների շնորհիվ վերոնշյալ հավաքները կատարվել են բարձր մակարդակով և ժամանակին:

Զորակոչ




ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Լոռու մարզի ոստիկանության վարչության և ենթակա բաժինների կողմից 2016թ. ընթացքում գրանցվել է **1305** հանցագործություն, որը նախորդ տարվա համեմատ աճել է 154-ով կամ 13.4%-ով: Բացահայտումը կազմել է **90.3%**, կամ 1.3%-ով ավել քան 2015թ.-ին:

Կատարված հանցագործություններն ըստ հիմնական տեսակների՝


Տնտեսական հանցագործություն - 24 հանցադեպ, 2015թ. համեմատ աճել է 5-ով կամ 26.3 %-ով
Այլ ծառայությունների գծով - 1281 հանցադեպ, 2015թ. համեմատ աճել է 149-ով կամ 13.1%-ով:

Հանցագործությունների քանակի փոփոխման դինամիկան



	2006թ.	2007թ.	2008թ.	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.
Քրեական հանցագործություններ	590	519	587	720	715	669	584				
Տնտեսական հանցագործություններ	29	23	26	41	44	41	31	32	26	19	24
Այլ ծառայությունների գծով	310	196	189	561	569	474	554	1195	1145	1132	1281
Ընդամենը	929	738	802	1322	1328	1184	1169	1227	1171	1151	1305

Հանցագործությունների բացահայտումը (%)



2016թ. նախորդ տարվա համեմատ փոփոխվել է հետևյալ հանցատեսակների քանակը
 Սպանություններ 10 հանցադեպ՝ աճել է 8 դեպքով կամ 400.0%-ով
 Անձնական գույքի հափշտակում 349 հանցադեպ՝ աճել է 8-ով կամ 2.3%-ով
 Հասարակական վայրերում կատ. հանցագործութ. 3 հանցադեպ՝ աճել է 2-ով դեպքով կամ 200.0%-ով
 Անչափահասների կողմից կատ. հանցագործութ. 26 հանցադեպ՝ նվազել է 18-ով կամ 40.9%-ով:

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԱԴՐԵՐԻ ՀԵՏ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզպետարանում կա 150 հաստիք, որից 133 քաղաքացիական ծառայողների հաստիքներ են (27-ը առանձնացված ստորաբաժանումներում), որից թափուր է 7-ը: 3 պաշտոններ ժամանակավոր (ֆիզ.արձակուրդ) թափուր են:

2016 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմում, առաջատար խմբի պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարվել է 3 մրցույթ նախորդ տարվա 12 մրցույթի փոխարեն, որից մեկում հաղթող չի ճանաչվել, ընդհանուր դիմորդների քանակը՝ 10, իսկ քաղաքացիական ծառայության խորհրդի կողմից Լոռու մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնելու համար հայտարարվել է 1 մրցույթ իսկ գլխավոր խմբի պաշտոն զբաղեցնելու համար 3 մրցույթ: Քաղաքացիական ծառայության պաշտոնում նշանակվել են 6-ը որից՝ բարձրագույն պաշտոն՝ 1, գլխավոր պաշտոն-3 առաջատար պաշտոն – 2

Վերապատրաստվել են 36 քաղաքացիական ծառայողներ, ատեստավորվել են՝ 38-ը (15-ը գլխավոր, 11-ը առաջատար և կրտսեր12,):

2016 թվականի ընթացքում աշխատանքից ազատվել են 11 քաղծառայողներ, ընդունվել 5-ը: 1 քաղաքացիական ծառայող արտամրցույթային կարգով նշանակվել է նոր պաշտոնի: քաղաքացիական ծառայության մասին օրենքով սահմանված կարգով խրախուսանք կիրառվել է 1 աշխատակցի նկատմամբ, կարգապահական տույժի չի կիրառվել: 13 քաղծառայողների շնորհվել է դասային աստիճան, որից 9 քաղծառայողներին իրենց զբաղեցրած պաշտոնի համար նախատեսված դասային աստիճանից ավելի բարձր դասային աստիճան:

2016թ-ին նախապատրաստվել են՝

- ✓ Լոռու մարզպետի 142 որոշումների և 302 կարգադրությունների նախագծերը,
- ✓ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի 330 հրամանների նախագծեր,

- ✓ մրցույթով անցած 24 դպրոցի տնօրենների, 92 դպրոցի տնօրենների հետ որպես ժամանակավոր պաշտոնակատարների կնքվել է աշխատանքային պայմանագրեր, ՔԾԽ-ի 71 գրությունների պատասխանների նախագծեր,

- ✓ 4 քաղաքացիների դիմումների պատասխանների նախագծեր:

Ամփոփվել է աշխատակիցների կիսամյակային և տարեկան կատարողականների գնահատման արդյունքները (բոլոր աշխատակիցները ունեցել են կատարողականի 75%-ից բարձր ցուցանիշ):

ՄԱՐԶԴԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2016Թ. ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2016թ. ընթացքում մարզպետի կողմից

- ընդունվել է 554 որոշում,
- արձակվել է 313 կարգադրություն:

Մարզպետի որոշումները վերաբերում են հետևյալ հարցերին.

• ՏԻՄ	4	0.7%
• առողջապահություն և սոց. ապահովություն	55	9.9%
• կադրային հարցեր	251	45.3%
• կրթություն, մշակույթ և սպորտ	47	8.5%
• հողօգտագործում	9	1.6%
• ֆինանսական հարցեր	123	22.2%
• տրանսպորտ	1	0.2%
• ԱԻ և ՔՊ	15	2.7%
• զորակոչ	3	0.5%
• գաղտնի	7	1.3%
• վարչական հսկողություն	2	0.4%
• այլ	37	6.7 %

Մարզպետի կարգադրությունները վերաբերում են հետևյալ հարցերին.

• կադրային հարցեր	270	86.3%
• ֆինանսական հարցեր	7	2.2%
• առողջապահություն և սոց. ապահովություն	7	2.2%
• կրթություն	13	4.2%
• գյուղատնտեսություն և բնապահպանություն	3	1.0%
• մշակույթ և սպորտ	1	0.3%
• զորակոչի հետ կապված հարցեր, ՔՊ և ԱԻ	1	0.3%
• այլ	11	3.5%

Մշտապես իրականացվում է կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննություն, խմբագրման աշխատանքներ, համարակալում, գրանցում գրանցամատյաններում և էլեկտրոնային առաքում շահագրգիռ ստորաբաժանումներին: Մարզպետի որոշումների և կարգադրությունների պատճենները յուրաքանչյուր ամիս ներկայացվում է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն՝ ՀՀ օրենսդրությանը դրանց համապատասխանությունը ստուգելու նպատակով: ՀՀ օրենսդրության խախտումների հիմնավորմամբ հետ վերադարձված իրավական ակտեր չունենք:

Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից 2016թ. ընթացքում արձակվել է 342 հրաման՝ հիմնականում կադրային հարցերի վերաբերյալ:

2016թ. ընթացքում մարզպետի նախաձեռնությամբ կազմվել է վարչական վարույթի 1 գործ ներմարզային սպասարկման ժամկետը լրացած և թափուր երթուղիները փոխադրողներին հատկացնելու մրցույթի հաղթողներ ճանաչելու վերաբերյալ:

Հաշվետու ժամանակաշրջանում դատական հայցեր են ներկայացվել ընդդեմ ՀՀ Լոռու մարզի Սարատովկա (800.000 դրամ + 16.000 դրամ /պետտուրք/), Պետրովկա (480.000 դրամ + 9.600 դրամ /պետտուրք/), Արծնի (368.000 դրամ + 7.460 դրամ /պետտուրք/), Միխայելովկա (8.274.000 դրամ + 165.480 դրամ /հետաձգված պետտուրք/), Շնող (1.120.000 դրամ + 22.400 դրամ /պետտուրք/) և Լուսաղբյուր (4.672.000 դրամ) համայնքների ղեկավարների՝ գումարի բռնագանձման պահանջով /տրամադրված աշնանացան ցորենի և պարարտանյութի դիմաց հետ վերադարձման գումարները բռնագանձելու համար/: Լուսաղբյուրի գործը կարճված է: Մյուս հայցերը բավարարված են և գտնվում են հարկադիր կատարման փուլում:

Որպես հավելում նշեմ, որ ԴԱՀ-ի կողմից 27.12.2016թ. կատարողական վարույթ է վերսկսվել Այգեհատ համայնքի ղեկավար Ա.Շահվերդյանից 856.800 դրամ (816000 դրամ մայր գումար + 40800 դրամ կատարողական գործողությունների կատարման ծախս) բռնագանձելու գործով (գործ ԼԴ2/0053/02/13):

2016թ. ավարտվել է նաև Ճոճկան համայնքի բնակիչ Սամվել Գիգոյանի դեմ հարուցված գործի վարույթը, քանի որ նրանից հոգուտ ՀՀ պետբյուջեի 3.192.440 ՀՀ դրամ գումարի բռնագանձումն ամբողջությամբ կատարվել է:

«ՀՀ Լոռու մարզի Միխայելովկայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Գ.Ռաֆայելյանի դեմ Լոռու մարզպետարանը հայց է ներկայացրել հետադարձ պահանջի իրավունքով (2.126.350 ՀՀ դրամ) գումարի բռնագանձման պահանջի մասին: Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի կողմից գործի դատաքննությունը նշանակված է 08.02.2017թ.:

2016թ. վարչական հսկողություն իրականացնելու աշխատանքային ծրագրի համաձայն նախատեսված 37 համայնքներից Լոռու մարզի 33 համայնքներում իրականացվել է վարչական հսկողություն, որի արդյունքում կազմվել են ակտեր: Մնացած 4 համայնքները (Մարց, Աթան, Լորուտ, Շամուտ) համայնքների խոշորացման ծրագրի արդյունքում միավորվել են Թումանյան համայնքի կազմում և նրանց վարչական հսկողությունը Թումանյան քաղաքային համայնքի կազմում կիրակայնացվի 2017թ., ինչի համար առկա է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի համաձայնությունը՝ տրված 23.05.2016թ. թիվ 01/17.1/1575-16 հանձնարարականով: Կազմված ակտերը քննարկվել են փոխմարզպետների մոտ և հայտնաբերված թերությունների ու խախտումների վերացման նպատակով համայնքների ղեկավարներին տրվել են մեթոդական ցուցումներ: Հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների մասին պարբերաբար ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն է ներկայացվել ամփոփ տեղեկատվություն:

2017թ. ընթացքում նախատեսվում է իրավական և մասնագիտական հսկողություն իրականացնել մարզի 35 համայնքներում:

Հաշվետու ողջ ժամանակահատվածում պարբերաբար իրականացվել է շուրջ 170 քաղաքացիների ընդունելություն, անհրաժեշտության դեպքում՝ իրավական խորհրդատվություն:

Յուրաքանչյուր աշխատանքային տարվա ավարտից հետո արխիվացվում են մարզպետի և աշխատակազմի ղեկավարի կողմից ընդունված իրավական ակտերի թղթային տարբերակները և հանձնվում մարզպետարանի արխիվ՝ մշտական պահպանության:

Մշտապես մարզպետարանի համապատասխան ստորաբաժանմանը տրամադրվում է տեղեկատվություն մարզպետարանի կայքում տեղադրելու համար /մարզպետի որոշումներ և կարգադրություններ, համայնքների ավագանիների որոշումներ, վարչական հսկողության արդյունքում լրացված հարցաշարեր և կազմված արձանագրություններ, վճիռներ, այլ տեղեկատվություն/:

Բաժնի կողմից կատարվել է նաև մարզի համայնքներից մարզպետարան ներկայացված իրավական ակտերի՝ համայնքի ղեկավարի որոշումների, կարգադրությունների և ավագանիների որոշումների՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխանության ստուգում:

**2016թ. ՄԱՐԶԴԵՏԱՐԱՆ ՄՈՒՏՔ ԳՈՐԾԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ
ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

2016թ. ընթացքում Լոռու մարզպետարանում մուտք է արվել մոտ 18725 /2015թ.- 16920/ գործ (պաշտոնական և ոչ պաշտոնական գրություններ, հանձնարարականներ, դիմումներ, հարցումներ, բողոքներ և այլն), ընթացք տրված կամ առաքված գործերի քանակը կազմում է ավելի քան 6700 /2015թ.- 6600/:

Հաշվետու ժամանակաշրջանում Mulberri համակարգ է մուտքագրվել 4671 պաշտոնական գրություն/2015թ- 4320/, որից 1077 -ը՝ հսկողական գրություններ են/2015թ- 1290/, դրանց կատարման վերահսկողությունը իրականացվել է ապարատաձրագրային և էլեկտրոնային եղանակներով: Դրանցից 1031 հանձնարարականի /2015թ.-1205/ պատասխանվել է սահմանված կարգով և ժամկետներում, մնացած հանձնարարականների կատարումը ընթացքի մեջ է և վերահսկվում է մեր կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում առցանց համակարգով և առձեռն եղանակով մարզպետարան է մուտք եղել 3549 դիմում, բողոք, առաջարկություն, տեղեկատվական հարցում /2015թ.- 2600/, որոնցից 266 /2015թ.- 173/-ը ստացվել են Նախագահի աշխատակազմից, Ազգային ժողովից, ՀՀ Կառավարությունից, ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից: Դրանք բոլորը վերցվել են հսկողության, դիմումներին տրվել են համապատասխան ընթացք, ժամկետների ուշացումներ չեն արձանագրվել:

Քաղաքացիների ընդունելության կարգի պահանջների համաձայն, հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է ՀՀ Լոռու մարզպետի մոտ ընդունելության գրանցվողների հետ նախնական ընդունելություն /թվով մոտ 975 քաղաքացի /2015թ. - 753/ /, որոնց պարզաբանվել և մեթոդական ու իրավախորհրդատվական աջակցություն է ցուցաբերվել, բացատրվել է նրանց իրավունքները, ուղղորդվել ըստ դիմումի բովանդակության, տարբեր մարմիններ ու գերատեսչություններ: Նշված քաղաքացիներից թվով 361 / 2015թ.- 252 /-ը գրանցվել են մարզպետի մոտ ընդունելության, նրանց բարձրացրած հարցերին տրվել են համապատասխան պարզաբանումներ և ցուցաբերվել համապատասխան աջակցություններ և օժանդակություն:

2016թ-ի ընթացքում Լոռու մարզպետարան տարբեր եղանակներով / Mulberri համակարգ, առձեռն, էլեկտրոնային փոստ/ մարզային ենթակայության ձեռնարկություններից, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ստորաբաժանումներից, անհատ ձեռներեցներից, հասարակական և այլ կազմակերպություններից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմիններից մուտքագրվել է 10504 գրություն/2015թ.- 10000/, որոնց տրվել է համապատասխան ընթացք:

2016թ. ընթացքում իրականացվել է Լոռու մարզպետի մոտ կայացած թվով 31 /2015թ.- 28/ խորհրդակցությունների, ինչպես նաև Լոռու մարզի խորհրդի թվով 4 /2015թ.- 4/ նիստերի արձանագրում, հանձնարարականների առաքում ըստ հասցեատերերի, տրված հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԴԵՏ

Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ